# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**24 դեկտեմբերի 2010 թվականի N 18**

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ Ս. Տեր-Սիմոնյան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Մարկոսյան, Ա. Բախշյան, Ֆ. Բերիկյան, Ա. Ղուկասյան, Գ. Մալխասյան, Ճ. Քոչարյան, Տ. Պետրոսյան, Ա. Հակոբյան, Ա. Օսիկյան, Ա. Եսայան, Կ. Բեգլարյան, Ա. Թամազյան, Ա. Ղազարյան, Մ. Մարտիրոսյան, Բ. Սարգսյան, Ռ. Լևոնյան, Ա. Եղիազարյան

Հրավիրված էին՝

| | |
|---|---|
| Ա. Դարբինյան | «Հայաստան» համահայկական հիմնադրամ |
| Ա. Առաքելյան<br>Ա. Բաղդասարյան | Հայկական սեյսմոլոգիայի և Երկրի ֆիզիկայի ասոցիացիա |
| Վ. Սեդրակյան | «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Հ. Ստեփանյան | «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ |
| Տ. Քոչարյան | «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամ |
| Հ. Սարգսյան<br>Գ. Բոշյան<br>Մ. Մուրադյան | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ |
| Բ. Աղամալյան | «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Ճ. Դանիելյան | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ |
| Ն. Մուրադյան | «Փարոս» բարեգործական հիմնադրամ |
| Լ. Օհանյան | Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ |
| Մարի Լու Փափազյան<br>Ա. Նարիմանյան | «Սիմոնյան» կրթական հիմնադրամ |
| Ա. Տեր-Սիմոնյան | «Սի. Օ. Էյ. Էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամ |
| Ա. Պետրոսյան<br>Ա. Անտոնյան<br>Վ. Խառատյան | «Երազ» բարեգործական հիմնադրամ |
| Ա. Աբրահամյան | «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» |
| Հ. Բադալյան | ԱՊՀ հանրային խորհուրդ |



1. «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2011-2012 թվականներին իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին:

(Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ներկայացված որոշման նախագիծը հանել քննարկումից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստին կազմակերպության ներկայացուցչի բացակայության պատճառով: Հարցի քննարկմանը կրկին անդրադառնալ հանձնաժողովի առաջիկա նիստում:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի անասնաբուծության զարգացում» ծրագրի մասին:

(Ա. Դարբինյան, Ա. Թամազյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
2. Առաջարկել կազմակերպությանը խմբագրել ներկայացված ծրագիրը՝ նշելով կովերի քանակը, ինչպես նաև հետագայում Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ներկայացնել կովերի վիճակի վերաբերյալ տեղեկատվություն:

3. «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակեր-պության կողմից իրականացվող «Ամանորյա նվերներ հայ երեխաներին» ծրագրի մասին:

(Վ. Սեդրակյան, Ա. Թամազյան, Ա. Եսայան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
2. Առաջարկել կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել ծրագրով ներմուծվող ապրանքատեսակների վերաբերյալ պարզաբանում:

4. «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակեր-պության կողմից իրականացվող «Առողջություն երեխաներին» ծրագրի մասին:

(Վ. Սեդրակյան, Ա. Թամազյան, Ա. Եսայան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
2. Խմբագրել որոշման նախագծի 1-ին կետը՝ ճշտելով ներկայացված ծրագրի արժեքը:

5. Հայկական սեյսմոլոգիայի և Երկրի ֆիզիկայի ասոցիացիայի կողմից իրականացվող «Արծագանքում սեյսմիկ վտանգին Կովկասում» ծրագրի մասին:

(Ա. Առաքելյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

6. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի Գավառ և Լճափ համայնքների երեխաների համար «Առաջին օգնություն» դասընթացի անցկացում» ծրագրի մասին:

(Հ. Սարգսյան, Ա. Բախշյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

7. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գավառի տարածաշրջանում» ծրագրի մասին:

(Գ. Բոշյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

8. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայ առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի Գավառ համայնքի կիրակնօրյա դպրոցի մասնակի վերանորոգում» ծրագրի մասին:

(Հ. Սարգսյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

9. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանի հովանավորության» ծրագրի մասին:

(Մ. Մուրադյան, Ռ. Մարկոսյան, Ա. Բախշյան, Ա. Ղուկասյան, Գ. Մալխասյան, Ա. Օսիկյան, Ա. Թամազյան, Ա. Եսայան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
2. Առաջարկել կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել ծրագրում ընդգրկված համայնքների ցանկը, ինչպես նաև երեխայի ծնողի կամ խնամակալի և կազմակերպության միջև կնքված երկկողմանի համաձայնագրի օրինակելի ձևի մեջ ավելացնել կետ, որով կամրագրվի երրորդ անձի կողմից երեխայի նամակի ընթերցման մասով երեխայի ծնողի կամ խնամակալի համաձայնությունը, և համաձայնագրի օրինակելի ձևի լրամշակված տարբերակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:
3. Որոշումը ստորագրել վերոնշյալ համայնքների ցանկը և երկկողմանի համաձայնագրի օրինակելի ձևի լրամշակված տարբերակը կազմակերպության կողմից սույն կետի 2-րդ ենթակետում նշված պետական մարմիններին ներկայացնելուց հետո:

10. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանում» ծրագրի մասին:

(Գ. Բոշյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

11. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում» ծրագրի մասին:

(Գ. Բոշյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:



12. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինանյութի տրամադրում Արագածոտնի մարզի Եղիպատրուշ համայնքի մշակույթի տան տանիքը և Շողակն (Նորաշեն) համայնքի տարական դպրոցը վերանորոգելու համար» ծրագրի մասին:

(Գ. Բոշյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ներկայացված որոշման նախագիծը հանել քննարկումից՝ համաձայն կազմակերպության առաջարկության:

13. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում առողջապահական հաստատություններին» ծրագրի մասին:

(Գ. Բոշյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

14. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գյումրի քաղաքի և Հովունի ու Մարմարաշեն գյուղերի կարիքավոր բնակչությանը» ծրագրի մասին:

(Գ. Բոշյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

15. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում» ծրագրի մասին:

(Գ. Բոշյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

16. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Տավուշի տարածաշրջանում» ծրագրի մասին:

(Գ. Բոշյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

17. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ալավերդու տարածաշրջանում» ծրագրի մասին:

(Գ. Բոշյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

18. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ստեփանավանի տարածաշրջանում» ծրագրի մասին:

(Գ. Բոշյան, Ս. Տեր-Սիմոնյան)

---

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

19. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջաններում» ծրագրի մասին:

(Գ. Բոշյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

20. «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին:

(Տ. Քոչարյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
2. Առաջարկել կազմակերպությանը խմբագրել ներկայացված ծրագրի 5-րդ կետը՝ նշելով ծրագրի իրականացման հստակ վայրը և հասցեն:

21. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին:

(Շ. Դանիելյան, Ա. Ղուկասյան, Ա. Թամազյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
2. Առաջարկել կազմակերպությանը ուսման վարձի մասով հստակեցնել ծրագիրը և սույն ծրագրի ավարտից հետո Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ներկայացնել բժշկական օգնություն ստանալու նպատակով ծրագրով նախատեսված դրամական օգնություն ստացած շահառուների ցանկը:

22. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին ավտոմեքենայի նվիրաբերություն և բեռի ներմուծում» ծրագրի մասին:

(Բ. Ադամայան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

23. «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին:

(Մարի Լու Փափազյան, Ա. Բախշյան, Ա. Եսայան, Ա. Ղազարյան, Բ. Սարգսյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

## 24. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման ծրագրերի մասին

(Ա. Բարխուդարյան)

24.1 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

24.2 «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված շտապ օգնության ավտոմեքենաների ներմուծման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:



24.3 «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

24.4 «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 2):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

24.5 «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 3):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

24.6 «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 4):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

24.7 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

24.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

24.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-642-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետության տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

24.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-688-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («ԱՌՄ» բարեգործական հասարակական կազմակերպություն):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

## 25. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին

(Ա. Բարխուդարյան)

25.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 4-ի N Մ-339-Ա որոշմամբ հաս-

տատված ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

25.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի N Մ-90-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

25.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 3-ի N Մ-450-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

25.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի N Մ-029-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Արմենակ և Աննա Թադէոսյանների անվամբ բուժարան»):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

## 26. Այլ հարցեր

26.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 19-ի N Մ-236-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ կատարելու մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

26.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-620-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

26.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 31-ի N Մ-524-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

26.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-771-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:



## Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների կահավորում» ծրագրի մասին:
(Ա. Դարբինյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

2. «Սի. Օ. Էյ. Էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին:
(Ա. Տեր-Սիմոնյան, Ա. Բախշյան, Ա. Թամազյան, Ա. Եսայան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
2. Առաջարկել կազմակերպությանը խմբագրել ներկայացված ծրագրի 6-րդ կետը՝ նշելով, որ ծառայությունները մատուցվելու են անվճար, ինչպես նաև հետագայում ներկայացվող ծրագրերի իրականացման վայրի ընտրությունը կատարել՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության հետ:
3. Որոշման նախագծում ավելացնել կետ, որով նախատեսվի, որ 2011 թվականի դեկտեմբերին կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնի սույն ծրագրի 2012 թվականի բյուջեի մանրամասն բացվածքը:

3. «Երազ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Շաքարային դիաբետով հիվանդ երեխաներին դեղամիջոցների, բժշկական սարքերի ու պարագաների և բժշկական ու հոգեբանական օգնության կամ հետազոտությունների նպատակով ֆինանսական միջոցների տրամադրում» ծրագրի մասին:
(Ա. Անտոնյան, Ա. Բախշյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
2. Առաջարկել կազմակերպությանը խմբագրել ներկայացված ծրագրի 9-րդ կետը:

4. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի թիվ 1 մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցում» ծրագրի մասին:
(Բ. Աղամալյան, Ս. Տեր-Սիմոնյան)

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

## 5. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման ծրագրերի մասին

(Ա. Բարխուդարյան):

5.1 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.2 «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.3 «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.4 «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 2):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.5 «Հայաստանի բազմինթոնի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 20-ի N Մ-807-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.8 «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 22-ի N Մ-30-Ա որոշմամբ հաստատված ծրագրում լրացում կատարելու և 2007 թվականի օգոստոսի 10-ի NN Մ-489-Ա, Մ-490-Ա որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Փարոս» բարեգործական հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

5.10 «Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

## 6. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին

(Ա. Բարխուդարյան)

6.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-887-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Փրկություն» հաշմանդամ



երեխաների և երիտասարդների կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպություն):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

6.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2001 թվականի հոկտեմբերի 10-ի N Մ-328-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:

6.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N Մ-885-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Հայկական Կարմիր Խաչ ընկերություն):

1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը:
2. Որոշումը ստորագրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարծիքները ստանալուց հետո: Նշել որոշման ամսաթիվը ստորագրմանը ներկայացնելու օրվա ամսաթվով:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ- 955 -Ա
քաղ. Երևան

## «ՎԱՆԱՁՈՐԻ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-1/10184-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն 2010 թվականի նոյեմբերի նոյեմբերի 19-ի N 4428-10, Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N ՖԲ/ՄարտՄխ-1/5403-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 13-ի N ԱԱ/3-4/3066-10 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2010 թվականի նոյեմբերի 19-ի N 101/104.3/3605-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող 28190000 դրամ արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից կնքված (քաղ. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ՝ 06940684) ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ -ի «Դեբեդ» մասնաճյուղի հետ (քաղ. Վանաձոր, Բաթումի 8, ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի մարտի 19-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 1800000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՓԲԸ -ի Լոռու կենտրոնի հետ (քաղ. Վանաձոր, Տիգրան Մեծի 18, ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի մարտի 14-ին կնքված N 510100708 պայմանագրում

նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 620000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Սպարապետ» ՍՊԸ -ի հետ (քաղ. Վանաձոր, Տիգրան Մեծի 79, ՀՎՀՀ՝ 06915002) 2008 թվականի մարտի 14-ին կնքված N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը սննդամթերքների և տնտեսական ապրանքների ձեռքբերում՝ 14000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ -ի Լոռու ԳԳՄ-ի հետ (քաղ. Վանաձոր, Չուխաջյան 2/2ա, ՀՎՀՀ՝ 00046317) 2009 թվականի նոյեմբերի 9-ին կնքված N 0411780 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 4000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժո-ղով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարա-րություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի տնօրեն

Տ. Քոչարյանի կողմից ______

«07» դեկտեմբերի 2010թ

«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող
Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Վանաձորի տարեցների տան խնամքի տակ գտնվող միայնակ, սոցիալապես անապահով տարեցների խնամքի կազմակերպում, նրանց սոցիալական պահանջմունքների բավարարում, բժշկական, հոգեբանական օգնության ցուցաբերում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք սննդամթերքի, տնտեսական ապրանքների արժեքի, հեռախոսակապի, սպառած գազի և էլեկտրաէներգիայի գծով մատուցված ծառայությունների դիմաց ԱԱՀ-ից ազատում 01.01.2011թ.-31.12.2011թ. ընթացքում: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), ամերիկահայ բարերարներ՝ Գեվորգ և Սիրվարդ Գարամանուկներ, Շահան Արծրունի |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամ, հասցե՝ ք. Վանաձոր, Մայմեխի 8, հվհհ՝ 06940684 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մայմեխի 8: Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է՝ 28 190 000 ՀՀ դրամ:<br>Սնունդ և տնտեսական ապրանքներ՝ 14 500 000 դրամ<br>Դեղորայք՝ 100 000 դրամ<br>Կոմունալ և կապի ծախսեր՝ 6 420 000 դրամ<br>Շենքի շահագործման և պահպանման ծախսեր՝ 900 000 դրամ<br>Գրենական պիտույքներ՝ 130 000 դրամ<br>Ծերատունը սպասարկող տրանսպորտային միջոցների շահագործման և սպասարկման ծախսեր) 1 900 000 դրամ<br>Ծերատանը հաշվառված, սակայն իրենց կացարաններում բնակվող սոցիալապես անապահով ծերերի խնամքի կազմակերպում 240 000 դրամ<br>Կազմակերպական ծախսեր՝ 4 000 000 դրամ |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | «Վանաձորի տարեցների տանը» մշտապես բնակվող 55 սոցիալապես անապահով ծերեր, ցերեկային խնամքի տակ գտնվող 5 սոցիալապես անապահով ծերեր: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2011թ – 31.12.2011թ,   ծրագիրը շարունակական է: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Հիմնադրամի խնամքի տակ գտնվող սոցիալապես անապահով տարեցների շուրջօրյա խնամքի կազմակերպում, նրանց սոցիալական պահանջմունքների բավարարում, նպաստավոր պայմանների ստեղծում, բժշկական և հոգեբանական օգնության տրամադրում, այն է՝<br>1. Տարեցներին սննդի, հագուստի, անկողնային և անհրաժեշտ այլ պարագաների, ինչպես նաև մշտական կամ ժամանակավոր օթևանի տրամադրում<br>2.Բազմատեսակ հետաքրքիր և մշակութային միջոցառումների անցկացում տարեցների առօրյան հետաքրքիր դարձնելու համար<br>3.Հոգեբանական, իրավաբանական օգնության տրամադրում<br>4.Տարեցների առողջական վիճակի ամբողջական լաբորատոր հետազոտությունների կազմակերպում, առաջնային բժշկական օգնության տրամադրում, անհրաժեշտության դեպքում հոսպիտալացում<br>5.Տարեցների տանը հաշվառված տնային պայմաններում գտնվող խնամառուների բժշկական օգնության տրամադրում, կենցաղային սպասարկում, սոցիալ հոգեբանական և իրավաբանական օգնության տրամադրում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք՝<br>Օգտագործված գազի դիմաց ԱԱՀ-ից ազատում 4 000 000 դրամի չափով 01.01.2011թ.-31.12.2011 թվականի ընթացքում/պայմանագիր N 0411780, կնքված 09.11.2009թ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի( Լոռու ԳԳՄ, ք. Վանաձոր, Զուխաջյան 2/2ա, ՀՎՀՀ 00046317) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի,(ՀՀ, ք Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:<br>Սննդամթերքի և տնտեսական ապրանքների դիմաց ԱԱՀ-ից ազատում 14 000 000 դրամի չափով 01.01.2011թ.-31.12.2011 թվականի ընթացքում /պայմանագիր N 01, կնքված 01.11.2010թ. «Սպարապետ» ՍՊԸ-ի(ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 79, ՀՎՀՀ 06915002) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի, (ՀՀ, ք Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) |

| | | |
|---|---|---|
| | | միջև: Օգտագործած էլեկտրաէներգիայի դիմաց ԱԱՀ-ից ազատում 1 800 000 դրամի չափով 01.01.2011թ.-31.12.2011 թվականի ընթացքում/պայմանագիր N 410000413012200427 1, կնքված 19.03.2008թ. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի Դեբեդ մասնաճյուղի(ք. Վանաձոր, Բաթումի 8, ՀՎՀՀ 01520882) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի, (ՀՀ, ք Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև: Հեռախոսակապի դիմաց ԱԱՀ-ից ազատում 620 000 դրամի չափով 01.01.2011թ-31.12.2011 թվականի ընթացքում/պայմանագիր N 510100708, կնքված 14.03.2008թ. «Արմենտել» ՓԲԸ-ի Լոռու կենտրոնի(ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 18, ՀՎՀՀ 02500052) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի, (ՀՀ, ք Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 4 000 000 ՀՀ դրամ՝ ծրագրի ընդհանուր արժողության 14.2.%-ը: Ծրագրի սպասարկումը ներառում է ծրագրի ադմինիստրատիվ կազմի աշխատավարձը, պարտադիր սոցիալական վճարները և տարեկան աուդիտի անցկացման հետ կապված ծախսերը: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով, Լոռու մարզպետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է Ամերիկայի ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի և եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-954-Ա**
**քաղ. Երևան**

## «ՍԻՄՈՆՅԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 3-ի N 3/3.8-1/9774-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N 4919-10, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության 2010 թվականի նոյեմբերի 30-ի N 03/07.2/12393-10, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 6-ի N 01/17.5/6093-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N ԱԱ/3-4/2895-10 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672) իրականացվող՝ 2478111840 դրամ ընդհանուր արժողությամբ «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագիրը (կցվում է):

2. «Սիմոնյան» կրթական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված



ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Սիմոնյան կրթական հիմնադրամի
տնօրեն Մարի Լու Փափազյանի կողմից
«16» դեկտեմբերի 2010թ.

# Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն
# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է բարձր տեխնոլոգիաների ոլորտով հետաքրքրված ՀՀ ռեզիդենտ երիտասարդներին, ուսանողներին և ՏՏ ոլորտի մասնագետներին անվճար տրամադրել և հասանելի դարձնել աշխարհի առաջանցիկ տեխնոլոգիական ռեսուրսները և ուսումնական ծրագրերը, որի արդյունքում իրագործել հետևյալը.<br>1. Աջակցել ՀՀ-ում մրցունակ մարդկային ներուժի զարգացմանը,<br>2. ՀՀ-ում բարձր տեխնոլոգիաների ոլորտում ուժեղացնել հետազոտման և մշակման ուղղությունները:<br>3. Աջակցել բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործող ՀՀ երիտասարդ ձեռներեցներին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Սեմուել Սիմոնյան, (Անձնագիր N423050175, տրված Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից 09/05/2007թ-ին ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրը իրականացվելու է Սիմոնյան կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 01245672, ՀՀ ք.Երևան, Հալաբյան 16) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը իրականացվելու է ՀՀ Երևան քաղաքի Հալաբյան 16 հասցեում կառուցված շինության 5 707 քռ.մ տարածքում՝տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում: Ծրագիրը ուսուցանման միջոցով աշխատելու է զարգացնել ՀՀ ռեզիդենտ աշակերտների/ուսանողների և ՏՏ մասնագետների մոտ ստեղծագործական ունակությունները և տեխնոլոգիաների հանդեպ |



| | | |
|---|---|---|
| | | համակրանքը նպատակ ունենալով ուժեղացնել Հայաստանի մրցունակ մարդկային ներուժի ձևավորումը: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն 3 տարվա համար կազմելու է 2 478 111 840 (երկու միլիարդ չորս հարյուր յոթանասունութ միլիոն մեկ հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ: Հարկ է նշել, որ այս գումարը կարող է մեծանալ քանի որ հիմնադրամը իր կանոնադրական նպատակների շրջանակում նպատակ ունի մատուցել որոշակի վճարովի ծառայություններ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են՝<br><br>1. ՀՀ ռեզիդենտ հանրակրթական տարիքի բոլոր աշակերտները առանց խտրականության (տարեկան կտրվածքով մինչև 10 000 հոգի)<br>2. ՀՀ ռեզիդենտ ուսուցիչներ<br>3. ՀՀ ռեզիդենտ ՏՏ մասնագետներ<br>4. ՀՀ ռեզիդենտ Անհատ ձեռնարկատերեր<br>Ծրագիրը բաց կլինի նման բոլոր շահառուների համար, որոնք ինքնուրույն կամ ծնողների միջոցով հետաքրքրություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող կրթական գործունեությանը: Ծրագիրը հասանելի կլինի նշված բոլոր շահառուներին, որոնք ի վիճակի կլինեն ձեռք բերել ծրագրի հարմարություններից օգտվելու իրավունքը բաց անդամագրության շնորհիվ: Ծրագիրը հերթափոխության միջոցով տարվա ընթացքում կարող է հյուրընկալել հազարավոր շահառուներ, այն կգործի գրեթե արտադասարանային ակումբների ոճով սակայն յուրօրինակ կրթական նպատակներով: Վատագույն դեպքում, երբ ծրագրի կարողությունները կլինեն գերբեռնված, մասնակիցները կընտրվեն բաց մրցույթի միջոցով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոնը գտնվում է իր զարգացման վերջնական փուլում և կգործի 2010թ-ի դեկտեմբերի կեսերից մինչև 2013 թ-ի վերջը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրը ապահովելու է այնպիսի միջավայր, որտեղ ՀՀ ռեզիդենտ երիտասարդ հայերը ստեղծագործական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով հասանելի են լինելու գլոբալ ինֆորմացիոն |

հասարակության վերջին ձեռքբերումներին, ի զորու են լինելու ձեռք բերել բարձրարժեք հմտություններ ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտում և զարգացնել որակներ, որոնք անհրաժեշտ են, որպեսզի հայկական աշխատուժը մրցունակություն ապահովի գլոբալ գիտելիքների տնտեսությունում:
Երիտասարդական կենտրոնը, որը գործում է բացառապես ոչ առևտրային հիմունքներով, իր գործունեությունն է ծավալելու նորակառույց շինության 5 707 քռ.մ տարածքում, որը հագեցած է հարյուրավոր համակարգչային աշխատավայրերով, դասարաններով, աշխատասենյակներով և տեսա և ձայնային ստուդիաներով: Այս հարմարությունները, անվճար հասանելի են լինելու բոլոր ՀՀ ռեզիդենտ երիտասարդ հայերին, որոնք հետաքրքրություն կցուցաբերեն Ստեղծագործական տեխնոլոգիաների նկատմամբ, մասնավորապես այնպիսի զարգացող գլոբալ ինդուստրիաների նկատմամբ ինչպիսիք են համակարգչային անիմացիան, համակարգչային խաղերի մշակումը, թվային տեսա և ձայնային արտադրությունը և կայքային ծրագրերի մշակումը: Երիտասարդական կենտրոնում աշխատելու է արհեստավարժ կրթական և ադմինիստրատիվ անձնակազմ, որը առանձնահատուկ մշակված համակարգչային ծրագրի, ուսումնական ձեռնարկների և ծրագրերի միջոցով հետևողականորեն օգնելու է փոխանցել "Know-how"-ն (իմանալ-ինչպես) կենտրոնից օգտվողներին:
Ծրագրի ժամանակացույցը ներառում է երեք հիմնական փուլեր.
**Փուլ 1.** Ծրագրի զարգացման փուլում միջոցառումները կներառի ծրագրի կառավարում, ծրագրի նախագծում, զարգացում, համագործակցության ցանցի ապահովում, համակարգային զարգացում և ռեսուրսների համախմբում: Այս փուլը, որը սպասվում է ավարտին հասցնել մինչև 2011 թվականի վերջը, նպատակ ունի վերջնականորեն ապահովել ծրագրի անհրաժեշտ հարմարությունները ծրագրի շահառուներին ընդունելու համար:
1-ին փուլի բյուջեն կազմում է 1 071 528 495 (մեկ միլիարդ յոթանասունմեկ միլիոն հինգ հարյուր քսանութ հազար չորս հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ, որը բաղկացած է հետևյալից.



1) Կահավորանք (սեղաններ, աթոռներ, գրադարակներ, փափուկ կահույք և այլն) – 169 115 400 (մեկ հարյուր վաթսունինը միլիոն մեկ հարյուր տասնհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:
2) Համակարգչային տեխնիկա (Համակարգիչներ, մոնիտորներ, սերվերներ, ցանցային սարքեր, տպիչներ, սկաներներ և այլն) - 244 870 395 (երկու հարյուր քառասունչորս միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար երեք հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ:
3) Համակարգչային ծրագրեր – 112 471 020 (մեկ հարյուր տասներկու միլիոն չորս հարյուր յոթանասունմեկ հազար քսան) ՀՀ դրամ:
4) Կրթական ձեռնարկներ, դասագրքեր, ծրագրեր և այլն- 7 200 000 (յոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:
5) Կոմունալ ծառայությունների վճար – 125 365 680 (մեկ հարյուր քսանհինգ միլիոն երեք հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ:
6) Գույքի և սարքավորումների պահպանման ծախսեր – 18 000 000 (տասնութ միլիոն) ՀՀ դրամ:
7) Տնտեսական և գրենական ապրանքներ – 4 320 000 (չորս միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:
8) Ուղղակիորեն շահառուներին սպասարկող անձնակազմի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ - 312 940 952 (երեք հարյուր տասներկու միլիոն ինը հարյուր քառասուն հազար ինը հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ:
9) Գործատուների կողմից սոցիալական վճարների գծով հատկացումներ - 16 459 048 (տասնվեց միլիոն չորս հարյուր հիսունինը հազար քառասունութ) ՀՀ դրամ:
10) Շահառուների սպասարկման համար անհրաժեշտ այլ ուղղակի ծախսեր – 60 786 000 (վաթսուն միլիոն յոթ հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ:
**Փուլ 2.** Սկզբնական գործարկման և փորձարկման փուլի ժամանակ ծրագիրը գործելու է պիլոտային հիմունքներով՝ անձնակազմի վարձում, ծրագրերի և սարքավորումների փորձարկում և ուսումնական պլանի կատարելագործում և չի գործելու իր ամբողջ կարողությունների

| | | |
|---|---|---|
| | | շրջանակում: Սկզբնական գործարկման և փորձարկման փուլը նպատակադրված է ավարտել մինչև 2012 թվականի վերջը:<br>2-րդ փուլի բյուջեն կազմում է 545 071 680 (հինգ հարյուր քառասունհինգ միլիոն յոթանասունմեկ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որը բաղկացած է հետևյալից.<br>1) Կրթական ձեռնարկներ, դասագրքեր, ծրագրեր և այլն- 7 200 000 (յոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:<br>2) Կոմունալ ծառայությունների վճար – 125 365 680 (մեկ հարյուր քսանհինգ միլիոն երեք հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ:<br>3) Գույքի և սարքավորումների պահմապնման ծախսեր – 18 000 000 (տասնութ միլիոն) ՀՀ դրամ:<br>4) Տնտեսական և գրենական ապրանքներ – 4 320 000 (չորս միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:<br>5) Ուղղակիորեն շահառուներին սպասարկող անձնակազմի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ - 312 940 952 (երեք հարյուր տասներկու միլիոն ինը հարյուր քառասուն հազար ինը հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ:<br>6) Գործատուների կողմից սոցիալական վճարների գծով հատկացումներ - 16 459 048 (տասնվեց միլիոն չորս հարյուր հիսունինը հազար քառասունութ) ՀՀ դրամ:<br>7) Շահառուների սպասարկման համար անհրաժեշտ այլ ուղղակի ծախսեր – 60 786 000 (վաթսուն միլիոն յոթ հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ:<br>**Փուլ 3.** Գործունեության փուլի ընթացքում, որը նպատակադրված է սկսել 2012 թվականի վերջերին և ավարտել 2013թ-ի վերջերին, ծրագիրը կլինի ամբողջովին ֆունկցիոնալ և կառաջարկի վերոնշված ծառայությունները առավելագույն թվով շահառուների:<br>3-րդ փուլի բյուջեն կազմում է տարեկան 545 071 680 (հինգ հարյուր քառասունհինգ միլիոն յոթանասունմեկ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որը բաղկացած է հետևյալից.<br>1) Կրթական ձեռնարկներ, դասագրքեր, ծրագրեր և այլն- 7 200 000 |



| | | |
|---|---|---|
| | | (յոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:<br>2) Կոմունալ ծառայությունների վճար – 125 365 680 (մեկ հարյուր քսանհինգ միլիոն երեք հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ:<br>3) Գույքի և սարքավորումների պահմապնման ծախսեր – 18 000 000 (տասնութ միլիոն) ՀՀ դրամ:<br>4) Տնտեսական և գրենական ապրանքներ – 4 320 000 (չորս միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:<br>5) Ուղղակիորեն շահառուներին սպասարկող անձնակազմի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ - 312 940 952 (երեք հարյուր տասներկու միլիոն ինը հարյուր քառասուն հազար ինը հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ:<br>6) Գործատուների կողմից սոցիալական վճարների գծով հատկացումներ - 16 459 048 (տասնվեց միլիոն չորս հարյուր հիսունինը հազար քառասունութ) ՀՀ դրամ:<br>7) Շահառուների սպասարկման համար անհրաժեշտ այլ ուղղակի ծախսեր – 60 786 000 (վաթսուն միլիոն յոթ հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Շահառուներին մատուցվելիք ծառայությունների համար անհրաժեշտ<br>1) Կահավորանք (սեղաններ, աթոռներ, գրադարակներ, փափուկ կահույք և այլն) – 169 115 400 (մեկ հարյուր վաթսունինը միլիոն մեկ հարյուր տասնհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ: Նախատեսվում է ներմուծել արտերկրից՝ հիմնականում 2010 և 2011 թթ-ի ընթացքում:<br>2) Համակարգչային տեխնիկա (Համակարգիչներ, մոնիտորներ, սերվերներ, ցանցային սարքեր, տպիչներ, սկաներներ և այլն) - 235 870 395 (երկու հարյուր երեսունհինգ միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար երեք հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ: Նախատեսվում է ներմուծել արտերկրից՝ հիմնականում 2010 և 2011 թթ-ի ընթացքում:<br>3) Համակարգչային տեխնիկա (Համակարգիչներ, մոնիտորներ, սերվերներ, ցանցային սարքեր, տպիչներ, սկաներներ և այլն) – 9 000 000 (Ինը միլիոն) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ շուկայից՝ հիմնականում 2010 և 2011 թթ-ի ընթացքում: |

| | | |
|---|---|---|
| | | 4) Համակարգչային ծրագրեր – 91 951 020 (իննսունմեկ միլիոն ինը հարյուր հիսունմեկ հազար քսան) ՀՀ դրամ: Նախատեսվում է ներմուծել արտերկրից՝ հիմնականում 2010 և 2011 թթ-ի ընթացքում:<br>5) Համակարգչային ծրագրեր – 20 520 000 (Քսան միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ շուկայից՝ հիմնականում 2010 և 2011 թթ-ի ընթացքում:<br>6) Կրթական ձեռնարկներ, դասագրքեր, ծրագրեր և այլն- 6 000 000 (վեց միլիոն) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ շուկայից՝ 2010-2013թթ-ի ընթացքում:<br>7) Կրթական ձեռնարկներ, դասագրքեր, ծրագրեր և այլն- 15 600 000 (տասնհինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել և արտերկրից՝2010-2013թթ-ի ընթացքում:<br>8) Կոմունալ ծառայությունների վճար – 376 097 040 (երեք հարյուր յոթանասունվեց միլիոն իննսունյոթ հազար քառասուն) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել՝ ՀՀ շուկայից 2010-2013թթ-ի ընթացքում:<br>9) Գույքի և սարքավորումների պահպանման ծախսեր – 54 000 000 (հիսունչորս միլիոն) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ շուկայից՝ 2010-2013թթ-ի ընթացքում:<br>10) Տնտեսական և գրենական ապրանքներ – 12 960 000 (տասներկու միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ; Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ շուկայից՝ 2010-2013թթ-ի ընթացքում:<br>11) Այլ ապրանքներ և ծառայություններ (թերթեր, ամսագրեր, ֆիլմեր, տեսաժապավեններ և այլն) - 70 000 000 (յոթանասուն միլիոն) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ շուկայից՝2010-2013թթ-ի ընթացքում :<br>12) Այլ ապրանքներ և ծառայություններ (թերթեր, ամսագրեր, ֆիլմեր, տեսաժապավեններ և այլն) - 111 926 000 (մեկ հարյուր տասնմեկ միլիոն ինը հարյուր քսանվեց հազար) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել արտերկրից՝ 2010-2013թթ-ի ընթացքում: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | 316 440 000 (երեք հարյուր տասնվեց միլիոն չորս հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, որից<br><br>**1-ին փուլ** – 105 480 000 (մեկ հարյուր հինգ միլիոն չորս հարյուր ութսուն |



| | | |
|---|---|---|
| | | հազար) ՀՀ դրամ, որը բաղկացած է հետևյալից.<br>1) Վարչական աշխատողների աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ – 89 695 238 (ութսունինը միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր երեսունութ) ՀՀ դրամ:<br>2) Վարչական աշխատողների համար գործատուների կողմից սոցիալական վճարների գծով հատկացումներ - 4 624 762 (չորս միլիոն վեց հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ:<br>3) Խորհրդատվական և աուդիտորական ծախսեր – 360 000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:<br>4) Գործուղման և ներկայացուցչական ծախսեր – 3 600 000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:<br>5) Այլ ծախսեր – 7 200 000 (յոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:<br><br>**2-րդ փուլ** – 105 480 000 (մեկ հարյուր հինգ միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որը բաղկացած է հետևյալից.<br>1) Վարչական աշխատողների աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ – 89 695 238 (ութսունինը միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր երեսունութ) ՀՀ դրամ:<br>2) Վարչական աշխատողների համար գործատուների կողմից սոցիալական վճարների գծով հատկացումներ - 4 624 762 (չորս միլիոն վեց հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ:<br>3) Խորհրդատվական և աուդիտորական ծախսեր – 360 000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:<br>4) Գործուղման և ներկայացուցչական ծախսեր – 3 600 000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:<br>5) Այլ ծախսեր – 7 200 000 (յոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:<br><br>**3-րդ փուլ** – 105 480 000 (մեկ հարյուր հինգ միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որը բաղկացած է հետևյալից.<br>1) Վարչական աշխատողների աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ – 89 695 238 (ութսունինը միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր երեսունութ) ՀՀ դրամ: |

| | | |
|---|---|---|
| | | 2) Վարչական աշխատողների համար գործատուների կողմից սոցիալական վճարների գծով հատկացումներ - 4 624 762 (չորս միլիոն վեց հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ:<br>3) Խորհրդատվական և աուդիտորական ծախսեր – 360 000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:<br>4) Գործուղման և ներկայացուցչական ծախսեր – 3 600 000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:<br>5) Այլ ծախսեր – 7 200 000 (յոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:<br><br>Կազմակերպչական ծախսերը ընդգրկում են կազմակերպության բոլոր այն ծախսերը, որոնք ուղակիորեն միտված չեն ծրագրի շահառուներին ծառայություններ մատուցելուն: Դրանցից են վարչական աշխատողների աշխատավարձը, սոց վճարները, գործուղման և ներկայացուցչական ծախսերը, վարչական աշխատողների աշխատանքի համար անհրաժեշտ պայմանների ստեղծման համար անհրաժեշտ ծախսերը, խորհրդատվական և աուդիտորական ծախսերը, և այլն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը կհամագործակցի կրթության և գիտության նախարարության և Էկոնոմիկայի նախարարության հետ: Ծրագրից օգտվող դպրոցների ընտրությունը կկատարվի կրթության և գիտության նախարարության հետ խորհրդակցելու միջոցով: Ծրագիրը կհամագործակցի Էկոնոմիկայի նախարարության հետ ելնելով վերջինիս այն տեսլականից, որ Հայաստանի Հանրապետությունում պետք է ներդրվի և զարգացվի էլեկտրոնային հասարակության և գիտելիքի վրա հիմնված տնտեսության սկզբունքը: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագիրը կմշակի իր գործունեության արդյունավետության գնահատման ներքին հսկողության համակարգ և պարբերաբար աուդիտի կենթարկվի անկախ աուդիտորի կողմից: ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը՝ հաշվետվությունների տեսքով: |

Կազմեց՝ Արամ Նարիմանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-953-Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՈՒՄ ՎԱՐԴԵՆԻՍԻ ԵՎ ՃԱՄԲԱՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 3-ի N 3/3.8-2/9769-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 4783-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N ՖԲ/ՄարտՄխ-2/5719-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N ԱԱ/3-6/2853-10 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N 01/15/3189-10 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 678700 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջաններում» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է<br>"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" մրկ Հայաստանյան մասնաճյուղի<br>տնօրեն Գրեհամ Ստրոնգ<br>, 2010 թ

***Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջաններում***

<table>
<tr><td>1</td><td>Ծրագրի նպատակը</td><td>Բարեգործական օգնության բաշխում Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջանների համայնքների կարիքավոր բնակչությանը:</td></tr>
<tr><td>2</td><td>Ծրագրի բարեգործական որակման նպատակը</td><td>Ծրագրի բարեգործական որակման նպատակն է հումանիտար բեռի ներմուծման հետ կապված հարկային և մաքսային արտոնություններ ստանալը:</td></tr>
<tr><td>3</td><td>Բարեգործը</td><td>Բարեգործական օգնությունը տրամադրվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի աջակցող գրասենյակների կողմից:</td></tr>
<tr><td>4</td><td>Ծրագիրը կատարողը</td><td>Ծրագիրն անմիջականորեն իրականացնող է հանդիսանում Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը (հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755). Ծրագրերն իրականացվում են տեղական իշխանությունների, համայնքային նախաձեռնող /ակտիվ/ խմբերի օգնությամբ և համայնքների անդամների մասնակցությամբ:</td></tr>
Տրանսպորտային ծախսերն իրականացվելու են Սիսիանի Տարածքային Զարգացման ծրագրի բյուջեի հաշվին: Բարեգործական օգնությունը տրամադրվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի, Կանադայի աջակցող գրասենյակների կողմից՝ հետևյալ մոտավոր արժեքով՛ ԱՄՆի գրասենյակ- 700,000 ԱՄՆ դոլլար, Կանադայի գրասենըակ- 40.000 ԱՄՆ դոլլար . *Ընդամենը 740,000 ԱՄՆ դոլլար:*

| | | |
|---|---|---|
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուների ընդհանուր թիվը կազմում է 19,523 մարդ: Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Յայաստանյան Մասնաճյուղի Սիսիանի Տարածքային Զարգացման Ծրագիրը Տեղական սոցիալական ծառայությունների հետ համատեղ 2004 թ. սեպտեմբերից սկսած ՏԶԾ-ում ընգրկված բոլոր համայնքներում իրականացրել են հիմնական կարիքների ուսումնասիրում: Կարիքների գնահատման ընթացքում հարցումների միջոցով հավաքագրվել և համեմատական վերլուծության են ենթարկվել համայնքները բնութագրող բազմատեսակ տվյալներ, որի արդյունքում ստորև ներկայացված համայնքները ճանաչվել են որպես առավել խոցելի և զարգացման կարիք ունեցող համայնքներ: |

18/15

Այլուսակ 1

| *#* | *Յամայնք* | *Ազգաբնակչության թիվը* | *Այդ թվում՝ 3-10 տարեկան երեխաներ* |
|---|---|---|---|
| | Սիսիանի տարածաշրջան | | |
| 1 | Բալաք | 236 | 60 |
| 2 | Դարբաս | 784 | 172 |
| 3 | Շամբ | 500 | 116 |
| 4 | Գորայք | 500 | 157 |
| 5 | Անգեղակոթ | 2115 | 714 |
| 6 | Իշխանասար | 230 | 31 |
| 7 | Աղիտու | 472 | 75 |
| 8 | Սալվարդ | 446 | 62 |
| 9 | Սառնակունք | 574 | 176 |
| 10 | Լոր | 300 | 95 |
| 11 | Լծեն | 170 | 27 |
| 12 | Շաղատ | 1129 | 303 |
| 13 | Շաքե | 1598 | 424 |
| 14 | Գետաթաղ | 204 | 59 |
| 15 | Մուծք | 396 | 112 |
| 16 | Աշոտավան | 603 | 163 |
| 17 | Տոլորս | 422 | 90 |
| 18 | Բռնակոտ | 2400 | 640 |
| | Գորիսի տարածաշրջան | | |
| 19 | Քարահունջ | 1134 | 309 |
| 20 | Հալիձոր | 631 | 207 |
| 21 | Հարժիս | 981 | 279 |
| 22 | Խոտ | 957 | 271 |
| 23 | Շինուհայր | 2741 | 864 |
| | Ընդամենը | 19523 | 5406 |

| | | |
|---|---|---|
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է 2011 թ. հունվարի 1-ից մինչև 2011 թ. դեկտեմբերի 31-ը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2011 թ.-ի ընթացքում Սիսիանի ՏԶԾ-ի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 740000 ԱՄՆ դոլարի արժողությամբ բարեգործական օգնության բաշխում ըստ ստորև ներկայացված համայնքների. |

| # | Համայնք | Բնակչու-թյունը | Բարեգործական օգնության արժեքը ԱՄՆ դոլարով | | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հա-գուստ | Կոշիկ | Դպրոց. պիտույք | Շինա-նյութ | Մարզ. պարա-գա | Հիգիենիկ պարագա | |

18/15

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 9 | 10 | 11 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բալաք | 236 | 3753 | 2360 | 1416 | 590 | 236 | 590 | 8968 |
| 2 | Դարաբաս | 784 | 12469 | 7840 | 4706 | 1960 | 784 | 1960 | 29388 |
| 3 | Շամբ | 500 | 7952 | 5000 | 3000 | 1250 | 500 | 1250 | 18744 |
| 4 | Գորհայք | 500 | 7952 | 5000 | 3000 | 1250 | 500 | 1250 | 18744 |
| 5 | Անգեղակոթ | 2131 | 33891 | 21310 | 12786 | 5328 | 2131 | 5328 | 79290 |
| 6 | Իշխանասար | 230 | 3658 | 2300 | 1380 | 575 | 230 | 570 | 8622 |
| 7 | Աղիտու | 472 | 7507 | 4720 | 2832 | 1180 | 472 | 1180 | 17694 |
| 8 | Սալվարդ | 446 | 7093 | 4460 | 2676 | 1115 | 446 | 1115 | 16722 |
| 9 | Սառնակունք | 574 | 9129 | 5740 | 3444 | 1435 | 574 | 1435 | 21522 |
| 10 | Լոր | 300 | 4771 | 3000 | 1800 | 750 | 300 | 750 | 11319 |
| 11 | Լծեն | 170 | 2704 | 1700 | 1020 | 425 | 170 | 425 | 6378 |
| 12 | Շաղաթ | 1129 | 17956 | 11290 | 6774 | 2823 | 1129 | 2823 | 42327 |
| 13 | Շաքի | 1598 | 25415 | 15980 | 9588 | 3995 | 1598 | 3995 | 59913 |
| 14 | Գետաթաղ | 204 | 3244 | 2040 | 1224 | 510 | 204 | 510 | 7650 |
| 15 | Սուծք | 396 | 6298 | 3960 | 2376 | 990 | 396 | 990 | 14844 |
| 16 | Աշոտավան | 603 | 9590 | 6030 | 3618 | 1508 | 603 | 1508 | 22602 |
| 17 | Թոլորս | 422 | 6711 | 4220 | 2532 | 106 | 422 | 106 | 15816 |
| 18 | Բռնակոտ | 2400 | 38170 | 24000 | 14400 | 6000 | 2400 | 6000 | 89976 |
| 19 | Քարահունջ | 1134 | 18035 | 11340 | 6804 | 2835 | 1134 | 2835 | 42516 |
| 20 | Հալիձոր | 631 | 10035 | 6310 | 3786 | 1578 | 631 | 1578 | 23658 |
| 21 | Հարժիս | 981 | 15602 | 9810 | 5886 | 2453 | 981 | 2453 | 36783 |
| 22 | Խոտ | 957 | 15220 | 9570 | 5742 | 2393 | 957 | 2393 | 35880 |
| 23 | Շինուայր | 2741 | 43593 | 27410 | 16446 | 6853 | 2741 | 6853 | 102762 |
| | Ընդամենը | 19523 | 310493 | 195230 | 117138 | 48808 | 19523 | 48808 | 740000 |

Մարդասիրական գնության բաշխման չափերն ըստ համայնքների պլանավորվել է շահառուների քանակին համապատասխան:

Բարեգործական օգնության բաշխումը հիմնականում կատարվելու է Նոր տարվա ու Սուրբ Ծննդի, Զատիկի տոների կապակցությամբ, ամառային ճամբարի ժամանակ, երեխաների պաշտպանության օրը, սահմանափակ կարողություն ունեցող անձանց նվիրված միջոցառումներին ինչպես նաև ըստ ծագած անհրաժեշտության:

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Մարդասիրական բեռների ընդհանուր արժեքը կազմում է 740000 ԱՄՆ դոլար, որից հագուստ՝ 310493 ԱՄՆ դոլար, կոշիկ՝ 195,230 ԱՄՆ դոլար, , դպրոցական պարագաներ՝ 117138 ԱՄՆ դոլար, շինանյութեր 48808 ԱՄՆ դոլար, մարզական պարագաներ՝19523 ԱՄՆ դոլար, հիգիենիկ պարագաներ՝ 48808 ԱՄՆ դոլար:<br>Բեռների տեղափոխումն իրականացնելու նպատակով տրանսպորտային ծառայություն մատուցող որևէ կազմակերպության կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ հետ կնքվելու է ծառայությունների մատուցման պայմանագիր: Նախատեսվում է, որ տրանսպորտային ծախսերը չեն գերազանցի 2,500 ԱՄՆ դոլարը:<br>Ապրանքները շահառուներին բաժանվելու է Վորլդ Վիժնի կողմից՝ համայնքային ակտիվ /նախաձեռնող/ խմբերի /ՀԱԽ/ և համայնքների ղեկավարների միջոցով: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Անմիջականորեն շահառուների սպառմանը չուղղվող տրանսպորտային ծախսերը՝ 2,500 ԱՄՆ դոլար, կազմում են ընդհանուր բյուջեի 0,34%-ը: |

18/15

| | | |
|---|---|---|
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Սիսիանի Տարածքային Զարգացման Ծրագիրը համագործակցում է տարածաշրջանի տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոչ առևտրային տեղական և միջազգային կազմակերպությունների, Մարզպետարանի, Սիսիանի և Գորիսի քաղաքապետարանների, սոցիալական ծառայության, համայնքների, հայ առաքելական եկեղեցու, դպրոցների, մանկապարտեզների հետ:<br>Մարզպետարանի, քաղաքապետարանի և գյուղապետարանների, ինչպես նաև սոցիալական ծառայությունների հետ համագործակցությունը կայանում է նրանում, որ Վորլդ Վիժնը պարբերաբար հանդիպում է այդ կառույցների իրավասու ներկայացուցիչների հետ, իրազեկում է նրանց Սիսիանի ՏԶԾ-ի ծրագրերի մասին, Ճշգրտում շահառուների ցուցակները, ներկայացնում է տեղեկատվություն, անհրաժեշտության դեպքում նաև հաշվետվություն կատարված աշխատանքների մասին:<br>Սիսիանի ՏԶԾ-ը արդեն իսկ սերտորեն համագործակցում է վերոհիշյալ 23 համայնքների հետ, համայնքներում գործում են բնակիչների կողմից ընտրված համայնքային ակտիվ խմբեր: Բարեգործական օգնության բաշխումը իրականացվելու է Սիսիանի ՏԶԾ աշխատակիցների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների և ակտիվ խմբի ներկայացուցիչների մասնակցությամբ, ինչը կապահովի ամբողջ գործընթացի թափանցիկությունը: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Համայնքներում իրականացվող ծրագրերի նկատմամբ վերահսկողություն է իրականացվում է Սիսիանի ՏԶԾ-ի մոնիտորների, ինչպես նաև Համայնքային Ակտիվ Խմբերի ու տեղական իշխանության ներկայացուցիչների կողմից:<br>Հիմնական վերահսկողությունն իրականացվում է Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղի կողմից: Այդ նպատակով կազմակերպությունը կարող է ներգրավել ներքին խորհրդատուներ և աուդիտորներ:<br>Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի, << Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ինչպես նաև Հարկային մարմինների կողմից:<br>Հումանիտար օգնություն ստացած շահառուների վերջնական ցուցակները տրամադրվելու է սոցիալական ծառայություններին և այլ շահագրգիռ մարմիններին: Եռամսյակային հաշվետվություններ կներկայացվեն << Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղի

Ծրագրերի Ղեկավար՝

Շաղիկ Մարուխյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-948-Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՑ ԲԱՇԽՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՀՈՎՈՒՆԻ ՈՒ ՄԱՐՄԱՇԵՆ ԳՅՈՒՂԵՐԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 3-ի N 3/3.8-2/9762-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N 4710-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի նոյեմբերի 30-ի N ՖԲ/ՄարտՄխ-1/5705-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N ԱԱ/3-6/2854-10 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N 01/4839-10 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 722400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գյումրի քաղաքի և Հովունի ու Մարմաշեն գյուղերի կարիքավոր բնակչությանը» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին»



Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն.................................................Գրահամ Ստրոնգ
«.............» ...................................... 2010թ

«Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գյումրի քաղաքի և Հովունի ու Մարմաշեն գյուղերի կարիքավոր բնակչությանը

18/14

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Բարեգործական օգնության բաշխում Գյումրի քաղաքի, Մարմաշեն և Հովունի գյուղերի կարիքավոր բնակչությանը |
| 2 | Ծրագրի բարեգործական ոլորտի նպատակը | Ծրագրի բարեգործական ոլորտի նպատակն է Գյումրի քաղաքում բնակվող և Վորլդ Վիժն ՄԲԿ-ի կողմից հովանավորվող երեխաների, , ծնողների և համայնքների համար մարդասիրական բեռների ներմուծման հետ կապված հարկային և մաքսային արտոնություններ ստանալը: |
| 3 | Բարեգործը | Ծրագիրը ֆինանսավորվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի և Կանադայի աջակցող գրասենյակի կողմից: |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու է հանդիսանում Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը *(հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755)*. |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայր է հանդիսանում ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անի, Մուշ, Շերամ և «Ավստրիական գյուղ» թաղամասերը, ինչպես նաև՝ Մարմաշեն և Հովունի գյուղերը: Ծրագրի բնագավառն է՝ սոցիալական: |

6 Ծրագրի բյուջեն

| *#* | *Բյուջեի նկարագրությունը* | *Ընդամենը ԱՄՆ դոլար* |
|---|---|---|
| *1* | *2* | *3* |
| 1 | Բարեգործական օգնություն | 720'000 $ |
| 2 | Տրանսպորտային ծախսեր (ՀՀ տարածքում) | 2'400 $ |
| | ***Ընդամենը*** | ***722'400 $*** |

Տրանսպորտային ծախսերն իրականացվելու են Գյումրիի Տարածքային Զարգացման ծրագրի բյուջեի հաշվին: Բարեգործական օգնությունը տրամադրվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի, Կանադայի և Ավստրալիայի աջակցող գրասենյակների կողմից՝ հետևյալ արժեքով.

| *#* | *Աջակցող գրասենյակ* | *Տրամադրվող օգնություն (ԱՄՆ դոլար)* |
|---|---|---|
| *1* | *2* | *3* |
| 1 | ԱՄՆ | 600'000$ |
| 2 | Կանադա | 120'000$ |
| | | |
| | ***Ընդամենը*** | ***720'000$*** |

7 Բարեգործության ստացողը

Ծրագրի շահառուների ընդհանուր թիվը կազմում է 4000 մարդ, որից ՏԶԾ-ում ընդգրկված գյուղական համայնքներում 400, քաղաքային համայնքներում՝ 3600:

Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղի Գյումրիի Տարածքային Զարգացման Ծրագիրը տարածաշրջանի համայնքներում իրականացրել է հիմնական կարիքների ուսումնասիրություն: Դրա արդյունքում Գյումրիի ՏԶԾ-ում ընդգրկվել են 2 գյուղական համայնքներ և 4 քաղաքային թաղամասեր: Ծրագրի անմիջական շահառու են հանդիսանալու հովանավորության ծրագրում ընդգրկված կարիքավոր ընտանիքների 3-14 տարեկան 3300 երեխաներ: Մնացած շահառուների ընտրությունը կատարվելու է տարածաշրջանի սոցիալական ծառայության, Գյումրիի ՏԶԾ-ի մոնիտորների և Համայնքային ակտիվ խմբերի միջոցով՝ Վորլդ Վիժնի Գյումրիի ՏԶԾ-ի կողմից մշակված ընտանիքների կարիքների գնահատման հարցաթերթիկի հիման վրա: Սոցիալապես անապահով քաղաքացիներին բարեգործական օգնություն է տրվելու նաև տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա:

18/14

Աղյուսակ 1

| *#* | *Համայնք* | *Շահառուների թիվը* | *Այդ թվում՝ 3-14 տարեկան երեխաներ* |
|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* |
| 1 | Գյումրի «Անի» թաղամաս | 2880 | 2500 |
| 2 | Գյումրու «Ավստրիական գյուղ» թաղամաս | 120 | 60 |
| 3 | Գյումրու «Մուշ» թաղամաս | 400 | 320 |
| 4 | Գյումրու «Շերամ» թաղամաս | 100 | 40 |
| 5 | Մարմաշեն գյուղ | 300 | 230 |
| 6 | Հովունի գյուղ | 200 | 150 |
| | ***Ընդամենը*** | ***4000*** | ***3300*** |

| | | |
|---|---|---|
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011 հունվար-դեկտեմբեր ամիսներ |

9 Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը

2011թ.-ի ընթացքում Գյումրիի ՏԶԾ-ի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 740,000 ԱՄՆ դոլարի արժողությամբ բարեգործական օգնության բաշխում ըստ ստորև ներկայացված համայնքների.

| # | Համայնք | Շահա - ռուների թիվը | Բարեգործական օգնության արժեքը ԱՄՆ դոլարով | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հա-գուստ | Կոշիկ | Դպրոց. պիտույք | Շինանյութ | Կահույք | Հիգիեն. պարագա | Ընդամենը |
| *1* | | | | | | | | | |
| 1 | Գյումրի «Անի» թաղամաս | 2880 | 201600 | 129600 | 43200 | 57600 | 43200 | 43200 | *51840* |
| 2 | Գյումրու «Ավստրիա-կան գյուղ» թաղամաս | 120 | 8400 | 5400 | 1800 | 14400 | 1800 | 1800 | *2160* |
| 3 | Գյումրու «Մուշ» թաղամաս | 400 | 28000 | 18000 | 6000 | 8000 | 6000 | 6000 | *7200* |
| 4 | Գյումրու «Շերամ» թաղամաս | 100 | 7000 | 4500 | 1500 | 2000 | 1500 | 1500 | *1800* |
| 5 | Մարմաշեն գյուղ | 300 | 21000 | 13500 | 4500 | 6000 | 4500 | 4500 | *5400* |
| 6 | Հովունի գյուղ | 200 | 14000 | 9000 | 3000 | 4000 | 3000 | 3000 | *3600* |
| | **Ընդամենը** | ***4000*** | **280000** | **180000** | **60000** | **80000** | **60000** | **60000** | **72000** |

Մարդասիրական գնության բաշխման չափերն ըստ համայնքների պլանավորվել է շահառուների քանակին համապատասխան:

Բարեգործական օգնության բաշխումը հիմնականում կատարվելու է Նոր տարվա ու Սուրբ

| | | |
|---|---|---|
| | • | Ծննդի, Զատիկի տոների կապակցությամբ, ամառային ճամբարի ժամանակ, երեխաների պաշտպանության օրը, ուսումնական տարվա սկզբին, սահմանափակ կարողություն ունեցող անձանց նվիրված միջոցառումներին, ինչպես նաև ըստ ծագած անհրաժեշտության: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Մարդասիրական բեռների ընդհանուր արժեքը կազմում է 720,000 ԱՄՆ դոլար, որից հագուստ՝ 280'000 ԱՄՆ դոլար, կոշիկ՝ 180'000 ԱՄՆ դոլար, , դպրոցական պարագաներ՝ 60'000 ԱՄՆ դոլար, շինանյութեր 80'000 ԱՄՆ դոլար, կահույք՝ 60'000 ԱՄՆ դոլլար, հիգիենիկ պարագաներ՝ 60'000 ԱՄՆ դոլար:<br>Բեռների տեղափոխումն իրականացնելու նպատակով տրանսպորտային ծառայություն մատուցող որևէ կազմակերպության կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ հետ կնքվելու է ծառայությունների մատուցման պայմանագիր: Նախատեսվում է, որ տրանսպորտային ծախսերը չեն գերազանցի 2'400 ԱՄՆ դոլարը:<br>Ապրանքները շահառուներին բաժանվելու է Վորլդ Վիժնի կողմից՝ համայնքային ակտիվ /նախաձեռնող/ խմբերի /ՀԱԽ/ և համայնքների ղեկավարների միջոցով: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը ներառում են տրանսպորտային ծախսերը՝ 2,400 ԱՄՆ դոլլար, որը կկազմի բյուջեի 0.32 %: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է Շիրակի մարզպետարանի և Գյումրիի քաղաքապետարանի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետությունը գնահատվում է մի քանի չափորոշիչներով:<br>Հիմնական վերահսկողությունն իրականացվում է Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղի կողմից: Այդ նպատակով կազմակերպությունը կարող է ներգրավել ներքին խորհրդատուներ և աուդիտորներ:<br>Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև Հարկային մարմինների և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովի կողմից: |

Ծրագրի Ղեկավար՝

Շաղիկ Մարուխյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-947-Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 3-ի N 3/3.8-2/9758-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 3-ի N 4737-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N ՀՔ/9091-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N ԱԱ/3-6/2862-10 և Երևանի քաղաքապետարանի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 02/10-24569h եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 613200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում առողջապահական հաստատություններին» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե« Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի ու Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն Գրեհեմ Սթրոնգ
, 2010թ

Բժշկական պարագաների ներմուծում և անհատույց բաշխում առողջապահական հաստատություններին

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Հումանիտար բեռների (բժշկական պարագաների) ներմուծում և անհատույց բաշխում |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակն է հումանիտար բեռի ներմուծման հետ կապված հարկային և մաքսային արտոնություններ ստանալը: |
| 3 | Բարեգործը | Բարեգործական օգնությունը տրամադրվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի և Կանադայի աջակցող գրասենյակների կողմից: |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն իրականացնող է հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը (հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755): |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Երևանում, Գյումրիի, Կապանի, Սիսիանի, Գորիսի տարածաշրջաններում, Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու մարզերում: |
| 6 | Ծրագրի բյուջեն | (see below) |

| # | Բյուջեի նկարագրությունը | Ընդամենը ԱՄՆ դոլար |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Բարեգործական օգնություն | 600000 |
| 2 | Պահեստի վարձակալում | 13,200 |
| Ընդամենը | | 613,200 |

Բարեգործական օգնությունը տրամադրվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի - 400,000 ԱՄՆ դոլլար և Կանադայի գրասենյակի կողմից-200,000 ԱՄՆ դոլլար: 600.000 ԱՄՆ դոլլար ընդհանուր արժեկով:

Բժշկական հաստատությունների անվանումները

| | |
|---|---|
| Սիսիան և Գորիս | |
| 1. | Անգեղակոթի բ/ա Փակ Բաժնետիրական Ընկերություն (ՓԲԸ) |
| 2. | Գորայքի Առողջության Առաջնային Պահպանման Կենտրոն ՓԲԸ (ԱԱՊԿ ) |
| 3. | Դարբասի ԱԱՊԿ ՓԲԸ |
| 4. | Սիսիանի բժշկական կենտրոն (բ/կ) ՓԲԸ |
| 5. | Բռնակոթի ԱԱՊԿ ՓԲԸ |
| 6. | Գորիսի բ/կ ՓԲԸ |
| 7. | Վերիշենի բ/կ ՓԲԸ |
| 8. | Տեղի ԱԱՊԿ ՓԲԸ |
| 9. | Շինուհայրի ԱԱՊԿ |
| Մեղրի | |
| 1 | Մեղրիի տարածաշրջանային բժշկական կենտրոն |
| 2 | Լեհվազի գյուղական բժշկական ամբուլատորիա |
| 3 | Շվանիձորի գյուղական բժշկական ամբուլատորիա |
| 4 | Լիճքի գյուղական բժշկական ամբուլատորիա |
| Տավուշ | |
| 1 | Իջևան ԱԱՊԿ |
| 2 | Սևքար ամբուլատորիա |
| 3 | Ազատամուտ ԱԱՊԿ |
| 4 | Աչաջուր Առողջության Կենտրոն (ԱԿ) |
| 5 | Այգեհովիտ ԱԱՊԿ |
| 6 | Խաշթառակ ԱԱՊԿ |
| 7 | Գետահովիտ ԱԱՊԿ |
| 8 | Բերդ ԲԿ |
| 9 | Արծվաբերդ ԱԿ |
| 10 | Ն.Կ.Աղբյուր ԱԱՊԿ |
| 11 | Պառավաքար ամբուլատորիա |
| 12 | Նավուր ԱԱՊԿ |
| 13 | Նոյեմբերյան ԲԿ |
| Ալավերդի | |
| 1 | Արևածագի Առողջության Առաջնային Պահպանման Կենտրոն (ԱԱՊԿ) |
| 2 | Ճոճկանի բժշկական ամբուլատորիա ՓԲԸ |

| | | |
|---|---|---|
| | | |

| | |
|---|---|
| 3 | Աքորու ԱԱՊԿ |
| 4 | Թումանյանի ԱԿ ՓԲԸ |
| 5 | Ախթալայի ԱԿ ՓԲԸ |
| Երևան | |
| 1 | Ս.Աստվածամայր բժշկական կենտրոն |
| 2 | Արաբկիր բժշկական համալիր |
| 3 | Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն |
| 4 | Ս. Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն |
| 5 | Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոն |
| 6 | "Արմենիա" Հանրապետական բժշկական կենտրոն |
| 7 | Էրեբունի բժշկական կենտրոն |
| Երևան | |
| 1 | Ավստրիական մանկական հիվանդանոց |
| 2 | Կարմիր Խաչի պոլիկլինիկա |
| 3 | Ախուրյանի մոր և մանկան կենտրոն |
| Կապան | |
| 1 | Կապանի հիվանդանոց |
| 2 | Կապանի հոգեբուժարան |
| Գեղարքունիք | |
| 1 | Վարդենիսի հիվանդանոց |
| 2 | Վարդենիսի պոլիկլինիկա |
| 3 | Ճամբարակի հիվանդանոց |
| 4 | Ճամբարակի պոլիկլինիկա |

18/13

| | | |
|---|---|---|
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011 թ. հունվարի 1-ից մինչև 2011 թ. դեկտեմբերի 31-ը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Նախատեսվում է հումանիտար բեռների (բուժ պարագաների) ներմուծում և անհատույց բաշխում 600000 ԱՄՆ դոլար արժողությամբ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 2011թ.-ի ընթացքում ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 600,000 ԱՄՆ դոլար արժողությամբ բուժ. պարագաների բաշխում: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը ներառնում են պահեստի վարձակալման ծախսերը` 13,200 ԱՄՆ դոլլար, որը կկազմի բյուջեի 2.2 %: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, Առողջապահության նախարարության, Շիրակի, Տավուշի, Սյունիքի, Լոռու, Գեղարքունիքի մարզպետարանների առողջապահության վարչությունների հետ: |

18/13

| | | |
|---|---|---|
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետությունը գնահատվում է մի քանի չափորոշիչներով:<br>1. Ծրագրի արդյունավետությունն ապահովելու նպատակով ՎՎ-ն կազմում է ամսեկան ներքին հաշվետվություն, ինչպես նաև եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ դոնորի համար /ծրագրային և ֆինանսական/: Իրականացվում է ծրագրի ընթացքի մոնիտորինգ և գնահատում՝ ծրագրի վերջնական փուլում:<br>2. Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի կողմից: Եռամսյա հաշվետվություններ է ներկայացվում ՀՀ Կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:ՀՀ ԿԲՕՀՀ իր հերթին իրականացնում է ծրագրի վերահսկողությունը: |

Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղի

Ծրագրի ղեկավար՝

Շաղիկ Մարուխյան.

18/13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-946-Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 3-ի N 3/3.8-2/9759-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N 4711-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N ՖԲ/ՄարտՄխ-2/5720-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N ԱԱ/3-6/2859-10 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N 01/08/3280-10 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 582500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" մբկ Հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն Գրահամ Ստրոնգ
"___" ________________ 2010 թ

Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում ՀՀ Արագածոտնի մարզի, Թալինի տարածաշրջանում:

18/11

# ԾՐԱԳԻՐ

<table>
<tr><td>1</td><td>Ծրագրի նպատակը</td><td>Ծրագրի նպատակն է օգնություն ցույց տալ Թալինի տարածաշրջանի համայնքներում բնակվող խոցելի խմբերին՝ հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, գործազուրկներին, զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին և սոցիալական ծանր պայմաններում գտնվող այլ ընտանիքներին՝ բարեգործական օգնության /հագուստ, կոշիկ, գրենական պիտույքներ, շինանյութեր, սպորտային պարագաներ, հիգիենիկ պարագաներ և այլն/ բաշխման միջոցով:</td></tr>
<tr><td>2</td><td>Ծրագրի բարեգործական որակման նպատակը</td><td>Ծրագրի բարեգործական որակման նպատակն է 580,000 ԱՄՆ դոլլար արժողությամբ հումանիտար բեռի ներմուծման հետ կապված հարկային արտոնություններ ստանալը:</td></tr>
<tr><td>3</td><td>Բարեգործը</td><td>Բարեգործական օգնությունը տրամադրվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի և Կանադայի աջակցող գրասենյակների կողմից:</td></tr>
<tr><td>4</td><td>Ծրագիրը կատարողը</td><td>Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու հանդիսացողն է Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը (հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755): Ծրագրերն իրականացվում են տեղական իշխանությունների, համայնքային նախաձեռնող /ակտիվ/ խմբերի օգնությամբ և համայնքների անդամների մասնակցությամբ:</td></tr>
<tr><td>5</td><td>Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը</td><td>Մարդասիրական բեռներով ստացված ապրանքները հիմնականում բաժանվելու են Թալինի ՏԶԾ-ում ընդգրկված հետևյալ համայնքների երեխաներին, կարիքավոր բնակիչներին, կրթական և առողջապահական հաստատություններին՝<br>Թալին քաղաք, Գյուղական համայնքներ՝ Ագարակ, Արեգ, Ակունք, Աշնակ, Արտենի, Ներքին Բազմաբերդ, Վերին Բազմաբերդ, Նոր Արթիկ, Ներքին Սասնաշեն, Վերին Սասնաշեն, Դավթաշեն, Կաքավաձոր, Կաթնաղբյուր, Իրինդ, Եղնիկ, Դաշտադեմ, Հացաշեն, Ցամաքասար, Զարինջա, Սուսեր, Մաստարա, Կարմրաշեն, Ոսկեթաս, Ձովասար, Գառնահովիտ:<br>Բացի այդ, խիստ անհրաժեշտության դեպքում ապրանքներ են բաժանվելու նաև ՏԶԾ-ում չընդգրկված Թալինի տարածաշրջանի այլ գյուղական համայնքների կարիքավոր ընտանիքների, երեխաների, կրթական ու առողջապահական հաստատությունների:<br>Ծրագրի իրականացման բնագավառը՝ սոցիալական:</td></tr>
<tr><td>6</td><td>Ծրագրի բյուջեն</td><td>
<table>
<tr><td>#</td><td>Բյուջեի նկարագրությունը</td><td>Ընդամենը ԱՄՆ դոլար</td></tr>
<tr><td>1</td><td>2</td><td>3</td></tr>
<tr><td>1</td><td>Բարեգործական օգնություն</td><td>580000</td></tr>
<tr><td>2</td><td>Տրանսպորտային ծախսեր (ՀՀ տարածքում)</td><td>2 500</td></tr>
<tr><td></td><td>Ընդամենը</td><td>582500</td></tr>
</table>
Տրանսպորտային ծախսերն իրականացվելու են Թալինի Տարածքային Զարգացման ծրագրի բյուջեի հաշվին: Բարեգործական օգնությունը տրամադրվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի, Կանադայի աջակցող գրասենյակների կողմից՝ հետևյալ արժեքով՝ 500,000ԱՄՆ դոլլար ԱՄՆ ի գրասենյակի կողմից և 80,000 ԱՄՆ դոլլար Կանադայի գրասենյակի կողմից. Եռամսյակների կտրվածքով՝ մոտավորապես 145,000 ամեն եռամսյակ:</td></tr>
<tr><td>7</td><td>Բարեգործու թյուն ստացողը</td><td>Ծրագրի շահառուների ընդհանուր թիվը կազմում է 31,530 մարդ, որից ՏԶԾ-ում ընդգրկված գյուղական համայնքներում 25,730, քաղաքային համայնքներում՝ 5800: Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղի Թալինի Տարածքային Զարգացման Ծրագիրը 2005 թ. օգոստոսից սկսած ՏԶԾ-ում ընգրկված բոլոր համայնքներում իրականացրել է հիմնական կարիքների ուսումնասիրություն համագործակցելով տեղական սոցցիալական ծառայությունների հետ /Թալինի տարածաշրջանի 36 գյուղական և 1 քաղաքային համայնքներում/: Դրա արդյունքում Թալինի ՏԶԾ-ում ընդգրկվել են 25 գյուղական համայնքներ և Թալին քաղաքը: Ծրագրի անմիջական շահառու են հանդիսանալու հովանավորության ծրագրում ընդգրկված կարիքավոր ընտանիքների 1-13 տարեկան 3060 երեխաներ: Մնացած շահառուների ընտրությունը կատարվելու է տարածաշրջանի սոցիալական ծառայության, Թալինի ՏԶԾ-ի մոնիտորների և Համայնքային ակտիվ խմբերի միջոցով՝ Վորլդ Վիժնի Հայաստանի Թալինի ՏԶԾ-ի կողմից մշակված ընտանիքների կարիքների գնահատման հարցաթերթիկի հիման վրա: Սոցիալապես անապահով քաղաքացիներին բարեգործական օգնություն է տրվելու նաև տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա:<br><u>Աղյուսակ 1</u>
<table>
<tr><td>#</td><td>Համայնք</td><td>Շահառուների թիվը</td><td>Այդ թվում՝ 1-13 տարեկան երեխաներ</td></tr>
<tr><td>1</td><td>2</td><td>3</td><td>4</td></tr>
<tr><td>1</td><td>Թալին</td><td>5800</td><td>578</td></tr>
<tr><td>2</td><td>Ագարակավան</td><td>1094</td><td>160</td></tr>
<tr><td>3</td><td>Թաթուլ</td><td>1000</td><td>69</td></tr>
<tr><td>4</td><td>Ակունք</td><td>720</td><td>50</td></tr>
<tr><td>5</td><td>Աշնակ</td><td>1450</td><td>173</td></tr>
<tr><td>6</td><td>Արտենի</td><td>3800</td><td>500</td></tr>
<tr><td>7</td><td>Ներքին Բազմաբերդ</td><td>1600</td><td>200</td></tr>
<tr><td>8</td><td>Վերին Բազմաբերդ</td><td>332</td><td>42</td></tr>
<tr><td>9</td><td>Նոր Արթիկ</td><td>600</td><td>70</td></tr>
<tr><td>10</td><td>Ներքին Սասնաշեն</td><td>1150</td><td>150</td></tr>
<tr><td>11</td><td>Վերին Սասնաշեն</td><td>375</td><td>67</td></tr>
<tr><td>12</td><td>Դավթաշեն</td><td>920</td><td>114</td></tr>
<tr><td>13</td><td>Կաքավաձոր</td><td>1120</td><td>227</td></tr>
<tr><td>14</td><td>Կաթնաղբյուր</td><td>1536</td><td>150</td></tr>
<tr><td>15</td><td>Իրինդ</td><td>800</td><td>189</td></tr>
<tr><td>16</td><td>Եղնիկ</td><td>650</td><td>25</td></tr>
<tr><td>18</td><td>Դաշտադեմ</td><td>720</td><td>67</td></tr>
<tr><td>17</td><td>Հացաշեն</td><td>395</td><td>40</td></tr>
<tr><td>19</td><td>Ցամաքասար</td><td>515</td><td>65</td></tr>
<tr><td>20</td><td>Զարինջա</td><td>720</td><td>65</td></tr>
<tr><td>21</td><td>Սուսեր</td><td>428</td><td>45</td></tr>
<tr><td>22</td><td>Մաստարա</td><td>3000</td><td>219</td></tr>
<tr><td>23</td><td>Կարմրաշեն</td><td>1120</td><td>68</td></tr>
<tr><td>24</td><td>Ոսկեթաս</td><td>570</td><td>57</td></tr>
<tr><td>25</td><td>Ձովասար</td><td>600</td><td>78</td></tr>
<tr><td>26</td><td>Գառնահովիտ</td><td>515</td><td>60</td></tr>
<tr><td></td><td>Ընդամենը</td><td>31530</td><td>3528</td></tr>
</table></td></tr>
<tr><td>8</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>Ծրագիրը իրականացվելու է 2011 թ. հունվարի 1-ից մինչև 2011 թ. դեկտեմբերի 31-ը:</td></tr>
</table>

18/11

18/11

| | | |
|---|---|---|
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Թալինի ՏԶԾ-ի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 580 000 ԱՄՆ դոլարի արժողությամբ բարեգործական օգնության բաշխում ըստ ստորև ներկայացված համայնքների. |

| # | Համայնքը | Բնակչություն | Բարեգործական օգնության արժեքը ԱՄՆ դոլարով | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հագուստ | Կոշիկ | Դպրոց. պի-տույք | Շինա-նյութ | Մարզ. պարա-գա | Հիգիենիկ պարա-գա | Ընդամենը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Թալին | 5800 | 46724 | 29722 | 12239 | 7343 | 2448 | 5244 | 103720 |
| 2 | Ագարակ | 1094 | 8813 | 5938 | 2445 | 1467 | 490 | 1048 | 21295 |
| 3 | Արեգ | 1000 | 8056 | 5464 | 2249 | 1349 | 450 | 964 | 18532 |
| 4 | Ակունք | 720 | 5800 | 4048 | 1667 | 999 | 334 | 714 | 13666 |
| 5 | Աշնակ | 1450 | 11681 | 7738 | 3187 | 1911 | 638 | 1366 | 26730 |
| 6 | Արտենի | 3800 | 30612 | 19614 | 8077 | 4845 | 1616 | 3462 | 68774 |
| 7 | Ներքին Բազմաբերդ | 1600 | 12889 | 8496 | 3499 | 2099 | 700 | 1498 | 29412 |
| 8 | Վերին Բազմաբերդ | 332 | 2675 | 2088 | 859 | 515 | 172 | 368 | 6877 |
| 9 | Նոր Արթիկ | 600 | 4833 | 3442 | 1417 | 851 | 284 | 608 | 11522 |
| 10 | Ներքին Սասնաշեն | 1150 | 9264 | 6222 | 2563 | 1537 | 512 | 1098 | 21362 |
| 11 | Վերին Սասնաշեն | 375 | 3021 | 2306 | 949 | 569 | 190 | 406 | 7495 |
| 12 | Դավթաշեն | 920 | 7411 | 5060 | 2083 | 1249 | 416 | 892 | 17244 |
| 13 | Կաքավաձոր | 1120 | 9023 | 6070 | 2499 | 1499 | 500 | 1070 | 20822 |
| 14 | Կաթնաղբյուր | 1536 | 12374 | 8172 | 3365 | 2019 | 674 | 1442 | 28046 |
| 15 | Իրինդ | 800 | 6445 | 4454 | 1833 | 1099 | 366 | 786 | 15098 |
| 16 | Եղնիկ | 650 | 5236 | 3694 | 1521 | 913 | 304 | 652 | 12414 |
| 17 | Դաշտադեմ | 720 | 5904 | 4048 | 1667 | 999 | 334 | 714 | 13666 |
| 18 | Հացաշեն | 395 | 3182 | 2406 | 991 | 595 | 198 | 424 | 7853 |
| 19 | Ցամաքասար | 515 | 4149 | 3012 | 1241 | 745 | 248 | 532 | 10001 |
| 20 | Զարինջա | 720 | 5800 | 4048 | 1667 | 999 | 334 | 714 | 13666 |
| 21 | Սուսեր | 428 | 3448 | 2574 | 1059 | 635 | 212 | 454 | 8382 |
| 22 | Մաստարա | 3000 | 24167 | 15572 | 6411 | 3847 | 1282 | 2748 | 54460 |
| 23 | Կարմրաշեն | 1120 | 9023 | 6070 | 2499 | 1499 | 500 | 1070 | 20822 |
| 24 | Ոսկեթաս | 570 | 4592 | 3290 | 1355 | 813 | 272 | 580 | 10984 |
| 25 | Զովասար | 600 | 4833 | 3442 | 1417 | 851 | 284 | 608 | 11522 |
| 26 | Գառնահովիտ | 515 | 4149 | 3010 | 1241 | 753 | 242 | 538 | 10007 |
| | Ընդամենը | 31530 | 254000 | 170000 | 70000 | 42000 | 14000 | 30000 | 580000 |

Մարդասիրական գնության բաշխման չափերն ըստ համայնքների պլանավորվել է շահառուների քանակին համապատասխան:
Բարեգործական օգնության բաշխումը հիմնականում կատարվելու է Նոր տարվա ու Սուրբ Ծննդի, Զատիկի տոների կապակցությամբ, ամառային ճամբարի ժամանակ, երեխաների պաշտպանության օրը, սահմանափակ կարողություն ունեցող անձանց նվիրված միջոցառումներին, ինչպես նաև ըստ ծագած անհրաժեշտության:

18/11

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Մարդասիրական բեռների ընդհանուր արժեքը կազմում է 580,000 ԱՄՆ դոլար, որից հագուստ՝ 254,000 ԱՄՆ դոլար, կոշիկ՝ 170,000 ԱՄՆ դոլար, , դպրոցական պարագաներ՝ 70000 ԱՄՆ դոլար, շինանյութեր 42000 ԱՄՆ դոլար, մարզական պարագաներ՝ 14000 ԱՄՆ դոլար, հիգիենիկ պարագաներ՝ 30000 ԱՄՆ դոլար:<br>Բեռների տեղափոխումն իրականացնելու նպատակով տրանսպորտային ծառայություն մատուցող որևէ կազմակերպության կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ հետ կնքվելու է ծառայությունների մատուցման պայմանագիր: Նախատեսվում է, որ տրանսպորտային ծախսերը չեն գերազանցի 2,500 ԱՄՆ դոլարը:<br>Ապրանքները շահառուներին բաժանվելու է Վորլդ Վիժնի կողմից՝ համայնքային ակտիվ /նախաձեռնող/ խմբերի /ՀԱԽ/ և համայնքների ղեկավարների միջոցով: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը ներառում են տրանսպորտային ծախսերը՝ 2,500 ԱՄՆ դոլլար, որը կկազմի բյուջեի 0.43 %: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Թալինի Տարածքային Զարգացման Ծրագիրը համագործակցում է Թալինի տարածաշրջանում գտնվող պետական և տեղական ինքնակառավարման, ինչպես նաև ոչ պետական հասարակական, տեղական և միջազգային կազմակերպությունների և մարմինների հետ /Մարզպետարան, Թալինի քաղաքապետարան, տարածաշրջանի սոցիալական ծառայություն, համայնքների ղեկավարներ, Հայկական Կարմիր Խաչ, Մանր Ձեռնարկատիրության Զարգացման Հիմնադրամ (SEF), Հայ առաքելական եկեղեցի, դպրոցներ, մանկապարտեզներ, և այլն/:<br>Մարզպետարանի, քաղաքապետարանի և գյուղապետարանների, ինչպես նաև սոցիալական ծառայությունների հետ համագործակցությունը կայանում է նրանում, որ Վորլդ Վիժնը պարբերաբար հանդիպում է այդ կառույցների իրավասու ներկայացուցիչների հետ, իրազեկում է նրանց Թալինի ՏԶԾ-ի ծրագրերի մասին, ճշգրտում շահառուների ցուցակները, ներկայացնում է տեղեկատվություն, անհրաժեշտության դեպքում նաև հաշվետվություն կատարված աշխատանքների մասին:<br>Վորլդ Վիժնը նաև մասնակցում է հասարակական կազմակերպությունների գործունեությունը համակարգելու նպատակով մարզպետարանում հրավիրվող նիստերին: Թալինի ՏԶԾ-ի ընդհանուր կառավարումը իրականացվում է Կառավարման Խորհրդի միջոցով, որի կազմում ընդգրկված են համայնքային ակտիվ խմբերի, համայնքային և մարզային իշխանությունների, հասարակական կազմակերպությունների, և հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչներ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Համայնքներում իրականացվող ծրագրերի նկատմամբ վերահսկողություն է իրականացվում է Թալինի ՏԶԾ-ի մոնիտորների, ինչպես նաև Համայնքային Ակտիվ Խմբերի ու տեղական իշխանության ներկայացուցիչների կողմից:<br>Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև Հարկային մարմինների կողմից:<br>Հումանիտար օգնություն ստացած շահառուների վերջնական ցուցակները տրամադրվելու է սոցիալական ծառայություններին և այլ շահագրգիռ մարմիններին: Եռամսյակային հաշվետվություններ կներկայացվեն << Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղ
Ծրագրերի Ղեկավար՝

Շաղիկ Մարուխյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-945Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի N Մ-30-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի NN Մ-489-Ա, Մ-490-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Փարոս» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Փարոս» բարեգործական հիմնադրամի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N3/3.8-2/10706-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 20-ի N ՖԲ/ՄարփՄխ-1/6261-10, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 4/07.2/13030-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N ՀՔ/22/9624-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի N ԱԱ/3-6/3140-10, եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 10-ի N Մ-489-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և NN Մ-489-Ա, Մ-490-Ա որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Փարոս» բարեգործական հիմնադրամ)» N Մ-30-Ա որոշմամբ հաստատված ծրագրի՝

1) 7-րդ կետը 5-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ ենթակետով. 6) «Հայաստանի Հանրապետության բոլոր այն բուժ հաստատությունները, որոնք կհամագործակցեն մեր հիմնադրամի հետ (հիմնադրամի շահառուներին անվճար սպասարկելու համար)».

2) 11-րդ կետը «ավտոմեքենայի ծախսեր» բառերից հետո լրացնել «, գրասենյակի ավտոմեքենայի բոլոր անհրաժեշտ մասերի ներմուծում և ձեռքբերում,» բառերով:

2. Սահմանել, որ Ամերիկայի միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Փարոս» բարեգործական հիմնադրամի հասցեով, որպես մարդասիրական օգնություն ԱՄՆ-ից բա-



րերար Սեդա Ղազարյանի կողմից ուղարկված բեռը (633 տուփ, 11,116 KGS (24,507 lbs) քաշով, 157,586.00 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7,475.00 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 10-ի «Հույսի ճրագ» և «Արագիլ» ծրագրերի մասին NN Մ-489-Ա, Մ-490-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 22-ի N Մ-30-Ա որոշման խմբագրությամբ) որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

# «ՓԱՐՈՍ» Բարեգործական Հիմնադրամի կողմից ստացված կոնտեներ ZCSU2675718 բեռի բաշխման ցանկ
## 633 տեղ /արկղ/

| | | Մեծահասակների տակդիրներ (տաբատով) | Հատուկ ծածկոց (կոմբինիտ օգտագործված) 1 հատ/1տեղ | Նկարչական պարագաներ (ջրաներկեր,նկարչական պլանշետներ, վրձիններ, մատիտներ,ջնջոցներ) 8 արկղ | Երեխայի օրորոց (օգտագործված) 1 հատ/ 1 տեղ | Սահնակի կտրեր (փաթեթ 2 մասեր) 1 կոլ/ 1տեղ | Վերմակներ (ձմեռային տաք) 25 արկղ | Հիվանդի անկողնային արտաքնոց 1հատ/1տեղ | Մանկական հեծանիվ (3,5,6 և 12 տարեկանի) 4հատ/4տեղ | Հարսանեկան և երեկոյան զգեստներ 5 արկղ | Հագուստ (նոր և հնամաշ) երեխայի նոր՝ 120տուփ, տղամարդու՝52 տուփ, կանացի՝60 232 արկղ | Գրասենյակի պարագաներ 11հատ/տեղ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | Ք. Երևան | | | | | | | | | | | |
| 1. | Ֆիզ. անձեր (որոնք նամակներով, այցելությամբ դիմում են զրասենյակին՝ սոց. Անապահով, բնական աղետներից տուժված ընտանիքներ) | 3 արկղ | | 4 արկղ | 1 հատ | | 4 արկղ | 1 հատ | 2 հատ | 2 արկղ | 15 արկղ | |
| 2 | Հիմնադրամի շահառուներ (60 ընտանիք, 200 հոգի) | 3 արկղ | | | | | 3 արկղ | | | | 5 արկղ | |
| | Արմավիրի մարզ | | | | | | | | | | | |
| 3 | Պտղունք գյուղի մանկապարտեզ (65 սան) | | | 4 արկղ | | | 1 արկղ | | | | | |
| 4 | Գյուղ Դաշտ (40 ընտանիք,244 հոգի) | | | | | | 1 արկղ | | | | 5 արկղ | |
| 5 | Գյուղ Երասխահուն (70 ընտանիք, 302 հոգի) | | | | | | 1 արկղ | | | | 15 արկղ | |
| 6 | Գյուղ Այգեվան (92 ընտանիք, 310 հոգի) | | | | | | 1 արկղ | | | | 15 արկղ | |
| 7 | Գյուղ Տանձուտ (70 ընտանիք, 278 հոգի) | | | | | | 1 արկղ | | | | 12 արկղ | |
| | Արարատի մարզ | | | | | | | | | | | |
| 8 | Գյուղ Դիմիտրով (71 ընտանիք, 435 հոգի) | | | | | | 1 արկղ | | | | 12 արկղ | |
| 9 | Գյուղ Նարեկ (50 ընտանիք, 252 հոգի) | | | | | | 1 արկղ | | | | 8 արկղ | |
| 10 | Գյուղ Այգեպատ (50ընտանիք, 258 հոգի) | | | | | | 1 արկղ | | | | 8 արկղ | |
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | Սյունիքի մարզ | | | | | | | | | | | |
| 11 | Գյուղ Եղվարդ (67 ընտանիք, 256 հոգի) | | | | | | 1 արկղ | | | | 6 արկղ | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Տավուշի մարզ | | | | | | | | | | | |
| 12 | Գյուղ Սևքար (103 ընտանիք, 567 հոգի) | | | | | | 1 արկղ | | | | 20 արկղ | |
| | Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | | |
| 13 | Գյուղ Լանջաղբյուր (60 ընտանիք, 340 հոգի) | | | | | | 1 արկղ | | | | 15 արկղ | |
| 14 | Գյուղ Սեմյոնովկա (83 ընտանիք, 320 հոգի) | | | | | | 1 արկղ | | | | 12 արկղ | |
| 15 | Գյուղ Արտանիշ (93 ընտանիք, 530 հոգի) | | | | | | 1 արկղ | | | | 12 արկղ | |
| 16 | Գյուղ Կարմիրգյուղ (52 ընտանիք, 182 հոգի) | | | | | | 1 արկղ | | | | 5 արկղ | |
| | Արագածոտնի մարզ | | | | | | 1 արկղ | | | | | |
| 17 | Գյուղ Սասունիկ (40 ընտանիք, 179 հոգի) | | | | | | 1 արկղ | | | | 7 արկղ | |
| 18 | Գյուղ Քուչակ ( 131 հոգի) | | | | | | 1 արկղ | | | | 7 արկղ | |
| 19 | Գյուղ Կարին (20 ընտանիք, 88 հոգի) | | | | | | 1 արկղ | | | | 5 արկղ | |
| 20 | Գյուղ Լուսագյուղ (160 ընտանիք, 503 հոգի) | | | | | | | | | | 5 արկղ | |
| 21 | Գյուղ Ձորագլուխ (65 ընտանիք, 343 հոգի) | | | | | | | | | | 8 արկղ | |
| | Շիրակի մարզ | | | | | | | | | | | |
| 22 | Գյուղ Ջրափի (52 ընտանիք, 292 հոգի) | | | | | | 1արկղ | | | | 5 արկղ | |
| 23 | Գյուղ Աշոցք (104 ընտանիք, 346 հոգի) | | | | | | | | | | 20 արկղ | |
| 24 | Հիմնադրամի գրասենյակ | | 1 հատ | | | 2 կտոր | | | 2 հատ | 3 արկղ | 10 արկղ | 1հատ |
| 25 | Հիմնադրամի գրասենյակի ավտոմեքենա | | | | | | | | | | | |
| 26 | ՀՀ Պերինատոլոգիայի, Մանկաբարձության և Գինեկոլոգիայի Ինստիտուտ ՓԲԸ (կից ներկայացված է հայց դիմում) | | | | | | | | | | | |

| | | Խոհանոցային պարագաներ /դանակ, պատառաքաղ, բաժակ, ճաշի կաթսաներ, տնտ. պարագաներ/ 28 արկղ | Վարագույր (դահլիճի) 2 արկղ | Էլեկտրական սալյակ (1հատ), հաշմանդամի հենակներ (4 հատ), բարձեր հաշմանդամների (1 տուփ) 5 տեղ | Կտոր (հնամաշ նոր) 181 արկղ | Փականներ և գործիքներ (շենքի շինարարական) 2 արկղ | Բժշկական ուլտրաձայնային սարքավորում 1 սարք/1 տեղ | Մետաղյա դարակներ ու դարակաշարքեր 81 տեղ | Նոր կոշիկներ (13 տուփ) Գոտիներ (3 տուփ) Պայուսակներ (3 տուփ) | Նոր խաղալիք 7 արկղ | Գրասենյակային պարագաներ (թղթեր, թղթապանակներ, գրիչներ, գրասենյակային աշխատանքը կազմակերպելու համար պարագաներ) 10 արկղ/10 տեղ | Դպրոցական պարագաներ (պայուսակներ) 1 տուփ | Փոխանցման տուփ (նախատեսված Ֆորդ էքսպեդիշոր -5.4 մակնիշի մարդատար ունիվերսալ 2003թ.արտ. մեքենայի համար, ներմուծված 2007թ.) 1տեղ | Ընդամենը 1-23 սյ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | | |
| | Ք. Երևան | | | | | | | | | | | | | քանակ | գումար |
| 1. | Ֆիզ. անձեր (որոնք նամակներով, այցելությամբ դիմում են գրասենյակին՝ սոց. Անապահով, բնական աղետներից տուժված ընտանիքներ) | 5 արկղ | | 1 հատ սալյակ<br>4 հենակ<br>1 տուփ բարձեր<br>Ընդհանուր՝ 5 արկղ | 10 արկղ | | | | 1 արկղ կոշիկ | | 2 արկղ | | | 54 | 13.762 |
| 2 | Հիմնադրամի շահառուներ (60 ընտանիք, 200 հոգի) | 3 արկղ | | | 20 արկղ | | | | 1 արկղ կոշիկ<br>3 արկղ պայուսակ | | 2 արկղ | 1 տուփ | | 41 | 7867-84 |
| | Արմավիրի մարզ | | | | | | | | | | | | | | |
| 3 | Պտղունք գյուղի մանկապարտեզ (65 սան) | 1 արկղ | 2 արկղ | | | | | | | 3 արկղ | 2 արկղ | | | 13 | 2462-18 |
| 4 | Գյուղ Դաշտ (40 ընտանիք,244 հոգի) | 1 արկղ | | | | | | | 1 արկղ կոշիկ | | | | | 8 | 2712-88 |
| 5 | Գյուղ Երասխահուն (70 ընտանիք, 302 հոգի) | 1 արկղ | | | | | | | 1 արկղ կոշիկ | | | | | 18 | 7039-08 |
| 6 | Գյուղ Այգեվան (92 ընտանիք, 310 հոգի) | 1 արկղ | | | | | | | 1 արկղ կոշիկ | | | | | 18 | 7039-08 |
| 7 | Գյուղ Տանձուտ (70 ընտանիք, 278 հոգի) | 1 արկղ | | | | | | | 1 արկղ կոշիկ | | | | | 15 | 5739-28 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-944-Ա**
**քաղ. Երևան**

## «ԵՐԱԶ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏՈՎ ՀԻՎԱՆԴ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՈՒ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՈՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 15-ի N3/3.8-1/10290-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N 5125-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N ՀՔ/22/9482-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N ԱԱ/3-4/3121-10 ու Երևանի քաղաքապետի 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 02/10-25509 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է***.

1. Բարեգործական որակել «Երազ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան 0009, Բայրոնի 4, բն.4 ՀՎՀՀ՝ 01570518) իրականացվող՝ 16000000 դրամ ընդհանուր արժեքով «Շաքարային դիաբետով հիվանդ երեխաներին դեղամիջոցների, բժշկական սարքերի ու պարագաների և բժշկական ու հոգեբանական օգնության կամ հետազոտությունների նպատակով ֆինանսական միջոցների տրամադրում» ծրագիրը (կցվում է):

2. «Երազ» բարեգործական հիմնադրամին

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-



կարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԵՐԱԶ» բարեգործական հիմնադրամի

հոգաբարձուների խորհրդի կողմից

«15» նոյեմբերի 2010թ.

## ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏՈՎ ՀԻՎԱՆԴ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՈՒ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ, ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՈՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՍՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարեգործական օժանդակություն Երևանի «Մխիթար Հերացու» անվան պետական բժշկական համալսարանական թիվ 1 կլինիկական և «Մուրացան» կլինիկական հիվանդանոցներում բժշկական օգնություն ստացող շաքարային դիաբետով հիվանդ կամ էնդոկրին համակարգի այլ հիվանդություններ ունեցող, և այդ հիվանդությունների հետևանքով հաշմանդամության կարգ ունեցող, դեղորայքի, բժշկական սարքերի, հետազոտության, բուժման կամ բժշկական միջամտության անհրաժեշտություն ունեցող 0-18 տարեկան երեխաներին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի բ) ենթակետի՝ ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենքդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով: |
| 3. | Բարեգործը | Հայաստանաբնակ՝ Հարությունյանների (Միխաիլ (AK 0311593 001-ի կողմից) և Նարինե (AK 0407000 001-ի կողմից), Վահան (AK 0404444, 011-ի կողմից), Գևորգ (AH0200205, 011-ի կողմից) Հարությունյաններ), Պետրոսյանների (Գեղամ (AG 0470700 004-ի կողմից) և Արև (AK 0544887 004-ի կողմից) Պետրոսյաններ), Պողոսյանների (Միհրան Պողոսյան (AK 0240609, 001-ի կողմից)), Գալստյանների (Սերգեյ (AG 0421682 011-ի կողմից) և Տաթևիկ (AH 0373306 001-ի կողմից) Գալստյաններ) բարերար ընտանիքները: |



| | | |
|---|---|---|
| | | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ ք. Երևան, Աշտարակի խճուղի Հույսի Ավան թաղամաս վարչական շենք, ՀՎՀՀ 00068196) |
| 4. | Ծրագրի կատարողը | «ԵՐԱԶ» բարեգործական հիմնադրամ<br>(ՀՀ ք. Երևան 0009, Բայրոնի փող. 4 շ, բն. 11, ՀՎՀՀ 01570518) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան<br>• առողջապահական ոլորտ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 16 000 000 ՀՀ դրամ<br>***աղբյուրները***՝<br>- *անհատ բարերարների նվիրատվություններ և հանգանակություններ*՝<br>• Հարությունյանների բարերար ընտանիք – 4,5-5 միլիոն ՀՀ դրամ,<br>• Պետրոսյանների բարերար ընտանիք – 2,5-3 միլիոն ՀՀ դրամ,<br>• Պողոսյանների բարերար ընտանիք – 2 միլիոն ՀՀ դրամ,<br>• Գալստյանների բարերար ընտանիք – 1 միլիոն ՀՀ դրամ:<br>- *բարեգործական կազմակերպությունների նվիրաբերություններ*՝<br>• «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ - 3 150 000 ՀՀ դրամ.<br>- *բարեգործական նշանակության միջոցառումներ (համերգներ, սպորտային միջոցառումներ և այլն)* - 2-3 միլիոն ՀՀ դրամ,<br>***չափերը և ժամկետները ըստ եռամսյակների***՝<br>• 3 500 000 ՀՀ դրամը 2010 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2011 թվականի փետրվարի 28-ը.<br>• 3 500 000 ՀՀ դրամը 2011 թվականի մարտի 01-ից մինչև 2011 թվականի մայիսի 31-ը.<br>• 3 500 000 ՀՀ դրամը 2011 թվականի հունիսի 1-ից մինչև 2011 թվականի օգոստոսի 31-ը.<br>• 3 500 000 ՀՀ դրամը 2011 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2011 թվականի նոյեմբերի 30-ը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Մխիթար Հերացու» անվան պետական բժշկական համալսարանական թիվ 1 կլինիկական և «Մուրացան» կլինիկական հիվանդանոցներում բժշկական օգնություն ստացող շաքարային դիաբետով հիվանդ կամ էնդոկրին համակարգի այլ հիվանդություններ ունեցող, և այդ հիվանդությունների հետևանքով հաշմանդամության կարգ ունեցող, դեղորայքի, բժշկական սարքերի, հետազոտության, բուժման կամ բժշկական միջամտության անհրաժեշտություն ունեցող 0-18 տարեկան 200 (երկու հարյուր) երեխաներ: |

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2010 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. **Նախապատրաստական աշխատանքներ** *(12.2010թ.)* - Երևանի «Մխիթար Հերացու» անվան պետական բժշկական համալսարանական թիվ 1 կլինիկական և «Մուրացան» կլինիկական հիվանդանոցների անձնակազմերի օժանդակությամբ, հիմնադրամի ուժերով և միջոցներով, շահառուների շրջանակի որոշում (շահառուների գրանցում, ցուցակների և անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստում), շահառուների վերաբերյալ տեղեկատվական բազայի նախապատրաստում, անհրաժեշտ օգնության ծավալի գնահատում *-(300 000 ՀՀ դրամ),*<br>2. **Ձերքբերվող նյութեր** *(12.2010թ. – 11.2011թ.)* - Դեղորայքի, թեսթերի, բժշկական պարագաների և սարքերի ձեռք բերում տեղի շուկայից և պահեստավորում, հետագայում ժամանակացույցերի հիման վրա շահառուներին տրամադրելու նպատակով *-(11 600 000 ՀՀ դրամ),*<br>3. **Ընթացիկ աշխատանքներ** *(12.2010թ. – 11.2011թ.)* - Երևանի «Մխիթար Հերացու» անվան պետական բժշկական համալսարանական թիվ 1 կլինիկական և «Մուրացան» կլինիկական հիվանդանոցների անձնակազմերի հետ համագործակցությամբ պատրաստված համապատասխան ժամանակացույցերի ու ցուցակների հիման վրա շահառուներին անհրաժեշտ ընթացիկ բժշկական և լաբորատոր հետազոտությունների անցկացման կամ բժշկական միջամտության նպատակով ֆինանսական միջոցների տրամադրում - *(1 000 000 ՀՀ դրամ),*<br>4. **Նախատեսվող միջոցառումներ** *(12.2010թ. – 11.2011թ.)* - Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ շաքարային դիաբետով հիվանդ կամ հաշմանդամության կարգ ունեցող երեխաների համար բարեգործական նշանակության ժամանցային միջոցառումների կազմակերպում - *(400 000 ՀՀ դրամ),*<br>5. **Հիմնական աշխատանքներ** *(12.2010թ. – 12.2011թ.)* - Հիմնադրամի գրասենյակում կամ հիմնադրամի կողմից կազմակերպված բարեգործական նշանակության ժամանցային միջոցառումների ընթացքում, ժամանակացույցերի և ցուցակների հիման վրա, դեղորայքի, թեսթերի, բժշկական պարագաների և սարքերի անհատույց տրամադրում շահառուներին, - *(200 000 ՀՀ դրամ),*<br>6. **Եզրափակիչ աշխատանքներ** *(12.2011թ.)* - Արդյունքների ամփոփում, հաշվետվությունների պատրաստում, հոգաբարձուների խորհրդին կատարված աշխատանքների ներկայացում - *(500 000 ՀՀ դրամ),* |



| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. <u>Դեղորայք</u> - Ինսուլինային դեղամիջոցներ (Կորտեֆ, Սոլուկորտեֆ, Աճի հորմոն, Գլյուկոզայի հաբեր, Գլյուկագոն, Լանտուս, Ապիդրա, Նովոլոգ, Խումալոգ, էնդոկրին հիվանդություններով տառապող երեխաներին անհրաժեշտ այլ դեղամիջոցներ) - <u>3 000 000 ՀՀ դրամ,</u><br>2. <u>Թեսթեր</u> - Գլյուկոմետր և դրանց թեսթերը, Բետա-չեկ թեսթեր (գլյուկոզայի մակարդակը արյան մեջ որոշելու համար) - <u>5 600 000 ՀՀ դրամ,</u><br>3. <u>Բժշկական պարագաներ</u> - Ինսուլինային ներարկիչներ և ասեղներ - <u>1 000 000 ՀՀ դրամ,</u><br>4. <u>Բժշկական սարքեր</u> - CGMS – continius glucose monitoring system (գլյուկոզայի մակարդակի մոնիթորինգի շարունակական համակարգ) և պարագաներ, Բժշկական կշեռք, Նեգատոսկոպ (շաքարային դիաբետով հիվանդ երեխաների առողջական վիճակի վերահսկում) - <u>2 000 000 ՀՀ դրամ,</u><br>5. Բարեգործական նշանակության ժամանցային միջոցառումների կազմակերպում - <u>400 000 ՀՀ դրամ,</u><br>6. <u>Բժշկական և լաբորատոր հետազոտությունների անցկացում</u> (*լաբորատորիաներ՝*<br>• *Դիագնոստիկա բժշկական կենտրոն,*<br>• *Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն,*<br>• *«Նոր Մեդ» ախտորոշիչ բժշկական կենտրոն,*<br>• *«ՎԻՈԼԱ» արյան և ախտորոշման կենտրոն,*<br>• *«Դիալաբ» կլինիկական լաբորատորիա,*<br>• *«Դիագեն պլյուս» ՍՊԸ,*<br>• *«Էկոսենս» լաբորատորիա,*<br>• *«Միգմալաբ» կլինիկական ախտորոշիչ լաբորատորիա)* - <u>1 000 000 ՀՀ դրամ,</u><br>7. Աուդիտորական ծառայություններ – <u>150 000 ՀՀ դրամ,</u><br>8. Գրենական պիտույքներ և այլ գրասենյակային պարագաներ – <u>100 000 ՀՀ դրամ,</u><br>9. Ժամանակակից տեխնիկական միջոցներ – <u>400 000 ՀՀ դրամ,</u><br>10. Աշխատավարձ և գործատուի սոցիալական վճարներ - <u>1 350 000 ՀՀ դրամ</u> |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | 1. Աուդիտորական ծառայություններ – 150 000 ՀՀ դրամ<br>2. Գրենական պիտույքներ և այլ գրասենյակային պարագաներ – 100 000 ՀՀ դրամ<br>3. Ժամանակակից տեխնիկական միջոցներ – 400 000 ՀՀ դրամ<br>4. Աշխատավարձ և գործատուի սոցիալական վճարներ – 1 350 000 ՀՀ դրամ<br>Ընդհանուր՝ 2 000 000 ՀՀ դրամ (ծրագրի բյուջեի 12.5%) |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | 1. ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով,<br>2. ՀՀ առողջապահության նախարարություն,<br>3. Երևանի քաղաքապետարան,<br>4. Այլ կազմակերպություններ՝<br>• *Երևանի «Միխիթար Հերացու» անվան պետական բժշկական համալսարանական թիվ 1 կլինիկական հիվանդանոց,*<br>• *Երևանի «Մխիթար Հերացու» անվան պետական բժշկական համալսարանական «Մուրացան» կլինիկական հիվանդանոց,*<br>• *«Նոր Մեդ» բժշկական կենտրոն:* |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվությունների ներկայացում՝<br>• ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով,<br>• «ԵՐԱԶ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ,<br>• ՀՀ առողջապահության նախարարություն:<br>Ծրագրի թափանցիկությունն ապահովող այլ միջոցառումներ՝<br>• զանգվածային լրատվության միջոցներում ծրագրի ընթացքի և կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկությունների և հաշվետվությունների հրապարակում,<br>• ինտերնետային կայքի (-երի) միջոցով տեղեկությունների հրապարակում: |

Կազմեց՝ «ԵՐԱԶ» ԲՀ տնօրեն Ա. Անտոնյանը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-943-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-642-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետության տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրա-գրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր)

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N ՀՔ/9289-10 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 14-ի N 3/3.8-2/10219-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի N ԱԱ/3-6/3138-10 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հասցեով Ամստերդամից ստացված դեղերը (153 տեղ, 1962 կգ ընդհանուր քաշով, 337808.23 ԱՄՆ-ի դոլար արժեքով, տրանսպորտային ծախսերը կազմել են 6729.66 եվրո, ապահովագրությունը՝ 2026.85 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» մ/տ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-642-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-942-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-887-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-1/10390-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N ԱԱ/3-4/3193-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 12-ի «Աջակցություն «Փրկություն» հաշմանդամ երեխաների երիտասարդների կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության Մտավոր խնդիրներ ունեցող երեխաների և երիտասարդների ցերեկային խնամքի կենտրոնին» ծրագրի մասին» N Մ 887-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-903-Ա, 2010 թվականի հունվարի 22-ի N Մ-21-Ա և փետրվարի 12-ի N Մ-55-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Ֆուչիկի 1ա, ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի հոկտեմբերի 17-ին կնքված՝ N 290180 պայմանագրում



նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 300000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Աբովյան 66 ա, ՀՎՀՀ՝ 01555351) 2006 թվականի հունիսի 1-ին կնքված N 101 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 174000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՀՁ» ՓԲԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Սարյան 22, ՀՎՀՀ՝ 02500052) 2004 թվականի մարտի 23-ին կնքված՝ N 010192633 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 480000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Չարենցի 141 ա, ՀՎՀՀ՝ 00046317) 2008 թվականի հունվարի 25-ին կնքված N Ա-018.01.08.6080 պայմանագրում (2010 թվականի դեկտեմբերի 6-ին կնքված համաձայնագիր) նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 1309000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-941-Ա**
**քաղ. Երևան**

# «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 6-ի N 3/3.8-1/9824-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N 4714-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N ՖԲ/ՄարփՄխ-2/5716-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 3-ի N ԱԱ/3-4/2916-10 և Երևանի քաղաքապետարանի 2010 թվականի դեկտեմբերի 3-ի N 02/34-24570h եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 2 մլն ԱՄՆ-ի դոլարին դրամ ընդհանուր արժողությամբ «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագիրը (կցվում է):

2. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-

ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

*Դիակոնիա բարեգործական հիմնադրամի*

*տնօրեն Բ. Ջամբազյանի կողմից*

«09»-ը դեկտեմբերի 2010թ.

# «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարեգործական/ սննդի հատկացում, բժշկական միջամտություն, ուսման վարձի հատկացում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային արտոնություններից օգտվելը |
| 3. | Բարեգործը | Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմադրամ |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ, ՀՎՀՀ 00068196, ք. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | 1. ք. Երևան<br>2. Արագածոտնի մարզ<br>3. Արարատի մարզ<br>4. Կոտայքի մարզ<br>5. Գեղարքունիքի մարզ<br>6. Տավուշի մարզ<br>7. Լոռու մարզ<br>8. Արմավիրի մարզ |
| 6. | Ծրագրի բյուջեն 2011թ-ի համար | 2 000 000/երկու միլիոն / ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով |
| 7. | Բարեգործություն ստացողը | 4980 շահառու՝ սոցիալապես անապահով ընտանիքներից, որոնց ընտրությունը կատարվում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, վարչական շրջանների սոցիալական բաժինների կողմից, քաղաքապետարանի կողմից |

18/14

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011թ. հունվարի 1-ից մինչև 2014թ.-ի հունվարի 1-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ***Ամենամսյա սննդի հատկացում***<br><br>*<u>ք. Երևան</u>* – 3 448 շահառու<br><br>Նախատեսվում է 982 473 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br><br>*<u>Արագածոտնի մարզ՝</u>* **- 94 շահառու**<br><br>Համայնքներ՝ ք. Թալին -94 երեխա<br>Այս մարզում նախատեսվում է 26 784 ԱՄՆ դոլարին համարժեք սննդի հատկացում:<br><br>*<u>Արարատի մարզ՝</u>* **- 109 շահառու**<br><br>Համայնքներ՝ ք. Արտաշատ -20 երեխա, ք. Վեդի- 19 երեխա, գ. Գետազատ- 70 երեխա<br>Այս մարզում նախատեսվում է 31 058 ԱՄՆ դոլարին համարժեք սննդի հատկացում:<br><br>*<u>Կոտայքի մարզ՝</u>* **- 95 շահառու**<br><br>ք. Չարենցավան-25 երեխա, գ.Սևաբերդ -41 երեխա, գ. Ջրաղբյուր-29 երեխա,<br>Նախատեսվում է 27 069 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br><br>*<u>Գեղարքունիքի մարզ՝</u>* **- 1001 շահառու**<br><br>Համայնքներ՝ ք. Գավառ-67 երեխա, գ. Գետիկ-84 երեխա, գ. Մարտունի-95 երեխա, գ. Այգուտ-210 երեխա, գ. Մեշակենդ-29 երեխա, գ. Ջրավանք- 41 երեխա, գ. Դպրաբակ-90 երեխա, գ. Կալավան-226երեխա, գ. Վահան-267 երեխա, գ. Բարեպատ -8 երեխա, գ. Թթուջուր -84 երեխա<br>Նախատեսվում է 285 225 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում<br><br>*<u>Տավուշի մարզ՝</u>* **- 63 շահառու**<br><br>Համայնքներ՝ ք. Իջևան- 44 երեխա, ք. Դիլիջան -19 երեխա<br>Նախատեսվում է 17 951 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br><br>*<u>Լոռու մարզ՝</u>* - 58 շահառու<br><br>ք. Վանաձոր – 58 երեխա<br>Նախատեսվում է 16 527 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում: |

18/21

| | | |
|---|---|---|
| | | ***Արմավիրի մարզ՝*** **- 52 շահառու**<br><br>գ. Արտաշար – 52 երեխա:<br><br>Նախատեսվում է 14 817 դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br><br>1. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն -30 շահառու<br>2. Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարություն -30 շահառու<br><br>Նախատեսվում է 22 795 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում: |
| 10. | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | 1. ***Սննդի ձեռք բերում՝*** 1 424 700 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի տոմատի, ձեթի, բրնձի, շաքարավազի, հնդկաձավարի, ալյուրի, կարագի և պարենային այլ ապրանքների ձեռք բերում և ներմուծում<br>2. ***Ապրանքի ներմուծում՝*** 100 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի բժշկական գործիքների, բժշկական սարքավորումների, օրացույցների և բացիկների, ատամնաբուժական աթոռների, արհեստագործական գործիքների, խաղալիքների ներմուծում և ձեռք բերում<br>3. ***Բուժ. օգնություն ստանալու միջամտություն՝*** 134 110 ԱՄՆ դոլարի համարժեք դրամի չափով, (հիմնադրամի սոցիալապես անապահով այն շահառուներին, ովքեր կդիմեն բժշկական օգնություն ստանալու, դեղորայքի գումարի տրամադրման, վիրահատման գումարի հատկացման, տարբեր տեսակի բժշկական միջամտությունների խնդրանքով, «Հույսի ավան» թաղամասում գործող ատամնաբուժարանին հատկացվող բուժանյութերի գնում, ըստ որում մինչև 10 տարեկան երեխաները ծառայություններից օգտվում են անվճար):<br>4. ***Ուսման վարձի հատկացում՝*** 41 190 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի այն շահառուներին, ովքեր կդիմեն ուսման վարձ հատկացնելու խնդրանքով |
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Կազմակերպական ծախսերը՝ 300 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, որը կազմում է բյուջեի 15 %:<br>1. Աուդիտորական ծառայություն՝ 2 739 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>2. Աշխատավարձ՝ 280 687 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>3. Վառելանյութ՝ 4 657 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>4. Էլեկտրոէներգիայի վարձ՝ 2 973 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>5. Ջրի վարձ՝ 1000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>6. Գազի վարձ՝ 2 192 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>7. Հեռախոսավարձ և կապ՝ 2 465 ԱՄՆ դոլ արին համարժեք դրամ<br>8. Տնտեսական ծախս՝ 3 287 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ** | 1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի<br>2. Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության<br>3. Երևանի քաղաքապետարանի<br>4. Թաղապետարանների և մարզերի սոցիալական ծառայությունների հետ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ - 940 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N Մ-771-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 15-ի N 3/3.8-1/10292-10 և Հայաստանի անրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 16 -ի N ԱԱ/3-4/3123-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից իրականացվող«Տաթևի վերածնունդ» ծրագրի մասին» N Մ-771-Ա որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «268 930 615 դրամի չափով» բառերը փոխարինել «299 123 090 դրամի չափով» բառերով.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-939-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-90-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N ՎՊ/9175-10 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N 3/3.8-1/10061-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 10-ի NԱԱ/3-4/3037-10 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին N Մ-90-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սմարթլայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝01548908) 2010 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված՝ «Համակարգչային և պատճենահանման սարքավորումների գնման» N ՊԱՊՁԲ-10/5-ԱՆԳՀ-03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քարթրիջի ձեռքբերում՝ 241667 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

*ՆԱԽԱԳԱՀ* *Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ- 938-Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-2/10385-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N ՀՔ/22/9623-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի N ԱԱ/3-6/3139-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Բելգիայի ՆԱՖ ասոցիացիայի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված լաբորատոր ախտորոշիչ նյութերը (1 տեղ, 0.8 կգ ընդհանուր քաշով, 2066.44 եվրո արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 47.6 եվրո, ՄՓԵւՍԱՓԱՄ ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առաջնային պահպանմանը և բժշկասոցիալական ծրագրերի զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ- 937 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N 3/3.8-210047/-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 14-ի N ՀՔ/22/9393-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N ԱԱ/3-6/3028-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Վաշինգտոնի հայ-ամերիկյան առողջապահական ասոցիացիայի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ուղարկված դեղորայքի և բժշկական պարագաների (14 տեղ, 183 կգ ընդհանուր քաշով, 2138.25 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 685.08 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին հանձնելու ծրագիրը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ - 936 - Ա
քաղ. Երևան

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N 3/3.8-1/10060-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 14-ի N 4974-10, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N ԳԱ/10.2/5705-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N ԱԱ/3-43036-10 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 13-ի N 01/06/3668-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 49524500 դրամ ընդհանուր արժողությամբ «Տավուշի մարզի անասնաբուծության զարգացում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՔԱՐԴ ԱգրոՍերվիս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555961) 2010 թվականի հունիսի 17-ին կնքված N ԿՄ-0610 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված աշխատանքների աշխատանքների իրականացում՝ 3624500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

« 06» դեկտեմբերի 2010թ.

# « ՀՀ Տավուշի մարզի անասնաբուծության զարգացում »

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Զարգացնել Տավուշի մարզում անասնաբուծությունը: Ապահովել անվճար հիմունքներով 11 շահառու գյուղերից հատուկ հանձնաժողովի կողմից ընտրված 50 գյուղացիներին (մեկական)շվեյցարական Ֆլեգվի ցեղի էգ մատղաշ կովերով (ընդամենը՝ 50 գլուխ) /համապատասխան հաշվետվությունը կցվում է/: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |

| | | |
|---|---|---|
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ, գյուղատնտեսության բնագավառ (անասնաբուծություն) |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 49.524.500,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Տավուշի մարզի գյուղացիները |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2010թ հունիսի 17 -ից մինչեւ 2011թ. դեկտեմբերի 30-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Շվեյցարական կովերի գնում և ներմուծում՝ 45.900.000,00 ՀՀ դրամ:<br><br>Արհեստական սերմնավորման գործընթացի կազմակերպում՝ 500.000,00 ՀՀ դրամ:<br><br>Կենդանիների խնամքի ուսուցում և մոնիտորինգ՝ 1.000.000,00 ՀՀ դրամ:<br><br>Հանձնակատարի միջնորդավճար՝ 2.124.500,00 ՀՀ դրամ: |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 50 գլուխ շվեյցարական Ֆլեգվի ցեղի էգ մատղաշ 12-14 ամսեկան կովերի գնում և ներմուծում՝ 45.900.000,00 ՀՀ դրամ (Հարկային և մաքսային արտոնություններ չենք ակնկալում):<br><br>«ՔԱՐԴ ԱգրոՍերվիս» ՓԲԸ-ի կողմից՝<br><br>Արհեստական սերմնավորման գործընթացի կազմակերպում՝ |



| | | |
|---|---|---|
| | | 500.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի,<br><br>Կենդանիների խնամքի ուսուցում և մոնիտորինգ՝ 1.000.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«ՔԱՐԴ ԱգրոՍերվիս» ՓԲԸ-ի ծառայությունների համար միջնորդավճար՝ 2.124.500,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ - 935 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՍԻ. Օ. ԷՅ. ԷՖ.» ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱ-ԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N 3/3.8-1/10046-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N 4843-10, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N ԳԱ/04.1/5642-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 8-ի N ԱԱ/3-4/2993-10, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 01/08/3350-10 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N 01/04.2/3248-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Սի. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 3000000 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագիրը (կցվում է):

2. «Սի. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-

ման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի ու Արմավիրի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Սի.Օ.էյ.էֆ. Մանուկների բարեգործական հիմնադրամի» կողմից

17 Դեկտեմբերի 2010թ.

| ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ - ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ | | | |
|---|---|---|---|
| 1 | Ծրագրի անվանումը | | Հայաստանի Հանրապետության Գյուղական Համայնքների Զարգացում |
| 2 | Ծրագրի նպատակները | | Գյուղական վայրերի զարգացման ծրագիրը շարունակությունն է 2006թ. մարտի 28ին ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերը Համակարգող Հանձնաժողովի կողմից հաստատված N Մ-192-Ա որոշման, որի հիմնական նպատակն է պահպանել կառուցած ենթակառուցվածքները և շարունակել կառուցել և զարգացնել սոցիալ տնտեսական կյանքը Հայաստանի սահմանամերձ գյուղերում: |
| 3 | Բարեգործները և ֆինանսավորման աղբյուրները | | Children of Armenia Fund (COAF) New-York USA: |
| 4 | Ծրագրի կատարողը | | «Սի.Օ.էյ.էֆ. Մանուկների բարեգործական հիմնադրամ» ՀՀ, ք. Երևան 0001,Հյուսիսային պողոտա 1-ին շենք, 8-րդ հարկ, 24 սենյակ, ՀՎՀՀ 02569972, «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/հ 15700 10241550100, |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը | | ՀՀ Արմավիր մարզի Լեռնագոգ, Դալարիկ, Արգինա, Մյասնիկյան, Քարակերտ, Շենիկ, Երվանդաշատ, Բաղրամյան, Հուշակերտ գյուղերը և Արագածոտնի մարզի Արտենի և Արագածավան գյուղերը: |
| | Ծրագրի բյուջեն | | Ծրագրի Բյուջեն 3 (երեք) տարիների համար կազմում է 3.000.000 (երեք միլիոն) ԱՄՆ դոլլար:<br>01.01.2011 - 31.12.2011թթ տարվա համար նախատեսված է 800.000 (ութ հարյուր հազար) ԱՄՆ դոլլար:<br>01.01.2012 - 31.12.2012 թթ տարվա համար նախատեսված է 1.000.000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլլար:<br>01.01.2013 - 31.12.2013 թթ տարվա համար նախատեսված է 1.200.000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլլար: |
| | | 1 | Տնտեսական - 155.000 (Մեկ հարյուր հիսունհինգ հազար) ԱՄՆ դոլար |
| | | 1 | Հաջող բիզնես - 7.000 ԱՄՆ դոլար |

094/31253
28.12.10.

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | 2 | ՓՄՁ զարգացման ֆոնդ - 40.000 ԱՄՆ դոլար |
| | | | 3 | Մեքենատրակտորային պարկ - 65.000 ԱՄՆ դոլար |
| | | | 4 | Արվեստի կենտրոնի զարգացում 21.000 ԱՄՆ դոլար |
| | | | 5 | Աշխատավարձ և հարկեր - 22.000 ԱՄՆ դոլար |
| | | 2 | | **Ենթակառուցվածքներ - 200.000 (երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլար** |
| | | | 1 | Շինարարական աշխատանքներ - 200.000 ԱՄՆ դոլար |
| | | 3 | | **Կրթական - 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ԱՄՆ դոլար** |
| | | | 1 | Ամառային ճամբար - 30.000 ԱՄՆ դոլար |
| | | | 2 | Ուսուցիչների մասնագիտական զարգացում – 30,000 ԱՄՆ դոլար |
| | | | 3 | Արտադասարանական խմբակներ - 50,000 ԱՄՆ դոլար |
| 6 | Ծրագրի բյուջեն համառոտ ըստ ծրագրերի 01.01.2011-31.12.2011թթ ժամանակահատվածի համար: *Համայնքների բնակիչներին մատուցվող բոլոր ծառայությունները լինելու են ԱՆՎՃԱՐ* | | 4 | Դպրոցների տեխնիկական հագեցում - 10, 000 ԱՄՆ դոլար |
| | | | 5 | Սովորողների համար ուսումնական էքսկուրսիաների, այցերի, միջոցառումների կազմակերպում - 10000 ԱՄՆ դոլար |
| | | | 6 | Աշխատավարձ և հարկեր - 20000 ԱՄՆ դոլար |
| | | 4 | | **Առողջապահական - 105.000 (մեկ հարյուր հինգ հազար) ԱՄՆ դոլար** |
| | | | 1 | Բժիշկների, բուժքույրերի մասնագիտական զարգացման ծրագրեր - 40, 000 ԱՄՆ դոլար |
| | | | 2 | Դեղորայքի, սարքավորումների տրամադրում - 65.000 ԱՄՆ դոլար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 5 | | Երեխայի և ընտանիքի աջակցություն - 30.000 (երեսուն հազար) ԱՄՆ դոլար |
| | | | 1 | Սոցիալ-հոգեբանական ծառայությունների մատուցում 13,000 ԱՄՆ դոլար |
| | | | 2 | Աշխատավարձ և հարկեր– 12,000 ԱՄՆ դոլար |
| | | | 3 | Տրանսպորտային ծախսեր - 5000 ԱՄՆ դոլար |
| | | 6 | | Կազմակերպչական ծախսեր - 160.000 (Մեկ հարյուր վաթսուն հազար) ԱՄՆ դոլար |
| | | | 1 | Գրասենյակի վարձակալություն – 50,000 ԱՄՆ դոլար |
| | | | 2 | Աուդիտ, իրավաբանական ծառայություններ - 15,000ԱՄՆ դոլար |
| | | | 3 | Գրասենյակային ծախսեր – 10,000 ԱՄՆ դոլար |
| | | | 4 | PR ծախսեր – 20,000 ԱՄՆ դոլար |
| | | | 5 | Աշխատավարձ և հարկեր - 65,000ԱՄՆ դոլար |
| 7 | Բարեգործություն ստացողը | | | ՀՀ Արմավիր մարզի Լեռնագոգ, Դալարիկ, Մյասնիկյան Քարակերտ, Շենիկ, Երվանդաշատ, Բաղրամյան, Հուշակերտ համայնքների և Արագածոտնի մարզի Արտենի և Արագածավան համայնքների երեխաները և նրանց ընտանիքի անդամները, կրթական և բժշկական հաստատությունները, տարածքային ինքնակառավարման մարմինները և նրանց կից գործող սոցիալ-տնտեսական ծառայություն մատուղող կազմակերպությունները: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | | | 01.01.2011թ. - 31.12.2013թ.: |
| 9 | Միջոցառումները (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | | | Միջոցառումները ըստ փուլերի յուրաքանչյուր տարվա կտրվածքով կներկայացվի մանրամասն բյուջե յուրաքանչյուր տարվա դեկտեմբերին ամսին `<br>01.01.2012-31.12.2012թթ.<br>01.01.2013-31.12.2011 թթ. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10 | Ձեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | | | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել սննդամթերք, շինանյութ, սանտեխնիկա, կահույք, գրասենյակային պիտույքներ, համակարգչային տեխնիկա, նյութեր: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կնքել պայմանագրեր կապալառուների հետ՝ նախագծային, շինարարական, հսկողական աշխատանքների կատարման համար, կրթական, առողջապահական, հետազոտական, սոցիալական ծրագրերի իրականացման համար, փորձագետների մասնագիտական վերահսկողական, ուսուցողական ծառայությունների: Մատակարարները և կապալառուները կընտրվեն մրցութային կարգով: Արտերկրից բարեգործական բեռների ներմուծում: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | | | Ծրագրի կազմակերպչական ծախսերը 2012 և 2013 թթ -ի համար կներկայացվեն յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի ամսին: |
| | | | | Ծրագրի իրականացման հետ կապված ծախսերը 01.01.2011-31.12.2011 թթ կտրվածքով՝ Կազմակերպչական ծախսեր - 160.000 (Մեկ հարյուր վաթսուն հազար) ԱՄՆ դոլար |
| | | | 1 | Գրասենյակի վարձակալություն – 50,000 ԱՄՆ դոլար |
| | | | 2 | Աուդիտ, իրավաբանական ծառայություններ - 15,000ԱՄՆ դոլար |
| | | | 3 | Գրասենյակային ծախսեր – 10,000 ԱՄՆ դոլար |
| | | | 4 | PR ծախսեր – 20,000 ԱՄՆ դոլար |
| | | | 5 | Աշխատավարձ և հարկեր - 65,000ԱՄՆ դոլար |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ | | | Նախատեսվում է համագործակցել ՀՀ նախարարությունների, մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | | | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է ԱՄՆ Children of Armenia Fund (COAF) բարեգործական հիմնադրամի և ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ներկայացուցիչների կողմից: |

«Սի.Օ.էյ.էֆ. Մանուկների բարեգործական հիմնադրամի» գործադիր տնօրեն

Սերոբ Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-934-Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 3-ի N 3/3.8-2/9770-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N 4701-10, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի նոյեմբերի 30-ի N 03/07.2/12394 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N ԱԱ/3-4/2917-10 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 30500000 դրամ ընդհանուր արժողությամբ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանի հովանավորության» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով



Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն՝ Գրահամ Սթրոնգ
23 դեկտեմբեր, 2010թ

## «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի Հայաստանի Հովանավորության Ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Երեխաների հովանավորության ծրագրի հիմնական նպատակն է ստեղծել բարեկեցիկ միջավայր երեխաների համար՝ համայնքային զարգացման ծրագրեր իրականացնելու միջոցով, որում մեծ դեր ունի երեխաների և նրանց հովանավորների միջև սերտ նամակագրությունը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակն է հարկային արտոնություններ ստանալ փոստային աշխատանքների համար նամակագրական կապ հաստատելիս: |
| 3 | Բարեգործը | Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Թայվանի և Կանադայի աջակցող գրասենյակները: |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագրի անմիջական կազմակերպողը, իրականացնողը և պատվիրատուն հանդիսանում է Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը (հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755): |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրն է հանդիսանում Վորլդ Վիժն Հայաստանի Երևանի, Գյումրու, Տավուշի, Վարդենիսի, Գավառի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված 191 համայնքները (համայնքների ցանկը կցվում է): Ծրագրի բնագավառը՝ սոցիալական: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 30,500,000 ՀՀ դրամ, որի ֆինանսավորումը կատարվում է Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Թայվանի և Կանադայի աջակցող գրասենյակների կողմից: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում Վորլդ Վիժն Հայաստանի Երևանի, Գյումրու, Տավուշի, Վարդենիսի, Գավառի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված 191 համայնքներում բնակվող 29,910 երեխաներ:<br>Երեխաների տվյալների հավաքագրման ժամանակ կնքվում է երկկողմանի համաձայնագիր, որը վկայում է տվյալ երեխայի ծնողի / քանի որ հիմնականում երեխաները տարիքով փոքր են/ համաձայնության մասին՝ընդգրկելով այնպիսի ծրագրերում, որոնք հետագայում <Վորլդ Վիժն> կազմակերպությունը պետք է իրականացնի տվյալ համայնքում |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրն իրականացվելու է 2011 թ. հունվարի 01-ից մինչև 2011 թ. դեկտեմբերի 31-ը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի նպատակին հասնելու համար սերտ նամակագրական կապ է հաստատվում 191 համայնքներում բնակվող 29,910 երեխաների և Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Թայվանի և Կանադայի անհատ հովանավորների միջև: Արդյունքում Հայաստանի երեխաների համար ստեղծվում են հնարավորություններ շփվելու և ճանաչելու այլ երկրներում ապրող մարդկանց, ծանոթանալու նրանց մշակույթին և սովորույթներին: Իսկ հովանավորների համար ստեղծվում են հնարավորություններ ֆինանսական ներդրումներ ունենալ այդ երեխաների բնակության համայնքներում զարգացման ծրագրերի իրականացման համար: Վորլդ Վիժն-ի հովանավորության ծրագրի մեխանիզմը հանդիսանում է ոչ թե անհատական օգնություններ անհատ երեխաներին, այլ հովանավորներից ստացված ֆինանսական ռեսուրսների միավորումը համայնքային զարգացման ծրագրերի իրականացման համար, որից կօգտվեն ոչ միայն երեխաները, ում անունով հովանավորները գումարներ են հատկացնում, այլև համայնքի բոլոր երեխաները: Հովանավորների կողմից ֆինանսավորված համայնքային ծրագրերի վերաբերյալ տեղեկություններ հովանավորները ստանում են երեխաների կողմից ուղարկված նամակներից, ինչպես նաև երեխաների կողմից լրացվող տարեկան հաշվետվություններից: Այդ միջոցառումները իրականացնելու համար ծախսվում է տարեկան 30,500,000 ՀՀ դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Հովանավորության ծրագիրը ներառում է հետևյալ աշխատանքները. |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր ներկայացված ծրագրով նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման շրջանակներում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է գյուղական և քաղաքային տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչպես նաև 191 համայնքներում գործող դպրոցների և մանկապարտեզների հետ: |

Ծրագրի բյուջե (row 6):

| Ծախսերի ուղղությունը | Չափը/ ՀՀ դրամ | Կատարվելիք ծախսերի ժամկետը |
|---|---|---|
| Փոստային ծառայություն՝ | 30,500,000 | 01.01.11-31.12.11 |
| Ընդամենը՝ | 30,500,000 | |

Row 10, հովանավորության ծրագրի աշխատանքները:

| գործողություն | ժամկետ | գումար/ ՀՀ դրամ |
|---|---|---|
| Պայմանագրի կնքում “Հայփոստ” ՓԲԸ կազմակերպության հետ փոստային ծառայություն իրականացնելու համար | 01.01 2011-01.02.2011 | |
| “Հայփոստ” ՓԲԸ-ի միջոցով փոստային ծառայությունների իրականացում | 01.01.11-31.03.11 | 1,625,000 |
| | 01.04.11-30.06.11 | 19,600,000 |
| | 01.07.11-30.09.11 | 1,400,000 |
| | 01.10.11-31.12.11 | 7,875,000 |
| Ընդամենը | | 30,500,000 |

| | | |
|---|---|---|
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի անմիջական վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի հայաստանյան մասնաճյուղի Տարածքային Զարգացման Ծրագրերի գրասենյակների աշխատակիցների կողմից, ինչպես նաև Վորլդ Վիժն-ի երևանյան գրասենյակի Հովանավորության բաժնի մասնագետների կողմից:<br>Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ-ի Հայաստանյան Մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև Հարկային մարմինների կողմից:<br>Հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

Մարլեն Մուրադյան,

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի Հայաստանյան Մասնաճյուղի
Հովանավորության բաժնի ղեկավար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-933-Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 3-ի N 3/3.8-2/9771-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 3-ի N 4738-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N ՖԲ/ՄարտՄխ-2/5717-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N ԱԱ/3-6/2861-10 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N 01/08/3277-10 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 452500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանում» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին»



Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" մբկ Հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն Գրահամ Ստրոնգ
"____" ____________ 2010 թ

Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում ՀՀ Արագածոտնի մարզի, Ապարանի տարածաշրջանում:

18/10

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է օգնություն ցույց տալ Ապարանի տարածաշրջանի համայնքներում բնակվող խոցելի խմբերին՝ հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, գործազուրկներին, զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին և սոցիալական ծանր պայմաններում գտնվող այլ ընտանիքներին՝ բարեգործական օգնության /հագուստ, կոշիկ, գրենական պիտույքներ, շինանյութեր, սպորտային պարագաներ, հիգիենիկ պարագաներ և այլն/ բաշխման միջոցով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի բարեգործական որակման նպատակն է 450,000 ԱՄՆ դոլլար արժողությամբ հումանիտար բեռի ներմուծման հետ կապված հարկային արտոնություններ ստանալը: |
| 3 | Բարեգործը | Բարեգործական օգնությունը տրամադրվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի և Կանադայի աջակցող գրասենյակների կողմից: |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու հանդիսացողն է Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը *(հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755)*: Ծրագրերն իրականացվում են տեղական իշխանությունների, համայնքային նախաձեռնող /ակտիվ/ խմբերի օգնությամբ և համայնքների անդամների մասնակցությամբ: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մարդասիրական բեռներով ստացված ապրանքները հիմնականում բաժանվելու են Ապարանի ՏԶԾ-ում ընդգրկված հետևյալ համայնքների երեխաներին, կարիքավոր բնակիչներին, կրթական և առողջապահական հաստատություններին. Ծրագրի բնագավառն Է՛ սոցիալական: Ապարան,Արագած,Ջրառատ,Հարթավան,Լուսագյուղ,Քուչակ,Շենավան,Շողակն/Նորաշեն, Վարդենիս, Եղիպատրուշ, Երնջաքափ:<br>Բացի այդ, խիստ անհրաժեշտության դեպքում ապրանքներ են բաժանվելու նաև ՏԶԾ-ում չընդգրկված Ապարանի տարածաշրջանի այլ գյուղական համայնքների կարիքավոր ընտանիքների, երեխաների, կրթական ու առողջապահական հաստատությունների:<br>Ծրագրի իրականացման բնագավառը՛ սոցիալական: |

6 | Ծրագրի բյուջեն

| # | Բյուջեի նկարագրությունը | Ընդամենը ԱՄՆ դոլար |
|---|---|---|
| *1* | *2* | *3* |
| 1 | Բարեգործական օգնություն | 450000 |
| 2 | Տրանսպորտային ծախսեր (ՀՀ տարածքում) | 2 500 |
| | ***Ընդամենը*** | ***452500*** |

Տրանսպորտային ծախսերն իրականացվելու են Ապարանի Տարածքային Զարգացման ծրագրի բյուջեի հաշվին: Բարեգործական օգնությունը տրամադրվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի, Կանադայի աջակցող գրասենյակների կողմից՝ հետևյալ արժեքով՝ 400,000ԱՄՆ գոլլար ԱՄՆ ի գրասենյակի կողմից և 50,000 ԱՄՆ դոլլար Կանադայի գրասենյակի կողմից. Եռամսյակների կտրվածքով՛ մոտավորապես 112,500 ամեն եռամսյակ:

7 | Բարեգործության ստացողը

Ծրագրի շահառուների ընդհանուր թիվը կազմում է 25318 մարդ, որից ՏԶԾ-ում ընդգրկված գյուղական համայնքներում 9,215, քաղաքային համայնքներում՝ 16,103: Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղի Ապարանի Տարածքային Զարգացման Ծրագիրը 2009 թ.

12/10

օգոստոսից սկսած ՏԶԾ-ում ընգրկված բոլոր համայնքներում իրականացրել է հիմնական կարիքների ուսումնասիրություն համագործակցելով տեղական սոցցիալական ծառայությունների հետ / Ապարանի տարածաշրջանի 8 գյուղական և 2 քաղաքային համայնքներում/: Դրա արդյունքում Թալինի ՏԶԾ-ում ընդգրկվել են 25 գյուղական համայնքներ և Թալին քաղաքը: Ծրագրի անմիջական շահառու են հանդիսանալու հովանավորության ծրագրում ընդգրկված կարիքավոր ընտանիքների 1-13 տարեկան 2531 երեխաներ: Մնացած շահառուների ընտրությունը կատարվելու է տարածաշրջանի սոցիալական ծառայության, Ապարանի ՏԶԾ-ի մոնիտորների և Համայնքային ակտիվ խմբերի միջոցով՝ Վորլդ Վիժնի Հայաստանի Ապարանի ՏԶԾ-ի կողմից մշակված ընտանիքների կարիքների գնահատման հարցաթերթիկի հիման վրա: Սոցիալապես անապահով քաղաքացիներին բարեգործական օգնություն է տրվելու նաև տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա:

Աղյուսակ 1

| *Համայնք* | *Շահառուների թիվը* | *Այդ թվում՝ 1-13 տարեկան երեխաներ* |
|---|---|---|
| *2* | *3* | *4* |
| Ապարան | 12465 | 880 |
| Արագած, | 3638 | 450 |
| Ջրառատ | 364 | 30 |
| Հարթավան | 1038 | 128 |
| Լուսագյուղ | 922 | 107 |
| Քուչակ | 2567 | 240 |
| Շենավան | 1987 | 235 |
| Շողակն/Նորաշեն | 120 | 13 |
| Վարդենիս | 758 | 92 |
| Եղիպատրուշ | 847 | 305 |
| Երնջատափ | 542 | 42 |
| ***Ընդամենը*** | 25318 | 2531 |

8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է 2011 թ. հունվարի 1-ից մինչև 2011 թ. դեկտեմբերի 31-ը:

9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը

Ապարանի ՏԶԾ-ի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 450 000 ԱՄՆ դոլարի արժողությամբ բարեգործական օգնության բաշխում ըստ ստորև ներկայացված համայնքների.

| # | Համայնքը | Բնակչությունը | Բարեգործական օգնության արժեքը ԱՄՆ դոլարով: Հագուստ | Կոշիկ | Դպրոց. պիտույք | Շինանյութ | Սպորտ. պարագա | Հիգիենիկ պարագա | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* | *9* | *10* |
| 1 | Ապարան | 12465 | 99720 | 49860 | 18698 | 24930 | 12465 | 12465 | 218138 |
| 2 | Արագած, | 3638 | 29104 | 14552 | 5457 | 5457 | 3638 | 3638 | 61846 |
| 3 | Ջրառատ | 364 | 2912 | 1456 | 546 | 546 | 364 | 364 | 6188 |

18/10

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | Հարթավան | 1038 | 8304 | 4152 | 1557 | 1557 | 1038 | 1038 | 17646 |
| 5 | Լուսագյուղ | 992 | 7936 | 3968 | 1488 | 1488 | 992 | 992 | 16864 |
| 6 | Քուչակ | 2567 | 20536 | 10268 | 3851 | 3851 | 2567 | 2567 | 43639 |
| 7 | Շենավան | 1987 | 15896 | 7948 | 2981 | 2981 | 1987 | 1987 | 33779 |
| | Շողակն/Նորաշեն | 120 | 960 | 480 | 180 | 180 | 120 | 120 | 2040 |
| | Վարդենիս | 758 | 6064 | 3032 | 1137 | 1137 | 758 | 758 | 12886 |
| | Եղիպատրուշ | 847 | 6776 | 3388 | 1271 | 1271 | 847 | 847 | 14399 |
| | Երնջատափ | 542 | 4336 | 2168 | 813 | 813 | 542 | 542 | 9214 |
| | | 25318 | 215905 | 101272 | 37977 | 44210 | 25318 | 25318 | 450000 |

Մարդասիրական գնության բաշխման չափերն ըստ համայնքների պլանավորվել է շահառուների քանակին համապատասխան:
Բարեգործական օգնության բաշխումը հիմնականում կատարվելու է Նոր տարվա ու Սուրբ Ծննդի, Զատիկի տոների կապակցությամբ, ամառային ճամբարի ժամանակ, երեխաների պաշտպանության օրը, սահմանափակ կարողություն ունեցող անձանց նվիրված միջոցառումներին, ինչպես նաև ըստ ծագած անհրաժեշտության:

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Մարդասիրական բեռների ընդհանուր արժեքը կազմում է 450,000 ԱՄՆ դոլար, որից հագուստ՝ 215,905 ԱՄՆ դոլար, կոշիկ՝ 101272 ԱՄՆ դոլար, , դպրոցական պարագաներ՝37977 ԱՄՆ դոլար, շինանյութեր 44210 ԱՄՆ դոլար, մարզական պարագաներ՝ 25318 ԱՄՆ դոլար, հիգիենիկ պարագաներ՝ 25318 ԱՄՆ դոլար:<br>Բեռների տեղափոխումն իրականացնելու նպատակով տրանսպորտային ծառայություն մատուցող որևէ կազմակերպության կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ հետ կնքվելու է ծառայությունների մատուցման պայմանագիր: Նախատեսվում է, որ տրանսպորտային ծախսերը չեն գերազանցի 2,500 ԱՄՆ դոլարը:<br>Ապրանքները շահառուներին բաժանվելու է Վորլդ Վիժնի կողմից՝ համայնքային ակտիվ /նախաձեռնող/ խմբերի /ՀԱԽ/ և համայնքների ղեկավարների միջոցով: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը ներառում են տրանսպորտային ծախսերը՝ 2,500 ԱՄՆ դոլլար, որը կկազմի բյուջեի 0.55 %: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ապարանի Տարածքային Զարգացման Ծրագիրը համագործակցում է Ապարանի տարածաշրջանում գտնվող պետական և տեղական ինքնակառավարման, ինչպես նաև ոչ պետական հասարակական, տեղական և միջազգային կազմակերպությունների և մարմինների հետ /Մարզպետարան, Ապարանի քաղաքապետարան, տարածաշրջանի սոցիալական ծառայություն, համայնքների ղեկավարներ, Հայկական Կարմիր Խաչ, Մանր Ձեռնարկատիրության Զարգացման Հիմնադրամ (SEF), Հայ առաքելական եկեղեցի, դպրոցներ, մանկապարտեզներ, և այլն/:<br>Մարզպետարանի, քաղաքապետարանի և գյուղապետարանների, ինչպես նաև սոցիալական ծառայությունների հետ համագործակցությունը կայանում է նրանում, որ Վորլդ Վիժնը պարբերաբար հանդիպում է այդ կառույցների իրավասու ներկայացուցիչների հետ, իրազեկում է նրանց Թալինի ՏԶԾ-ի ծրագրերի մասին, ճշգրտում շահառուների ցուցակները, ներկայացնում է տեղեկատվություն, անհրաժեշտության դեպքում նաև հաշվետվություն կատարված աշխատանքների մասին:<br>Վորլդ Վիժնը նաև մասնակցում է հասարակական կազմակերպությունների գործունեությունը համակարգելու նպատակով մարզպետարանում հրավիրվող նիստերին: Ապարանի ՏԶԾ-ի ընդհանուր կառավարումը իրականացվում է Կառավարման Խորհրդի միջոցով, որի կազմում ընդգրկված են համայնքային ակտիվ խմբերի, համայնքային և մարզային իշխանությունների, հասարակական կազմակերպությունների, և հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչներ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Համայնքներում իրականացվող ծրագրերի նկատմամբ վերահսկողություն է իրականացվում է Ապարանի ՏԶԾ-ի մոնիտորների, ինչպես նաև Համայնքային Ակտիվ խմբերի ու տեղական իշխանության ներկայացուցիչների կողմից:<br>Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև Հարկային մարմինների կողմից:<br>Հումանիտար օգնություն ստացած շահառուների վերջնական ցուցակները տրամադրվելու է սոցիալական ծառայություններին և այլ շահագրգիռ մարմիններին: Եռամսյակային հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

18/10

Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղի
Ծրագրեչի Ղեկավար՝

Շաղիկ Մարուխյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-932-Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 15-ի N 3/3.8-1/10304-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի նոյեմբերի 30-ի N 4624-10, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N 01/13.2/4924-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N ԱԱ/3-4/2875-10 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 5083114 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայ առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի Գավառ համայնքի կիրակնօրյա դպրոցի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դելտա-ինտեգրալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08416387) 2010 թվականի նոյեմբերի 15-ին կնքված՝ N WVA/GAV ADP/CW-11/001 պայմանագրերում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 5083114 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:



3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային-բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի տնօրեն
Գրահամ Սթրոնգ

19 նոյեմբերի 2010թ

«Հայ Առաքելական Եկեղեցու Գեղարքունյաց թեմի Գավառ համայնքի կիրակնօրյա դպրոցի մասնակի վերանորոգում»

# ԾՐԱԳԻՐ

18/8

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Գավառի տարածքային զարգացման ծրագրի կողմից իրականացվող Հայ Առաքելական Եկեղեցու Գեղարքունյաց թեմի Գավառ համայնքի կիրակնօրյա դպրոցի մասնակի վերանորոգման նպատակն է աջակցել Գեղարքունյաց թեմի կիրակնօրյա դպրոցին ունենալ վերանորոգված դասարաններ համապատասխան կրթական ծրագիր իրականացնելու համար |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք Հայաստանի Հանրապետության հարկերից, տուրքերից և այլ պարտադիր վճարումների գծով օգտվել օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ծրագիրը ֆինանսավորվում է Վորլդ Վիժն Թայվանի աջակցող գրասենյակի կողմից: |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու է հանդիսանում Վորլդ Վիժն Ինթերնեշնլ միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը *(հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755)*. |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայր է հանդիսանում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքը: Ծրագիրն իրականացվում է կրթության բնագավառում: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի **5.083.114** դրամի չափով ֆինանսավորումը կատարում է Վորլդ Վիժն Թայվանի աջակցող գրասենյակը: Նշված ֆինանսական միջոցները "Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից ստացվել են 2010 թվականի հոկտեմբեր ամսին: Նշված ֆինանսական միջոցներից նախատեսված է ծախսեր կատարել ստորև ներկայացած ուղղություններով, չափերով և ժամկետներում՝<br>*Ծախսերի ուղղությունը* — *Կատարվելիք ծախսերի Չափը* — *ժամկետը*<br>*1. Կիրակնօրյա դպրոցի մասնակի վերանորոգում* — 5.083.114 — *2010 թ. նոյեմբեր-2011 թ. փետրվար*<br>**Ընդամենը** — 5.083.114 ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագիրն իրականացվում է Վորլդ Վիժն միջազգային բարեգործական կազմակերպության կենտրոնական գրասենյակի կողմից հաստատված աշխատանքային պլանով և բյուջեով: Ծրագիրը կազմվել է՝ հաշվի առնելով Գավառի տարածքային զարգացման ծրագրի համայնքների, ինչպես նաև Գեղարքունյաց թեմի ցանկություններն ու առաջարկությունները:<br>Բարեգործություն ստացող է հանդիսանում Հայ Առաքելական Եկեղեցու Գեղարքունյաց թեմը: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2010 թ. *նոյեմբեր-2011 թ. փետրվար* ամիսներ |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Հայ Առաքելական Եկեղեցու Գեղարքունյաց թեմի Գավառ համայնքի կիրակնօրյա դպրոցում 2010 թ. *նոյեմբեր-2011 թ. փետրվար* ամիսների ընթացքում **5.083.114 ՀՀ դրամի (առանց ԱԱՀ) վերանորոգման աշխատանքների իրականացնում՝ «Դելտա Ինտեգրալ» ՍՊԸ հետ 15.11.2010 կնքված** WVA/GAV ADP/CW – 11/001 շինարարական կապալի պայմանագրին համապատասխան |
| 10 | Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման ընթացքում կատարվելու է վերանորոգման աշխատանքներ **5.083.114 ՀՀ դրամի (առանց ԱԱՀ) սահմաններում, սույն ծրագրին կից ներկայացված ծավալներով:** |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր ներկայացված ծրագրով նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է Հայ Առաքելական Եկեղեցու Գեղարքունյաց թեմի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետությունը գնահատվում է մի քանի չափորոշիչներով: Հիմնական վերահսկողությունն իրականացվում է Վորլդ Վիժն Ինթերնեշնլ միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի կողմից: Այդ նպատակով կազմակերպությունը կարող է ներգրավել ներքին խորհրդատուներ և աուդիտորներ:<br>Վորլդ Վիժն Ինթերնեշնլ միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ Ֆինանսների նախարարության, Հարկային մարմինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: |

18/8

Վորլդ Վիժն Հայաստան Վարդենիսի և Գավառի տարածքային զարգացման ծրագրերի ղեկավար՝ Հ. Սարգսյան
19.11.2010

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-931-Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՈՒՄ ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-2/10388-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 4781-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N ՖԲ/ՄարտՄխ-2/5715-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N ԱԱ/3-6/2856-10 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N 01/15/3188-10 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 722000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գավառի տարածաշրջանում» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" մբկ Հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն Գրահամ Ստրոնգ

, 2010 թ

*Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գավառի տարածաշրջանում*

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Բարեգործական օգնության բաշխում Գավառի տարածաշրջանի համայնքների կարիքավոր բնակչությանը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի բարեգործական որակման նպատակն է հումանիտար բեռի ներմուծման հետ կապված հարկային և մաքսային արտոնություններ ստանալը: |
| 3 | Բարեգործը | Բարեգործական օգնությունը տրամադրվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի աջակցող գրասենյակների կողմից: |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու է հանդիսանում Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը *(հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755)*: Ծրագրերն իրականացվում են տեղական իշխանությունների, համայնքային նախաձեռնող /ակտիվ/ խմբերի օգնությամբ և համայնքների անդամների մասնակցությամբ: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մարդասիրական բեռներով ստացված ապրանքները հիմնականում բաժանվելու են Գավառի Տարածքային Զարգացման Ծրագրի ՏԶԾ-ում ընդգրկված ներքոնշյալ համայնքների երեխաներին, կարիքավոր բնակիչներին, կրթական և առողջապահական հաստատություններին. Ծրագրի բնագավառն է՝ սոցիալական: <u>Համայնքներն են՝</u> Գավառ, Գանձակ, Սարուխան, Լանջաղբյուր, Գեղարքունիկ, Ծաղկաշեն, Հայրավանք և Բերդկունք: |
| 6 | Ծրագրի բյուջեն | |

| *#* | *Բյուջեի նկարագրությունը* | *Ընդամենը $ ԱՄՆ* |
|---|---|---|
| *1* | *2* | *3* |
| 1 | Բարեգործական օգնություն | 720,000 |
| 2 | Տրանսպորտային ծախսեր | 2000 |
| | *Ընդամենը* | 722,000 |

| | | |
|---|---|---|
| | | Տրանսպորտային ծախսերն իրականացվելու են Գավառի Տարածքային Զարգացման ծրագրի բյուջեի հաշվին: Բարեգործական օգնությունը տրամադրվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի աջակցող գրասենյակների կողմից՝ 720,000 ԱՄՆ դոլլարի արժեքով. |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուների ընդհանուր թիվը կազմում է մոտավորապես 48973 մարդ: Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղի Գավառի Տարածքային Զարգացման Ծրագիրը 2004թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներից սկսած Տեղական սոցիալական ծառայությունների հետ համատեղ իրականացրել է հիմնական կարիքների ուսումնասիրություն Գեղարքունիքի մարզի 37 համայնքներում Դրա արդյունքում Գավառի ՏԶԾ-ում ընդգրկվել են 10 գյուղական համայնքներ (համայնքների ցանկը և բնակչության թվերը ներկայացված են ստորև բերված աղյուսակում): Ծրագրի անմիջական շահառու են հանդիսանալու երեխաների հովանավորության ծրագրում ընդգրկված կարիքավոր ընտանիքների 3-10 տարեկան թվով 4100 երեխաներ: Մնացած շահառուների ընտրությունը կատարվելու է տարածաշրջանի սոցիալական ծառայության, Գավառի ՏԶԾ-ի մոնիտորների և Համայնքային ակտիվ խմբերի միջոցով՝ Վորլդ Վիժնի Գավառի ՏԶԾ-ի կողմից մշակված ընտանիքների կարիքների գնահատման հարցաթերթիկի հիման վրա: Սոցիալապես անապահով քաղաքացիներին բարեգործական օգնություն է տրվելու նաև տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Աղյուսակ 1 |

| | Համայնքը | Բնակչութ. թիվը |
|---|---|---|
| 1 | Գավառ | 25830 |
| 2 | Գանձակ | 4577 |
| 3 | Սարուխան | 8713 |
| 4 | Լանջաղբյուր | 2434 |
| 5 | Գեղարքունիք | 2108 |
| 6 | Ծաղկաշեն | 669 |
| 7 | Հայրավանք | 863 |
| 8 | Բերդկունք | 288 |
| 9 | Լճափ | 1240 |
| 10 | Ծովազարդ | 2251 |
| | | 48973 |

| | | |
|---|---|---|
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011 թ. հունվարի 1-ից մինչև 2011 թ. դեկտեմբերի 31-ը: |

**9 — Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**

2011թ.-ի ընթացքում Գավառի ՏԶԾ-ի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 720000 ԱՄՆ դոլարի արժողությամբ բարեգործական օգնության բաշխում ըստ ստորև ներկայացված համայնքների.

| # | | Բնակչ. թիվը | *Բարեգործական օգնություն, ԱՄՆ$* | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | *Հագուստ* | *Կոշիկներ* | *Գրենա կան պիտույքներ* | *Շին. նյութեր (ներ-կեր, վրձիններ)* | *Սպորտային պարագաներ (գնդակներ)* | *Հիգիենայի պարագա-ներ* | *Ընդամենը* |
| 1 | 2 | | 3 | 4 | 5 | 6 | 8 | 9 | 10 |
| 1 | Գավառ | 25830 | 206691 | 51660 | 25830 | 30996 | 25830 | 38745 | *379,752* |
| 2 | Գանձակ | 4577 | 36625 | 9154 | 4577 | 5492 | 4577 | 6866 | *67,291* |
| 3 | Սարուխան | 8713 | 69721 | 17426 | 8713 | 10456 | 8713 | 13070 | *128,099* |
| 4 | Լանջաղբյուր | 2434 | 19477 | 4868 | 2434 | 2921 | 2434 | 3651 | *35,785* |
| 5 | Գեղարքունիք | 2108 | 16868 | 4216 | 2108 | 2530 | 2108 | 3162 | *30,992* |
| 6 | Ծաղկաշեն | 669 | 5353 | 1338 | 669 | 803 | 669 | 1004 | *9,836* |
| 7 | Յայրավանք | 863 | 6906 | 1726 | 863 | 1036 | 863 | 1295 | *12,689* |
| 8 | Բերդկունք | 288 | 2305 | 576 | 288 | 346 | 288 | 432 | *4,235* |
| 9 | Լճափ | 1240 | 9922 | 2480 | 1240 | 1488 | 1240 | 1860 | *18,230* |
| 10 | Ծովազարդ | 2251 | 18012 | 4502 | 2251 | 2701 | 2251 | 3377 | *33,094* |
| 11 | Ընդամենը | 48973 | 391880 | 97946 | 48973 | 58768 | 48973 | 73460 | *720,000* |

Մարդասիրական օգնության բաշխման չափերն ըստ համայնքների պլանավորվել է շահառուների քանակին համապատասխան:

Բարեգործական օգնության բաշխումը հիմնականում կատարվելու է Նոր տարվա ու Սուրբ Ծննդի, Զատիկի տոների կապակցությամբ, ամառային ճամբարի ժամանակ, երեխաների պաշտպանության օրը, սահմանափակ կարողություն ունեցող անձանց նվիրված միջոցառումներին, ինչպես նաև ըստ ծագած անհրաժեշտության:

**10 — Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**

Մարդասիրական բեռների ընդհանուր արժեքը կազմում է 720,000 ԱՄՆ դոլար, որից հագուստ՝ 391880 ԱՄՆ դոլար, կոշիկ՝ 97946 ԱՄՆ դոլար, դպրոցական պարագաներ՝ 48973 ԱՄՆ դոլար, շինանյութ 58768 ԱՄՆ դոլար, մարզական պարագաներ՝ 48973ԱՄՆ դոլար և հիգիենիկ պարագաներ՝ 73460 ԱՄՆ դոլար:

Բեռների տեղափոխումն իրականացնելու նպատակով տրանսպորտային ծառայություն մատուցող որևէ կազմակերպության կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ հետ կնքվելու է ծառայությունների մատուցման պայմանագիր: Նախատեսվում է, որ տրանսպորտային ծախսերը չեն գերազանցի 2,000ԱՄՆ դոլարը:

Ապրանքները շահառուներին բաժանվելու է Վորլդ Վիժնի կողմից՝ համայնքային ակտիվ /նախաձեռնող/ խմբերի /ՀԱԽ/ և համայնքների ղեկավարների միջոցով:

**11 — Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը**

Անմիջականորեն շահառուների սպասմանը չուղղվող տրանսպորտային ծախսերը՝ 2,000 ԱՄՆ դոլար, կազմում են ընդհանուր բյուջեի 0,28%:

**12 — Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ**

Գավառի Տարածքային Զարգացման Ծրագիրը համագործակցում է թե Գավառի տարածաշրջաններում գտնվող պետական և տեղական ինքնակառավարման, և թե ոչ պետական հասարակական, տեղական և միջազգային կազմակերպությունների և մարմինների հետ /Մարզպետարան, քաղաքապետարան, տարածքային սոցիալական ծառայություն, Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմ, դպրոցներ, մանկապարտեզներ, և այլն/: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է սերտ համագործակցություն բազմաթիվ հաստատությունների հետ՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ ակնկալվում է համագործակցություն համայնքների հետ աշխատանքի և տեղեկությունների հավաքագրման ընթացքում, ինչպես նաև օգնության բաշխման ժամանակ: Գավառի ՏԶԾ-ն արդեն իսկ սերտորեն համագործակցում է վերոհիշյալ համայնքների հետ, համայնքներում գործում են բնակիչների կողմից ընտրված համայնքային ակտիվ խմբեր: Բարեգործական օգնության բաշխումը իրականացվելու է Գավառի ՏԶԾ աշխատակիցների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների և ակտիվ խմբի ներկայացուցիչների մասնակցությամբ, ինչը կապահովի ամբողջ գործընթացի թափանցիկությունը:

**13 — Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**

Համայնքներում իրականացվող ծրագրերի նկատմամբ վերահսկողություն է իրականացվում է Գավառի ՏԶԾ-ի մոնիտորների, ինչպես նաև Համայնքային Ակտիվ Խմբերի ու տեղական իշխանության ներկայացուցիչների կողմից:

Հիմնական վերահսկողությունն իրականացվում է Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղի կողմից: Այդ նպատակով կազմակերպությունը կարող է ներգրավել ներքին խորհրդատուներ և աուդիտորներ:

Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի, ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ինչպես նաև Հարկային մարմինների կողմից:

Հումանիտար օգնություն ստացած շահառուների վերջնական ցուցակները տրամադրվելու է սոցիալական ծառայություններին և այլ շահագրգիռ մարմիններին: Եռամսյակային հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:

Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը

Ծրագրերի Ղեկավար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-930-Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԳԱՎԱՌ ԵՎ ԼՃԱՓ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-1/10135-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 14-ի N 4973-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N ՀՔ/22/9477-10, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N 04/07.2/12843-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 13-ի N ԱԱ/3-4/3070-10 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի N 01/15/3289-10 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1866620 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ և Լճափ համայնքների երեխաների համար «Առաջին օգնություն» դասընթացի անցկացում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Հայկական կարմիր խաչի ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00006023) 2010 թվականի նոյեմբերի 12-ին կնքված՝ N WVA/ADPGAV/FY11/01 պայմանագրերում նշված գործարքը, որով



նախատեսվում է դասընթացների անցկացում՝ 1866620 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական
կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն Գրահամ Սթրոնգ

«22» Նոյեմբերի 2010թ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի Գավառ և Լճափ համայնքների երեխաների համար «Առաջին օգնություն» դասընթացի անցկացում»

## ԾՐԱԳԻՐ

18/6

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Գավառի տարածքային զարգացման ծրագրի կողմից անցկացվող «Առաջին օգնություն» դասընթացի նպատակն է բարձրացնել Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի երեխաների իրազեկությունը առաջին օգնություն ցուցաբերելիս |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք Հայաստանի Հանրապետության հարկերից, տուրքերից և այլ պարտադիր վճարումների գծով օգտվել օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ծրագիրը ֆինանսավորվում է Վորլդ Վիժն Թայվանի աջակցող գրասենյակի կողմից: |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու է հանդիսանում Վորլդ Վիժն Ինթերնեշնլ միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը *(հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755)*: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայր է հանդիսանում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ և Լճափ համայնքները: Ծրագիրն իրականացվում է կրթության բնագավառում: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի **1.866.620** դրամի չափով ֆինանսավորումը կատարում է Վորլդ Վիժն Թայվանի աջակցող գրասենյակը: Նշված ֆինանսական միջոցները "Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից ստացվել են 2010 թվականի հոկտեմբեր ամսին: Նշված ֆինանսական միջոցներից նախատեսված է ծախսեր կատարել ստորև ներկայացած ուղղություններով, չափերով և ժամկետներում՝<br><br>*<u>Ծախսերի ուղղությունը</u>* — *<u>Կատարվելիք ծախսերի ժամկետը Չափը</u>*<br>«Առաջին օգնություն» դասընթացի անցկացում յոթանասուն 10-12 տարեկան երեխաների համար — *1.866.620* — *2010թ նոյեմբեր 2011թ. ապրիլ*<br><br>Ընդամենը *1.866.620* ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագիրն իրականացվում է Վորլդ Վիժն միջազգային բարեգործական կազմակերպության կենտրոնական գրասենյակի կողմից հաստատված աշխատանքային պլանով և բյուջեով:<br>Բարեգործություն ստացող է հանդիսանում Գավառի ՏԶԾ երկու հովանավորչական համայնքներից 10-12 տարեկան 70 երեխա: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2010 նոյեմբեր և 2011 ապրիլ |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | «Առաջին օգնություն» դասընթացի անցկացում հետևյալ փուլերով՝<br>Առաջին հերթ 29.11.2010 ------- 03.12.2010 ( 3 խումբ, 10 երեխա յուրաքանչյուր խմբում Գավառ համայնքից)<br>799980 դրամ առանց ԱԱՀ<br>Երկրորդ հերթ 11.04.2011 ------- 15.04.2011(2 խումբ,10 երեխա յուրաքանչյուր խմբում Գավառ և Լճափ համայնքներից)<br>533320 դրամ առանց ԱԱՀ<br>Երրորդ հերթ 25.04.2011 -------- 29.04.2011 ( 2 խումբ,10 երեխա յուրաքանչյուր խմբում Գավառ համայնքից)<br>533320 դրամ առանց ԱԱՀ |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման ընթացքում. դասընթացներին կմասնակցեն 70 երեխա, յուրաքանչյուր երեխայի հաշվով 5 օրյա դասընթացի արժեքը կազմում է մոտ 26,667 դրամ առանց ԱԱՀ (32000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ) |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր ներկայացված ծրագրով նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է համապատասխան համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների և դպրոցների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետությունը գնահատվում է մի քանի չափորոշիչներով: Հիմնական վերահսկողությունն իրականացվում է Վորլդ Վիժն Ինթերնեշնլ միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի կողմից: Այդ նպատակով կազմակերպությունը կարող է ներգրավել ներքին խորհրդատուներ և աուդիտորներ:<br>Վորլդ Վիժն Ինթերնեշնլ միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ Ֆինանսների նախարարության, Հարկային մարմինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: |

Վորլդ Վիժն Յայաստան Վարդենիսի և Գավառի տարածքային զարգացման ծրագրերի ղեկավար — Յ. Սարգսյան
22.11.2010

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-929-Ա
քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N 3/3.8-1/9642-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի նոյեմբերի 30-ի N 4618-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի նոյեմբերի 26-ի N ՀՔ/8891-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N ԱԱ/3-4/2870-10 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Տիգրան Մեծի 51, ՀՎՀՀ՝ 02507911) իրականացվող՝ 1400000 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Առողջություն երեխաներին» ծրագիրը (կցվում է):

2. «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը



մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի մանկական ասոցիացիա»ԲՀԿ-ի
նախագահ Վարուժան Սեդրակյանի կողմից
«19»հոկտեմբերի 2010.թ.

Ա ռ ո ղ ջ ո ւ թ յ ո ւ ն  ե ր ե խ ա ն ե ր ի ն
Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության և «Հայաստանի մանկական ասոցիացիա»ԲՀԿ-ի կողմից համատեղ իրականացվող ծրագրի նպատակն է Հայաստանի և Արցախի հիվանդ և հաշմանդամ երեխաների առողջության անվճար վերականգնումը, որոնց բուժումը հնարավոր չէ իրականացնել Հայաստանում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսում ենք ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպություն, հասցեն՝ Գերմանիա, Օբեռհաուզեն, Լանտեռշբռասե 21,Դինսլակեն: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպությունը /ՀՀ, Ք. Երևան, Տիգրան Մեծի 51, ՀՎՀՀ02507911/ , Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության հետ համատեղ: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետություններում՝ առողջապահության բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի արժեքը գերմանական կողմի ֆինանսավորմամբ 1400000 եվրո է, տարեկան՝ 280000 եվրո և կազմակերպչական ծախսերը «Հայաստանի մանկական ասոցիացիա»ԲՀԿ-ի կողմից 5տրվա համար 11.100.000դրամ, տարեկան՝ 2220.000դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպություն, ք. Երևան, Տիգրան Մեծի պող.51, ՀՎՀՀ 02507911: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ-ի հունվարի 1-ից մինչև 2015թ-ի դեկտեմբերի 31-ը, 5տարի: |

2

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի 5տարվա համար նախատեսվում է 1400000եվրո: Տարեկան 280000եվրոն ծախսվում է 2 թռիչքի իրականացման – ինքնաթիռի վարձակալման վրա: Յուրաքանչյուր տարվա փետրվար և օգոստոս ամիսներին գերմանական կողմից վարձակալած ինքնաթիռով, նախապես համատեղ բուժհանձնաժողովի կողմից ընտրված երեխաները մեկնում են բուժման եվրոպական կլինիկաներ և նույն ինքնաթիռով վերադառնում են արդեն վիրահատված և բուժված երեխաները: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է երեխաներին Գերմանիա բուժման տանող և բերող ինքնաթիռի թռիչքի, վայրէջքի և վերգետնյա ծառայությունների անվճար կազմակերպում՝/բացառությամբ վառելիքի լիցքավորումը գերմանական կողմի հաշվին /: Գերմանացի բժիշկների և Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալի աշխատակիցների աշխատանքները ՀՀ-ում կազմակերպելու համար գերմանական կողմից ուղարկվող անհրաժեշտ գույքի, տրանսպորտային միջոցի, կահույքի և հումանիտար օգնության բեռների /բուժսարքավորումներ և բուժպարագաներ, որոնք նախատեսվում են ՀՀ հեռավոր շրջանների կլինիկաների համար, նշված օգնության մասին մեզ տեղեկացնում են գերմանական կլինիկաներից նվիրատվությամբ ձեռք բերելուց հետո, մի քանի ամսվա ընթացքում, որի մասին մենք հաջորդաբար տեղեկացնում ենք ՀՀ առողջապահության նախարարությանը/ պահեստավորում և մարզային ճանապարհումների իրականացում: Բուժման մեկնող հիվանդ երեխաներին և 2 ուղեկցողներին օդային տուրքի վճարից ազատում, տարեկան 2 անգամ, երեխաների թիվը փոփոխական է մինչև 15 երեխա : |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | «Արմենթելի» ՀՁ ՓԲԸ-ի կողմից հեռախոսակապի 5 տարվա համար 4800000դրամ, տարեկան՝ 960000դրամի չափով ավելացված արժեքի հարկը և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարման 5տարվա համար 1800000դրամ, տարեկան՝360000 դրամի չափով ավելացված արժեքի հարկը, «Հայռուսգազարդ»ՓԲԸ- ի կողմից բնական գազի |

| | | |
|---|---|---|
| | | մատակարարման 5 տարվա համար 4200000դրամ, տարեկան՝840000 դրամի չափով ավելացված արժեքի հարկը և «Երևան ջուր»ՓԲԸ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների համար 5տարին 300000դրամ, տարեկան՝60000դրամի չափով ավելացված արժեքի հարկը:Ընդհանուր կազմակերպչական ծախսերը 5 տարվա համար 11100000դրամ է, տարեկան՝ 2220000դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսված է համագործակցություն Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների առողջապահության նախարարությունների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-928-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՄԱՆՈՐՅԱ ՆՎԵՐՆԵՐ ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N 3/3.8-2/6918-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N 4712-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի նոյեմբերի 26-ի N ՖԲ/ՄարտՄխ-1/5621-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N ԱԱ/3-6/2887-10 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Տիգրան Մեծի 51, ՀՎՀՀ՝ 02507911) իրականացվող՝ 600000 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Ամանորյա նվերներ հայ երեխաներին» ծրագիրը (կցվում է):

2. «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:



3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Յայաստանի մանկական ասոցիացիա» ԲՅԿ.ի
նախագահ Վարդուհի Սեդրակյանի կողմից
«19»հոկտեմբերի 2010.թ.

# «Ամանորի նվերներ հայ երեխաների»
# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության և «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից համատեղ իրականացվող ծրագրի նպատակն է Հայաստանի հաշմանդամ, հիվանդ և ծնողազուրկ երեխաներին ամանորյա նվերների բաշխումը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսում ենք ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպություն, հասցեն՝ Գերմանիա, Օբեռհաուզեն, Լանտեռշտրասե 21,Դինսլակեն: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպությունը /ՀՀ, Ք. Երևան, Տիգրան Մեծի 51, ՀՎՀՀ02507911/ , Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության հետ համատեղ: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի հանրապետությունում՝ սոցիալական բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագիրը ֆինանսավորում է գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպությունը: Ծրագրի բյուջեն կազմում է տարեկան 120000եվրո և 5 տարվա համար 600000եվրո, որը ծախսվում է օդային տրանսպորտով օգնությունը Հայաստան տեղափոխման համար: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպություն, ք. Երևան, Տիգրան Մեծի պող.51, |

2

| | | |
|---|---|---|
| | | ՀՎՀՀ 02507911: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ-ի հունվարի 1-ից մինչև 2015թ-ի դեկտեմբերի 31-ը, 5տարի ժամանակով: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր ամսին գերմանական կողմից վարձակալած ինքնաթիռով առաքվում է մարդասիրական օգնության բեռներ, որոնք ուղարկվում են գերմանական ընտանիքների կողմից: Օգնությունը բաշխվում է դեկտեմբեր և հունվար ամիսներին համաձայն շահառուների ցուցակի, որը կցվում է: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ժամանող ինքնաթիռի թռիչքի, վայրէջքի և վերգետնյա ծառայությունների կազմակերպում՝/բացառությամբ վառելիքի լիցքավորումը գերմանական կողմի հաշվին /, ուղարկվող բեռների /ամանորի նվերների արկղեր, որոնք պարունակում են սնունդ /միատեսակ տուփերով և արտադրության այլուր, շաքարավազ, մակարոնեղեն, բրինձ, ոսպ, շոկոլադե սալիկներ, պահածո կոմպոտներ, կարամել, և թխվածքաբլիթներ/ , հագուստ, հիգենիկ պարագաներ, խաղալիքներ/ մաքսային ձևակերպումների իրականացում, պահեստավորում և անհատույց բաշխում: Նշված սննդամթերքի տեսականին լաբորատոր փորձաքննություն է անցնում ՀՀ ստանդարտների ազգային ինստիտուտում և ստանում է սննդամթերքի համապատասխանության հավաստագիր: Այս բոլոր ապրանքները գերմանացի ընտանիքները ձեռք են բերում կազմակերպության կողմից նշված ցուցակներով և ողջ ակցիայի և օգնության համար արժեքներ չեն սահմանում: Արկղերի քանակությունը ըստ տարիների փոփոխական է: Շահառուների ցուցակը և արկղերի 2010թ-ի քանակությունը ծրագրին կցվում է: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի հետ կապված կազմակերպական ծախսերը կատարվելու են Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի հետ կապված կազմակերպական ծախսերը օգնության տրանսպորտային ծախսերն են տարեկան 120000եվրո: |
| 12. | Համագործակցությունը պետական | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսված |

18/3

3

| | | |
|---|---|---|
| | կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | համագործակցության Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության գնահատման վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: |

«Հայաստանի մանկական ասոցացիա »ԲՀԿ-ին գերմանական «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» կազմակերպության կողմից ուղարկվող հումանիտար օգնության բաշխման ցուցակը ըստ շահառուների:

| | |
|---|---|
| 1.ՀՄԱ-ի շահառու երեխաներին | 60արկղ |
| 2.ՀՄԱ-ի վերականգնողական կենտրոն | 100արկղ |
| 3.Գյումրիի մանկական կենտրոն | 100արկղ |
| 4.Վանաձորի մանկական կենտրոն | 70արկղ |
| 5.Տաուշի մանկական կենտրոն | 50արկղ |
| 6.Սպիտակի մանկական կենտրոն | 30արկղ |
| 7.ԲՀՄ գնահատման կենտրոնի երեխաներին | 30արկղ |
| 8.թ.6 հատուկ դպրոց | 50արկղ |
| 9.թ.8հատուկ դպրոց | 50արկղ |
| 10.թ.9հատուկ դպրոց | 50արկղ |
| 11.թ.2հատուկ դպրոց | 30արկղ |
| 12.թ15 լսողության խանգարումով երեխաներ | 70արկղ |
| 13.թ.17 հենաշարժականխնդիրներովերեխաներ | 50արկղ |
| 14. Դիլիջան ք-ի հատուկ դպրոց | 50արկղ |
| 15. Սպիտակ ք-ի հատուկ դպրոց | 50արկղ |
| 16. Կապան ք-ի հատուկ դպրոց | 50արկղ |
| 17. Արմավիր ք-ի հատուկ դպրոց | 50արկղ |
| 18.Գավառի հատուկ դպրոց | 50արկղ |
| 19.Երեխաների «հույսիս»-ի կազմ. | 50արկղ |
| 20.«Նայիրի» հաշմանդամ երեխ. միություն | 50արկղ |
| 21. «Արփի» հաշմանդամ երեխ. միություն | 50արկղ |
| 22 Մեծամոր ք-ի մսուր-մանկապ. անապահով երեխաներ | 40արկղ |
| 23.Երևանմանկ.պատ.ս.կ.-իզոհվածազատամարտիկներիերեխ | .30արկղ |
| 24.«Մեղվիկ»ԲՀԿ-ի անապահով երեխաներ | 30արկղ |
| 25.«Փրկություն»ԲՀԿ-ի հաշմանդամ երեխաներ | 30արկղ |
| 26. .«Հրեշտակ»ԲՀԿ-ի հաշմ. և անապահով երեխաներ | 30արկղ |
| 27. թ.52 դպրոցի անապահով երեխաներ | 20արկղ |
| 28. թ.176 դպրոցի անապահով երեխաներ | 20արկղ |
| 29.«Քարավան88»հկ-ի անապահով երեխաներ | 20արկղ |
| 30.«Հուսաստղ»ԲՀԿ-ի հաշմանդամ երեխաներ | 20արկղ |
| 31.«Վահան»ԲՀԿ-ի հաշմանդամ երեխաներ | 20արկղ |
| 32.«Լուսինե»ԲՀԿ-ի հաշմանդամ երեխաներ | 20արկղ |
| 33.«Նարե»ԲՀԿ-ի հաշմանդամ երեխաներ | 20արկղ |
| 34.«Զմարող օջախ»ԲՀԿ-ի հաշմանդամ երեխաներ | 20արկղ |
| 35.Ճամբարակի «Աստղացոլք»ի հաշմ երեխ. միություն | 20արկղ |
| 36.«Օկտավա »ԲՀԿ-ի անապահով երեխաներ | 20արկղ |
| 37.«Նարինե» մսուր-մանկապ. անապահով երեխաներ | 20արկղ |
| 38.թ.202 գիշերօթիկ մսուր-մանկապ. երեխաներ | 20արկղ |
| 39.թ.233մ/մանկապ. «Անմոռուկ»ԲՀԿ-ի անապահով երեխաներ | 20արկղ |
| 40..«Լաստոչկա»ԲՀԿ-իփախստականններիերեխաներ | 20արկղ |
| 41. Պատանի մարզիկների ակումբի անապահով երեխաներ | 20արկղ |
| 42.«Շենացնենքմերգյուղը»հկ-իանապահովերեխաներին | 20արկղ |
| 43.Գյումրիի«Առողջկենտրոն»հկ-իհիվանդ և անապահով երեխաներին | 20արկղ |
| 44.«Հրաշամանուկ»ԲՀԿ-իհաշմնանապահովերեխաներ | 20արկղ |

18/3

| | |
|---|---|
| 45.Աշտարակի կանանց ասոցիացիաի անապահով ընտանիքների երեխաներին | 20արկղ |
| 46.Նոյեմբերյանի«Լենա»hկ-իանապահովընտանիքներիերեխաներին | 20արկղ |
| 47.«Վերնատուն» ԲՀԿ-ի անապահով ընտանիքների երեխաներին | 20արկղ |
| 48.«Լույսի աստղ»hկ-ի հիվանդ և անապահով երեխաներին | 20արկղ |
| 49.Նոր-Նորքի թ.8 մ/մանկապ. անապահով երեխաներ | 10արկղ |
| 50.Նորքիգիշերոթիկմսուր-մանկապ.անապահո երեխաներ | 10արկղ |
| 51.Նոր-Նորքիթ.12մ/մանկապ.անապահովերեխաներ | 10արկղ |
| 52.«Ալեքս»ԲՀԿ-ի/Խարբերդի/անապահովընտանիքներիերեխաներին | 10արկղ |
| Ընդհանուր | 1680արկղ |

Հայաստանի մանկական ասոցիացիայի Նախագահ Վարուժան Սեդրակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ- 927 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՅՍՄՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ ՍԵՅՍՄԻԿ ՎՏԱՆԳԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 8-ի N 3/3.8-1/9967-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 4383-10, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1.11.3/11575-10, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2010 թվականի նոյեմբերի 24-ի N Ե-15/2057 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի նոյեմբերի 18-ի N ԱԱ/3-4/2658-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ՆԱՏՕ-ի «Գիտությունը հանուն խաղաղության և անվտանգության» ծրագրի սահմաններում ֆինանսավորվող Հայկական սեյսմոլոգիայի և երկրի ֆիզիկայի ասոցիացիայի կողմից իրականացվող՝ 118500 եվրոյին համարժեք դրամի արժողությամբ «Արձագանքում սեյսմիկ վտանգին Կովկասում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Հայկական սեյսմոլոգիայի և երկրի ֆիզիկայի ասոցիացիայի հասցեով ստացված սեյսմոգրաֆներն իրենց համալրող միջոցներով (62 կգ ընդհանուր քաշով, 13500 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 482 բրիտանական ֆունտ, Արարատյան տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Հայկական սեյսմոլոգիայի և երկրի ֆիզիկայի ասոցիացիային՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը, սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ հաշվետվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայկական սեյսմոլոգիայի և
Երկրի ֆիզիկայի ասոցիացիայի նախագահ
Ավետիս Արքելյան
«___» ___ 2010թ.

«Արձագանքում սեյսմիկ վտանգին Կովկասում»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ստեղծել թվային սեյսմոգրաֆների և աքսելերոգրաֆների ծանց Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման և նվազեցման, գիտական հետազոտությունների զարգացման, ինչպես նաև սեյսմոլոգիայի և սեյսմիկ անվտանգության ոլորտներում տարածաշրջանային համագործակցությունը ընդլայնելու և համակարգելու նպատակով |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից |
| 3 | Բարեգործը | ՆԱՏՕ–ի Գիտությունը հանուն խաղաղության և անվտանգության ծրագիր, Բրյուսել, Բելգիա |
| 4 | Ծրագիրը կատարողը | Հայկական սեյսմոլոգիայի և Երկրի ֆիզիկայի ասոցիացիա Հ.Կ. (ՀՀ, ք. Երևան, Շինարարների փ, շենք 10, ՀՎՀՀ 00837811) |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ք. Երևան և Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արագածոտնի, Արարատի և Կոտայքի մարզերը (Եղեգնուտ, Առուճ, Բյուրական, Արտենի, Արաքսավան, Եղվարդ և Ջրառատ բնակավայրերը), որտեղ տեղադրվելու են սեյսմոգրաֆները և աքսելերոգրաֆները: Սեյսմիկ անվտանգության ոլորտ: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն է՝ 118 500 Եվրո |
| 7 | Բարեգործություն ստացողը | Հայկական սեյսմոլոգիայի և Երկրի ֆիզիկայի ասոցիացիա Հ.Կ. (ՀՀ, ք. Երևան, Շինարարների փ, շենք 10, ՀՎՀՀ 00837811) |

| | | |
|---|---|---|
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 3 տարի (2010-2013թթ.) |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ընդհանուր միջոցների ծավալը կազմում է 118 500 Եվրո, այդ թվում՝<br>– Սեյսմոլոգիական սարքեր – 65950 Եվրո<br>• Սեյսմոգրաֆների տեղադրում – 31.03.2011թ<br>• Աքսելերոգրաֆների տեղադրում – 31.08.2011թ<br>– Համակարգչի ձեռքբերում – 2000 Եվրո (16.06.2010թ)<br>– Գործուղումներ (միջազգային համաժողովներ, ծրագրով նախատեսված հանդիպումներ, դաշտային աշխատանքներ, սեյսմոգրաֆների և ակսելերոգրաֆների տեղադրում, մասնագետների կարճաժամկետ վերապատրաստում ծրագրի մասնակից ՆԱՏՕ–ի երկրների ինստիտուտներում) – 20550 Եվրո (ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում)<br>– Գրքերի, ամսագրերի ձեռքբերում, հոդվածների տպագրում գիտական ամսագրերում – 1500 Եվրո (ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում)<br>– Հրավիրված ՆԱՏՕ–ի փորձագետների այցելությունների հետ կապված ծախսեր – 4000 Եվրո (երկու այցելություն՝ 2011թ մայիս ամսին և 2012թ օգոստոս ամսին)<br>– Սպառվող նյութեր և պահեստային մասեր (քարթրիջներ, սկավառակներ, գրասենյակային ապրանքներ և այլն) – 3000Եվրո (ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում)<br>– Այլ ծախսեր (փոստ, ինտերնետ, մեքենաների վարձակալություն և այլն) 4500 Եվրո (ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում)<br>– Ֆինանսական աջակցություն (թոշակ) երիտասարդ մասնագետների համար (4 մասնագետ) – 17000 Եվրո (ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում) |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ներմուծվում են սարքավորումներ.<br>**Առաջին փուլ (30.11.2010թ)՝**<br>GMSys սեյսմոգրաֆ (5 x 2160) – 10800 Եվրո (13500 ԱՄՆ դոլար)<br>Փաթեթավորում – 50 Եվրո<br>Տեղափոխման ծախսեր – 1500 Եվրո |

| | | | |
|---|---|---|---|
| | | | **Երկրորդ փուլ (31.01.2011թ)՝**<br>CMG-6T սեյսմիկ տվիչ (5 x 3560) – 17800 Եվրո<br>Արևային մարտկոցներ (5 x 800) – 4000 Եվրո<br>Փաթեթավորում – 50 Եվրո<br>Տեղափոխման ծախսեր – 1500 Եվրո<br>**Երրորդ փուլ (30.06.2011թ)՝**<br>CMG-5TD աքսելերոմետր (7 x 4100) – 28700Եվրո<br>Փաթեթավորում – 50 Եվրո<br>Տեղափոխման ծախսեր – 1500 Եվրո<br>**Ընդամենը՝** 65950 Եվրո<br>(Ակնկալվում է ազատում ԱԱՀ–ից և մաքսային տուրքերից) |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | | Կազմակերպական ծախսերը կազմում են ընդամենը 7500 Եվրո, այդ թվում՝<br>– Սպառվող նյութեր և պահեստային մասեր (քարթրիջներ, սկավառակներ, գրասենյակային ապրանքներ և այլն) – 3000Եվրո<br>– Այլ ծախսեր (փոստ, ինտերնետ, մեքենաների վարձակալություն և այլն) – 4500 Եվրո |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և ՀՀ բնապահպանության նախարարության հետ, որոնց տրամադրվելու են ծրագրի իրականացման ընթացքում ստացված արդյունքները: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվելու է ՆԱՏՕ–ի Գիտությունը խաղաղության և անվտանգության համար ծրագրի կողմից (կիսամյակային և ամփոփ հաշվետվություններ), ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (կիսամյակային և ամփոփ հաշվետվություններ) |

Ներկայացրեց նախագահ՝

Ավետիս Առաքելյան

18/5

Արամ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ - 926 - Ա**
**քաղ. Երևան**

# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N 3/3.8-1/10045-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 15-ի N ԱԱ/3-6/3095-10 եզրակացությունները,*
***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից բարերար՝ Ռաֆայել Այվազյանի կողմից, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված եկեղեցական զանգի (մեկ տեղ, 116 կգ ընդհանուր քաշով, 99000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6844 ռուսական ռուբլի, «Չվարթնոց» Մ/Տ) ներմուծման ծրագիրը, որը նախատեսված է Ս. Գեղարդավանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպման և բաշխման աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

Հաստատված է
«Կամրջակ» ՍԲՀԿ-ի
Տնօրենի կողմից
6.12.2010

«ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-ԻՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ

# Ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | “Խարբերդի մասնագիացված մանկատուն” ՊՈԱԿ-ի հասցեով «Ֆորդ Տրանզիտ – Թորնիո» մարդատար ավտոմեքենայի ներմուծում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Վիլդե Գանզեն ՀԿ (WILDE GANZEN NGO) Heuvellaan 36-1217JN Hilversum - NEDERLAND |
| 4. | Ծրագրի կատարողը | “Կամրջակ” ՍԲՀԿ-ն, իրավաբանական հասցե՝ Ք. Երևան Աղոնցի 15/20, ՀՎՀՀ՝ 01003187, հեռ՝ 516-044, Ֆաքս՝ 56-13-03 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն , «Խարբերդի մասնագիացված մանկատուն» ՊՈԱԿ, Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 18450 եվրո: 15350 եվրոն մեքենայի գնման գինը, 700 եվրո բեռափոխադրման ծախսերը մինչև Բաթում և 1550 եվրո նախատեսվում է վճարել գործուղման համար՝ Բաթումի նավահանգիստից մեքենան Երևան տեղափոխելու: Մեքենայի հետ բարերարը ուղարկում է նաև 50 հատ ծածկոց և 50 հատ սավան՝ 51 կգ քաշով, 850 եվրո արժողությամբ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | “Խարբերդի մասնագիացված մանկատուն” ՊՈԱԿ, ՀՎՀՀ՝ 03801255. հեռ՝ 0236600025 |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 15.11.2010-ից մինչև 25.03.2011թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Մեքենան ձեռք է բերվելու և ներմուծվելու է 2011 թվականի հունվարին՝ Ford Tranzit/Tourneo, 63 կվ, 9 տեղանոց, թափքի համարը՝ WFOSXXTTFS8A41106, 1698 կգ քաշով, 15350 եվրո արժողությամբ, բեռափոխադրման ծախսերը կազմում են 700 եվրո մինչև Բաթումի նավահանգիստ և 1550 եվրո նախատեսվում է վճարել գործուղման բոլոր տեսակի ծախսերի համար Բաթումի նավահանգիստից մեքենան վարելով փոխադրելու է Երևան: 50 հատ ծածկոց և 50 հատ սավան՝ 51 կգ քաշով, 850 եվրո արժողությամբ, տեղափոխվելու են ներմուծվող մեքենայով: |
| 10. | Ձեռք բերվող,ներմուծվող,ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Tranzit/Tourneo, 63 կվ, 9 տեղանոց, թափքի համարը՝ WFOSXXTTFS8A41106, 1698 կգ քաշով, 15350 եվրո արժողությամբ, բեռափոխադրման ծախսերը կազմում են 700 եվրո,<br>50 հատ ծածկոց և 50 հատ սավան՝ 51 կգ քաշով, 850 եվրո արժողությամբ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման,տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Խարբերդի մասնագիացված մանկատուն» ՊՈԱԿ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է “Կամրջակ”-ՍԲՀԿ-ի կողմից և աշխատանքները կատարելուց հետո սահմանված կարգով հաշվետվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով |

“Կամրջակ”-ՍԲՀԿ-ի
Տնօրեն
Բենյամին Արամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-925-Ա**
**քաղ. Երևան**

## «ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-ԻՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N 3/3.8-1/10098-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N 4898-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 14-ի N ՖԲ/ՄարտՄխ-2/6074-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 15-ի N ԱԱ/3-4/3097-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Աղոնցի 15, բն.20, ՀՎՀՀ՝ 01003187) իրականացվող՝ 18450 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին ավտոմեքենայի նվիրաբերություն և բեռի ներմուծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներով ձեռքբերված և իր հասցեով ստացված բեռը ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում՝

1) Ford Tranzit/Tourneo, 63 կվ, 9 տեղանոց, թափքի համարը՝ WFOSXXTTFS8A41106, 1698 կգ քաշով, 15350 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 700 եվրո, ԱՄ ՄՁՄ ՄՏ.

2) 50 ծածկոց և 50 սավան՝ 51 կգ քաշով, 850 եվրո արժողությամբ, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն: Նախատեսված է բաշխել կազմակերպության շահառուներին՝ Փոքր Վեդի և Ոսկեհատ գյուղերում:

3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
«Կամրջակ» ՍԲՀԿ-ի
Տնօրենի կողմից
6.12.2010

«ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-ԻՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ

# Ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | "Խարբերդի մասնագիացված մանկատուն" ՊՈԱԿ-ի հասցեով «Ֆորդ Տրանզիտ – Թորնիո» մարդատար ավտոմեքենայի ներմուծում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմնված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Վիլդե Գանզեն ՀԿ (WILDE GANZEN NGO) Heuvellaan 36-1217JN Hilversum - NEDERLAND |
| 4. | Ծրագրի կատարողը | "Կամրջակ" ՍԲՀԿ-ն, իրավաբանական հասցե՝ Ք. Երևան Աղոնցի 15/20, ՀՎՀՀ՝ 01003187, հեռ՝ 516-044, Ֆաքս՝ 56-13-03 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն , «Խարբերդի մասնագիացված մանկատուն» ՊՈԱԿ, Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 18450 եվրո: 15350 եվրոն մեքենայի գնման գինը, 700 եվրո բեռափոխադրման ծախսերը մինչև Բաթում և 1550 եվրո նախատեսվում է վճարել գործուղման համար՝ Բաթումի նավահանգիստից մեքենան Երևան տեղափոխելու: Մեքենայի հետ բարերարը ուղարկում է նաև 50 հատ ծածկոց և 50 հատ սավան՝ 51 կգ քաշով, 850 եվրո արժողությամբ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | "Խարբերդի մասնագիացված մանկատուն" ՊՈԱԿ, ՀՎՀՀ՝ 03801255. հեռ՝ 0236600025 |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 15.11.2010-ից մինչև 25.03.2011թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Մեքենան ձեռք է բերվելու և ներմուծվելու է 2011 թվականի հունվարին՝ Ford Tranzit/Tourneo, 63 կվ, 9 տեղանոց, թափքի համարը՝ WFOSXXTTFS8A41106, 1698 կգ քաշով, 15350 եվրո արժողությամբ, բեռափոխադրման ծախսերը կազմում են 700 եվրո մինչև Բաթումի նավահանգիստ և 1550 եվրո նախատեսվում է վճարել գործուղման բոլոր տեսակի ծախսերի համար Բաթումի նավահանգիստից մեքենան վարելով փոխադրելու է Երևան: 50 հատ ծածկոց և 50 հատ սավան՝ 51 կգ քաշով, 850 եվրո արժողությամբ, տեղափոխվելու են ներմուծվող մեքենայով: |
| 10. | Ձեռք բերվող,ներմուծվող,ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Tranzit/Tourneo, 63 կվ, 9 տեղանոց, թափքի համարը՝ WFOSXXTTFS8A41106, 1698 կգ քաշով, 15350 եվրո արժողությամբ, բեռափոխադրման ծախսերը կազմում են 700 եվրո,<br>50 հատ ծածկոց և 50 հատ սավան՝ 51 կգ քաշով, 850 եվրո արժողությամբ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման,տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Խարբերդի մասնագիացված մանկատուն» ՊՈԱԿ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է "Կամրջակ"-ՍԲՀԿ-ի կողմից և աշխատանքները կատարելուց հետո սահմանված կարգով հաշվետվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով |

"Կամրջակ"-ՍԲՀԿ-ի
Տնօրեն
Բենյամին Աղամալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**28 դեկտեմբերի 2010 թվականի N Մ - 924 - Ա**

**քաղ. Երևան**

**(Որոշումն ընդունվել է 2010 թվականի դեկտեմբերի 24-ի նիստին)**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-885-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 24–ի N 3/3.8-1/10704-10 և Հայաստանի անրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 27-ի N ԱԱ/3-4/3273-10 եզրակացությունները* ***ո ր ո - շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարոնյանի 21, ՀՎՀՀ՝ 00006023) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 10-ի « Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից իրականացվող «Պետության կարիքների համար տուբերկուլյոզով հիվանդների սոցիալական աջակցության ծառայություններ» ծրագրի մասին» N Մ-885-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02704414) 2010 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված ապրանքների մատակարարում՝ 310000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02508699) 2010 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված ապրանքների մատակարարում՝ 19000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02205001) 2010 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված ապրանքների մատակարարում՝ 304000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-923-Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N 3/3.8-2/9994-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N ԱԱ/3-6/2975-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Վրաստանից Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ուղարկված 1999 թվականի արտադրության «Mitsubishi Pajero Io» ավտոմեքենան (1 տեղ, 1340 կգ ընդհանուր քաշով, 6000 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, նույնականացման համարը՝ H76W0111840, ավտոտրանսպորտային միջոցների ՄՁՄ ՏՄ) ներմուծվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ - 922 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 3/3.8-2/10659-10, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N ԳԱ/04.1/6019-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N ԱԱ/3-63234/-10 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 22-ի N 01/11.1/3844-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով ֆրանսիական «Les Jardins d'Escoubilles» տնկարանից գնված և «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված արևելյան խուրմայի տնկիների (2000 հատ, 2 տեղ, 563 կգ ընդհանուր քաշով, 10100 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 480 եվրո, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Տնկիները բաշխվելու են Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի գյուղերի զարգացման ծրագրի շրջանակներում (բաշխման ցանկերը կցվում են):

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

"Հայաստան" համահայկական հիմնադրամի
Տավուշի մարզի գյուղերի զարգացման ծրագիր
Ակնաղբյուր գյուղի այգեգործներին հատկանցվող տնկիների ցուցակը

| | Այգեգործի ազգանուն, անունը | Պտղատեսակը | Տնկվող տարածքը /հա/ | Տնկիների քանակը /հատ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Դոլմազյան Կարեն | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 2 | Դովլաթյան Լարիսա | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 3 | Եգանյան Գարիկ | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 4 | Եգանյան Ստեփան | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 5 | Եգանյան Համլետ | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 6 | Հարությունյան Ալավերդի | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 7 | Հարությունյան Անժելա | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 8 | Հարությունյան Արամ | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 9 | Հարությունյան Հայկազ | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 10 | Հարությունյան Վաչիկ | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 11 | Միրզոյան Սևան | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 12 | Միրզոյան Վանիչկա | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 13 | Միրզոյան Վարդգես | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 14 | Պետրոսյան Դավիթ | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 15 | Պետրոսյան Միեր | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 16 | Մխիթարյան Արտակ | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 17 | Մխիթարյան Օնիկ | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 18 | Մխիթարյան Միշա | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 19 | Շահնազարյան Սանասար | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 20 | Շահնազարյան Հասմիկ | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 21 | Շահնազարյան Քաջիկ | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 22 | Շահնազարյան Ավետիք | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 23 | Շահնազարյան Բենիկ | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 24 | Շահնազարյան Ենոք | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 25 | Մարտիրոսյան Իսկենդար | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 26 | Մարտիրոսյան Միքաել | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 27 | Մխիթարյան Մարտիկ | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 28 | Միրզոյան Արթուր | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 29 | Միրզոյան Արագ | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 30 | Միրզոյան Աղասի | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 31 | Միրզոյան Արտավազդ | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 32 | Բարսեղյան Գրիշիկ | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 33 | Բարսեղյան Արամ | խուրմա քաղցր | 0.1 | 40 |
| 34 | Մահյան Էդվարդ | խուրմա քաղցր | 0.05 | 20 |
| 35 | Շահնազարյան Հովակիմ | խուրմա քաղցր | 0.05 | 20 |
| 36 | Բարսեղյան Շավարշ | խուրմա քաղցր | 0.05 | 20 |
| 37 | Մխիթարյան Կարեն | խուրմա քաղցր | 0.05 | 20 |
| | *ընդամենը* | | 3.5 | 1400 |

"Հայաստան" համահայկական հիմնադրամի

Տավուշի մարզի գյուղերի զարգացման ծրագիր

## Վազաշեն գյուղի այգեգործներին հատկանցվող տնկիների ցուցակը

| | Այգեգործի ազգանուն, անունը | Պտղատեսակը | Տնկվող տարածքը /հա/ | Տնկիների քանակը /հատ/ | ստորագրություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 2. | [illegible] | խուրմա քաղցր | 0.05 | 20 | [signature] |
| 3 | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 4 | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 5. | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 6. | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 7. | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 8. | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 9. | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 10. | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 11. | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 12. | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 13. | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 14. | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 15. | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 16. | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 17 | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 18 | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 19 | [illegible] | խուրմա քաղցր | 0,05 | 20 | [signature] |
| 20 | [illegible] | խուրմա քաղցր | 0,1 | 40 | [signature] |
| 21. | [illegible] | խուրմա քաղցր | 01 | 40 | [signature] |
| 22. | [illegible] | խուրմա քաղցր | 00.5 | 20 | [signature] |
| 23. | [illegible] | խուրմա քաղցր | 005 | 20 | [signature] |
| 24 | [illegible] | խուրմա քաղցր | 075 | 30 | [signature] |
| 25 | [illegible] | խուրմա քաղցր | 075 | 30 | [signature] |
| | | խուրմա քաղցր | | | |
| | | խուրմա քաղցր | | | |
| | | խուրմա քաղցր | | | |
| | | խուրմա քաղցր | | | |
| | | խուրմա քաղցր | | | |
| | | խուրմա քաղցր | | | |

[illegible] [stamp] [illegible]

560

40 [illegible] 5 [illegible]

[signature]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ - 921 - Ա
քաղ. Երևան

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 3/3.8-1/10670-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 5191-10 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N ԱԱ/3-4/3198-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 109471050 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՍՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2010 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված N ԼՂ-Կ-18/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գույքի պատրաստում, տեղափոխում և տեղադրում՝ 109471050 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«17» դեկտեմբերի 2010թ.

## « Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների կահավորում »
## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցները անհրաժեշտ կահույքով ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից ներկայացված պահանջարկի համաձայն (պահանջարկի պատճենը կցվում է) |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղ, կրթության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 109.471.050,00 դրամ: |

| | | |
|---|---|---|
| 6. | Բարեգործություն ստացողը | Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցները |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2010թ դեկտեմբերի 16-ից մինչեւ 2011թ. օգոստոսի 30-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի համապատասխան գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 109.471.050,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կրթության և գիտության նախարարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ- 920 -Ա**
**քաղ. Երևան**

## «ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-1/10389-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N 5159-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N ԱԱ/3-4/3190-10 և Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 01/04.12/4617-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Աղոնցի 15, բն. 20, ՀՎՀՀ՝ 01003187) իրականացվող՝ 2900000 դրամ արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի թիվ 1 մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԷՅՐՖԵԼ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հետ (քաղ. Երևան, Անդրանիկի 33/4, ՀՎՀՀ՝ 09102096) 2010 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքների իրականացում՝ 2427200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
«Կամրջակ» ՍԲՀԿ
Տնօրենի կողմից
12 Դեկտեմբեր 2010 թ.

# Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքի թիվ 1 մանկապարտեզի ջեռուցման ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքի թիվ 1 մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնությունից |
| 3. | Բարեգործը | «LITTLE BRIDGE SWITZERLAND» NGO, նախագահ՝ տիկին Հայլդե Ադելիայդ Քինդ, Շվեյցարիա (Giacometti stases 134. 7000 Chur, FO0569480) |
| 4. | Ծրագիրն կատարողը | «Կամրջակ» ՍԲՀԿ, իրավաբանական հասցե՝ քաղ. Երևան, Ադոնցի 15/20, ՀՎՀՀ՝ 01003187, հեռ. 516-044, ֆաքս. 561-303 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Վայոց Ձորի մարզ, քաղ. Վայք, բնագավառը սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 2900000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքի համայնքը՝ ի դեմս թիվ 1 մանկապարտեզ, տնօրեն՝ Հայկուշ Հակոբյան, հեռ. 028222973, ՀՎՀՀ 09102096 |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.12.2010-ից մինչև 02.02.2011թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունն և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | «Էյրֆել Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից տրամադրվել է նախահաշվարկ, որը կազմել է 2427200 (երկու միլոն չորսհարյուր քսանյոթ հազար երկու հարյուր) դրամ առանց ԱԱՀ-ի: Այսդ գումարով տեղադրվելու է գեռուցման համակարգը ամբողջությամբ: Ներկայումս պատրաստվում է առանձնասենյակ կաթսաների տեղադրման համար և ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշումը ստանալուց հետո տեղադրվելու է համակարգը: Քաղաքապետարանի կողմից կատարվում են կաթսաների համար անհրաժեշտ գազի սնուցման կետերի ավելացման աշխատանքները: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Էյրֆել Թրեյդ» ՍՊԸ-ի հետ 2010 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված պայմանագիրը, որի արժեքն է 2427200 դրամ:<br>Մնացած գումարը օգտագործվելու է համակարգը տեղադրելու հետ կապված շինարարական աշխատանքներ կատարելու համար, առանձնասենյակ կաթսաների համար, նոր դուռ և պատուհանների տեղադրում: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործակցում ենք Վայք քաղաքի քաղաքապետարանի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է բարեգործի կողմից և աշխատանքները կատարելուց հետո կներկայացվի հաշվետվություն ՀՀ ԿԲԾՀՀ: |

«Կամրջակ» ՍԲՀԿ -ի տնօրեն
Բենիամին Աղամալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ - 919 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-029-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Արմենակ և Աննա Թաղէոսյանների անվամբ բուժարան»)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 8-ի N 3/3.8-1/9975-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 10-ի NԱԱ/3-4/3038-10 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Սահմանել, որ «Արմենակ և Աննա Թաղէոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02592526) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի «Արմենակ և Աննա Թաղէոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոշ գյուղում պոլիկլինիկայի կառուցում» ծրագրի մասին» N Մ-029-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պենտա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500827) 2010 թվականի դեկտեմբերի 1-ի N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դռների և պատուհանների մատակարարում՝17408600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ - 918 Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N Մ-450-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 8-ի N 3/3.8-1/9966-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N ԱԱ/3-4/3039-10 եզրակացությունները և հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2010 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 2045 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 3-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գայանե վանքի տարածքում գտնվող քարոզչական կենտրոնի մանկատան վերակառուցման և նորոգման շինարարական աշխատանքներ» ծրագրի մասին» N Մ-450-Ա որոշման (2009 թվականի նոյեմբերի 6-ի N Մ-768-Ա և 2010 թվականի նոյեմբերի 19-ի N Մ-800-Ա որոշումների խմբագրությամբ) մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «123 208 240 դրամ» բառերը փոխարինել «152 171 340 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «123 208 240 դրամ» բառերը փոխարինել «152 171 340 դրամ» բառերով.

3) որոշմանը կից ծրագրի 8-րդ կետում «մինչև 31-ը դեկտեմբերի 2010» բառերը փոխարինել «մինչև 31-ը մարտի 2011» բառերով:

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

1) «Թերմոսերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00846974) 2010 թվականի նոյեմբերի 16-ին կնքված՝ N 29Շ/010 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սբ. Գայանե վանքային համալիրի մանկատան համար կաթսայատան վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 4 068 510 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-917-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N Մ-524-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-1/10369-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N ԱԱ/3-4/3125-10 եզրակացությունները և հաշվի առնելով «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի 2010 թվականի դեկտեմբերի 3-ի N Կ-03/12 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 19-ի N Մ-236-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)» N Մ-524-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում «2008 թվականի մայիսի 19-ի N Մ-236-Ա» բառերը փոխարինել «2007 թվականի հուլիսի 13-ի N Մ-415-Ա» բառերով.

2) որոշման 1-ին կետի առաջին պարբերությունում «2008 թվականի մայիսի 19-ի N Մ-236-Ա» բառերը փոխարինել «2007 թվականի հուլիսի 13-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ձեյթուն» համայնքային ուսումնական և աջակցման կենտրոնի ստեղծում» ծրագրի մասին» N Մ-415-Ա» բառերով.

3) որոշման 1-ին կետի երկրորդ պարբերությունում «2009 թվականի հունիսի 1-ին կնքված գործարքը, որով նախատեսվում է Վանաձորի «Տարոն-3» թաղամասում շինարա-



րական աշխատանքների իրականացում՝ 62480000 դրամի չափով» բառերը փոխարինել «2009 թվականի մարտի 31-ին կնքված գործարքը, որով նախատեսվում է Երևանի Քանաքեռ-Զեյթուն թաղային համայնքի ուսումնական կենտրոնի շինարարական աշխատանքների իրականացում՝ 110000000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-916-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-620-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-1/10369-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N ԱԱ/3-4/3125-10 եզրակացությունները և հաշվի առնելով «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի 2010 թվականի դեկտեմբերի 3-ի N Կ-03/12 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 19-ի N Մ-236-Ա որոշմամբ հաստատված շրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ) (N1)» N Մ-620-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում «2008 թվականի մայիսի 19-ի N Մ-236-Ա» բառերը փոխարինել «2007 թվականի հուլիսի 13-ի N Մ-415-Ա» բառերով.

2) որոշման 1-ին կետում «2008 թվականի մայիսի 19-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորում տնազուրկ բնակիչների համար բնակարանների կառուցում» ծրագրի մասին» N Մ-236-Ա» բառերը փոխարինել «2007 թվականի հուլիսի 13-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ձեյթուն» համայնքային ուսումնական և աջակցման կենտրոնի ստեղծում» ծրագրի մասին» N Մ-415-Ա» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-915-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-328-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 3/3.8-1/10671-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N ԱԱ/3-4/3220-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00068196) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2001 թվականի հոկտեմբերի 10-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի «Հույսի ավան» ծրագրի մասին» N Մ-328-Ա որոշմամբ (2008 թվականի փետրվարի 8-ի N Մ-056-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջերմագազէլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02549239) 2010 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված՝ N Կ-05/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Հույսի ավան» թաղամասի երաժշտական դպրոցի գազաֆիկացման աշխատանքների իրականացում՝ 490985 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-914-Ա**
**քաղ. Երևան**

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N 3/3.8-2/10585-10, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի N 1/06/1653-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N ԱԱ/3-6/3183-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «Լոռի» հայրենակցական միության կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզահագուստի և մարզագույքի (4 տեղ, 129.5 կգ ընդհանուր քաշով, 11000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1149 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-913-Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի N 3/3.8-2/10640-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N ՖԲ/Մարտ Մխ-2/6358-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N ԱԱ/3-6/3185-10 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված ստորև նշված բեռները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-644-Ա և դեկտեմբերի 25-ի N Մ-894-Ա, 2010 թվականի փետրվարի 12-ի NN Մ 72-Ա, Մ-73-Ա, Մ-74-Ա, Մ-75-Ա, Մ-77-Ա, Մ-82-Ա, Մ-83-Ա և Մ-89-Ա որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում՝

1) 56 տեղ, 8829 կգ ընդհանուր քաշով, 129770 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 8325 ԱՄՆ-ի դոլար (բեռի և բաշխման ցանկը կցվում է), «Արարատյան» ՏՄ.

2) 834 տեղ, 11458.7 կգ ընդհանուր քաշով, 12000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 7000 ԱՄՆ-ի դոլար (բեռի և բաշխման ցանկը կցվում է), «Արարատյան» ՏՄ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

"Վորլդ Վիժն" ՄԲԿ կողմից C 37339 առ 25.11.2010 հայտարարագրով
ԱՄՆ-ից ստացված
ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)
Կոնտեյների համարն է MSCU 701956-0: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 138095.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 8325.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 8829 կգ, տեղերի քանակը՝ 56 :

ԱԲ.18/5.8

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 85 | հատ | տիկնիկ | | 1269.90 | Մ-74-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գյումրի քաղաքի և Հովունի ու Մարմաշեն գյուղերի կարիքավոր բնակչությանը |
| 600 | հատ | տիկնիկի մասեր և պարագաներ | | 882.00 | |
| 7 | հատ | մանկ. աթոռ | | 402.36 | |
| 128 | զույգ | մարզ. կոշիկ | | 3953.92 | |
| 80 | հատ | փափուկ խաղալիք | | 703.20 | |
| 300 | հատ | թել գործվածքի | | 216.00 | |
| 2400 | հատ | պլաստմ. բաժակ | | 168.00 | |
| 200 | հատ | տաբատ | | 6786.00 | |
| 30 | հատ | շորտ | | 992.70 | |
| 7 | հատ | ջրադիսպ. ներկ | | 527.87 | |
| 3000 | հատ | ձեռքի օճառ | | 420.00 | |
| 80 | հատ | տիկնիկ | | 1195.20 | Մ-82-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում |
| 600 | հատ | տիկնիկի մասեր և պարագաներ | | 882.00 | |
| 7 | հատ | մանկ. աթոռ | | 402.36 | |
| 120 | զույգ | մարզ. կոշիկ | | 3706.80 | |
| 80 | հատ | փափուկ խաղալիք | | 703.20 | |
| 300 | հատ | թել գործվածքի | | 216.00 | |
| 2400 | հատ | պլաստմ. բաժակ | | 168.00 | |
| 200 | հատ | տաբատ | | 6786.00 | |
| 30 | հատ | շորտ | | 992.70 | |
| 7 | հատ | ջրադիսպ. ներկ | | 527.87 | |
| 3000 | հատ | ձեռքի օճառ | | 420.00 | |
| 70 | հատ | տիկնիկ | | 1045.80 | Մ-77-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջաններում |
| 550 | հատ | տիկնիկի մասեր և պարագաներ | | 808.50 | |
| 6 | հատ | մանկ. աթոռ | | 344.88 | |
| 80 | զույգ | մարզ. կոշիկ | | 2471.20 | |
| 80 | հատ | փափուկ խաղալիք | | 703.20 | |
| 300 | հատ | թել գործվածքի | | 216.00 | |
| 1800 | հատ | պլաստմ. բաժակ | | 126.00 | |
| 150 | հատ | տաբատ | | 5089.50 | |
| 30 | հատ | շորտ | | 992.70 | |
| 6 | հատ | ջրադիսպ. ներկ | | 452.46 | |
| 2200 | հատ | ձեռքի օճառ | | 308.00 | |
| 70 | հատ | տիկնիկ | | 1045.80 | Մ-644-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ալավերդու տարածաշրջանում |
| 550 | հատ | տիկնիկի մասեր և պարագաներ | | 808.50 | |
| 3 | հատ | մանկ. աթոռ | | 172.44 | |
| 60 | զույգ | մարզ. կոշիկ | | 1853.40 | |
| 60 | հատ | փափուկ խաղալիք | | 527.40 | |
| 200 | հատ | թել գործվածքի | | 144.00 | |
| 600 | հատ | պլաստմ. բաժակ | | 42.00 | |
| 100 | հատ | տաբատ | | 3393.00 | |
| 5 | հատ | ջրադիսպ. ներկ | | 377.05 | |
| 1500 | հատ | ձեռքի օճառ | | 210.00 | |
| 80 | հատ | տիկնիկ | | 1195.20 | Մ-73-Ա Բարեգործական բեռների ներմուծում և |
| 600 | հատ | տիկնիկի մասեր և պարագաներ | | 882.00 | |
| 7 | հատ | մանկ. աթոռ | | 402.36 | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-912-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-807-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 20-ի N 3/3.8-2/10505-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N ԱԱ/3-6/3180-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից ձեռք բերված լաբորատոր սարքի մասերի (մեկ արկղ, 0.5 կգ ընդհանուր քաշով, 208.05 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 36.01 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 20-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2010 թվականի ընթացքում երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցություն» ծրագրի մասին» N Մ-807-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում և անհատույց հանձնվելու է «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-911-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԴՄԻՆԹՈՆԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N 3/3.8-2/10568-10, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի N 1/06/1657-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N ԱԱ/3-6/3182-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Երիտասարդության և մշակույթի համաշխարհային հիմնադրամի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի բադմինթոնի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բադմինթոնի ձեռնաթիակների, փետրագնդակների և ցանցերի (19 տեղ, 182 կգ ընդհանուր քաշով, 1053.60 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2660.95 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի բադմինթոնի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-910-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 20-ի N 3/3.8-2/10508-10, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի N 1/06/1659-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N ԱԱ/3-6/3184-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված մրցավարների հաղորդակցման կապի միջոցների (2 տեղ, 19.5 կգ ընդհանուր քաշով, 20654 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 800 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-909-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 20-ի N 3/3.8-2/10506-10, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի N 1/06/1658-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N ԱԱ/3-6/3181-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականների համար «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված մարզահագուստի և մարզագույքի (մեկ տեղ, 14 կգ ընդհանուր քաշով, 1346 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 400 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-908-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N Մ-236-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 15-ի N 3/3.8-1/10287-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N ԱԱ/3-4/3120-10 եզրակացությունները ու հաշվի առնելով «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N Կ-02/12 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 19-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորում տնազուրկ բնակիչների համար բնակարանների կառուցում» ծրագրի մասին» N Մ-236-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «108160000 դրամ» բառերը փոխարինել «199700000 դրամ» բառերով.

2) ծրագրի 6-րդ կետում «166.4 մլն դրամ» բառերը փոխարինել «199.7 մլն դրամ» բառերով և «108.16 մլն դրամ» բառերը փոխարինել «141.46 մլն դրամ» բառերով.

2) ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «2009 թվական» բառերը փոխարինել «2010 թվական» բառերով.

3) ծրագրի 10-րդ կետում «19.2 մլն դրամ» բառերը փոխարինել «67.32 մլն դրամ» բառերով, «33.8 մլն դրամ» բառերը փոխարինել «45.34 մլն դրամ» բառերով և «55.16 մլն դրամ» բառերը փոխարինել «28.8 մլն դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-907-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի N Մ-339-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկեմբերի 13-ի N 3/3.8-1/10136-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N ԱԱ/3-4/3124-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 4-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Կապեր եկեղեցու և կառավարության հետ» ծրագրի մասին» N Մ-339-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2010 թվականի նոյեմբերի 11-ին կնքված՝ N WVA/CC/PR-01/FY11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 399999 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**27 դեկտեմբերի 2010 թվականի N Մ - 906 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՆՈՐ ՆՈՐՔԻ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ, ՀԱՏԱԿՆԵՐԻ, ՏԱՆԻՔԻ, «ՀԱՏՈՒԿ ԿԱՑԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը,հիմք ընդունելով 2010 թվականի դեկտեմբերի 27-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից իրականացվող՝ 34299287 դրամ ընդհանուր արժողությամբ «Նոր Նորքի հանրակացարանների առաջին մասնաշենքի սանհանգույցների, հատակների, տանիքի, «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ի առաջին հարկի հիմնանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00846441) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Լիլիանարմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00433589) 2010 թվականի դեկտեմբերի 22-ին կնքված N PC-EN073 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված շինարարական աշխատանքների իրականացում՝ 34299287 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն,և Հայաստանի Հանրապետոյան կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի
Գործադիր տնօրեն Ա.Կիրակոսյանի կողմից

"23" 12 2010թ.

**Նոր Նորքի հանրակացարանների 1-ին մասնաշենքի սանհանգույցների, հատակների, տանիքի, «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ի 1-ին հարկի հիմնանորոգման**

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի իրականացման նպատակը Երևան քաղաքի Նոր Նորքի հանրակացարանների 1-ին մասնաշենքի սանհանգույցների, հատակների, տանիքի, «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ի 1-ին հարկի հիմնանորոգումն է: |
| 2. | Բարեգործը | Ծրագիրն իրականացվում է ***ՄԱԿ-ի Փախստականների Գերագույն հանձնակատարի գրասենյակի*** (UNHCR) ֆինանսավորմամբ: |
| 3. | Ծրագրի բարեգործական ոլորտի նպատակը | Նախատեսվում է սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնողը ***Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամն*** է, որի հասցեն է ք. Երևան-37, Կ.Ուլնեցու 31, իսկ հարկային հաշվառման համարը 00846441. |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը, բնագավառը | Ծրագրի իրականացման վայրը Երևան քաղաքի Նոր Նորք թաղային համայնքն է, բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | a. Ծրագրի շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը սույն գործարքի շրջանակներում կազմում է 34 299 287 դրամ: Աշխատանքները ֆինանսավորվելու են ամբողջապես UNHCR-կողմից (100%): |
| 7. | Բարեգործություն ստացողները | Բարեգործություն ստացողը Նոր Նորքի ՀՀ տարածքային կառավարման միգրացիոն վարչության ՊՈԱԿն է , որի հաշվեկշռում է գտնվում մասնաշենքը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը | Ծրագրի շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիրը կնքվել է 2010թ. դեկտեմբերի 22-ին, շինարարական աշխատանքների մեկնարկը կտրվի շինարարական աշխատանքների անցկացման թույլտվությունը ստանալուց հետո, իսկ ավարտը նախատեսված է մեկնարկի օրվանից սկսված 90 օրացուցային օր հետո: Ենթադրվում է, որ մինչև 2011թ. մայիս ամիսն աշխատանքները կավարտվեն:<br>Ծրագրի շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը սույն գործարքի շրջանակներում կազմում է 34 299 287 դրամ: Աշխատանքները ֆինանսավորվելու են ամբողջապես UNHCR-կողմից (100%): Վերոհիշյալ աշխատանքների դիմաց այս գործարքի շրջանակներում ԱԱՀ չի վճարվելու. դեռևս աճուրդի անցկացման ժամանակ հայտատու կապալառուն տեղյակ էր, որ սույն գործարքի շրջանակներում ԱԱՀ չի վճարվելու:<br>Ծրագրի շինարարական աշխատանքները կատարողը **«Լիլանարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն է, որը գրանցված է ք. Երևան. Նուբարաշեն 5-րդ փողոց, տուն 11 հասցեով, հարկային հաշվառման** |

| | | |
|---|---|---|
| | | **համարը՝ 00433589:** Վերոհիշյալ կազմակերպությունն ընտրվել է աճուրդի միջոցով: Ըստ ՀՍՆՀ-ի ընթացակարգերի, մրցույթն անցկացրել է համայնքի լիազոր ներկայացուցիչ հանդիսացող իրականացնող գործակալությունը՝ ՀՍՆՀ-ի աջակցությամբ: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով ներկայացվում են միայն UNHCR-ի ֆինանսավորմամբ կատարվող գործարքը, որով նախատեսված է Երևան քաղաքի Նոր Նորքի հանրակացարանների 1-ին մասնաշենքի սանհանգույցների, հատակների, տանիքի, «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ի 1-ին հարկի հիմնանորոգումը:<br>***Հարկային արտոնությունները տարածվում են UNHCR-ի ֆինանսավորման վրա,*** որը կազմում է պայմանագրի արժեքի 100 տոկոսը կամ 34 299 287 դրամ առանց ԱԱՀ-ի: ***Այս գումարը՝ 34 299 287 դրամ, ենթակա է ԱԱՀ-ից ազատման:*** |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները. Ծրագրով նախատեսվում է մասնաշենքի 4-8 հարկերի սանհանգույցների հատակների վերանորոգում,նկուղային հարկի վնասված կոյուղու եւ ջրամատակարարման խողովակների փոխարինում:Նախատեսվում է առաջին հարկի վերահատակագծում, հատակների,դռների, լուսամուտների, ներքին էլ. սնուցման ցանցի փոխարինում, պատերի առաստաղների հարդարում, եւ սանհանգույցների վերանորոգում, սանտեխսարքավորումների փոխարինում: Նախատեսվում է տանիքի ցինկապատ հարթ թիթեղածածկույթի,օդափոխության տանիքային լուսամուտների, ջրամեկուսիչ գորգի եւ ջրահեռացման ձագարների ապամոնտաժում, փայտե կոնստրուկցիաների մասնակի ուժեղացում եւ նոր մանրապրոֆիլային ցինկապատ ծածկույթի,ջրհորդանների եւ ձագարների տեղադրում, ինչպես նաեւ ջրահեռացման խողովակաշարի տեղադրում:Նախատեսվում է նաեւ հակահրդեհային ազդարաման անցկացում առաջին հարկում:<br>Ծրագրով նախատեսված հարդարման աշխատանքների ընդհանուր մակերեսը կազմում է 445 քառ.մ:<br>Ծրագրի շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 34 299 287 դրամ, որը 100 տոկոսով ֆինանսավորվում է UNHCR-ի կողմից: Այդ գումարը ***ենթակա է ԱԱՀ-ից ազատման:*** |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսված է համագործակցել ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և UNHCR-ի պաշտոնյաների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի ընթացքը վերահսկվում է UNHCR-ի, ՀՀ տարածքային կառավարման նախարարության սոցներդրումների հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի, ինչպես նաև ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացմամբ): |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ * REPUBLIC OF ARMENIA ARMENIAN SOCIAL INVESTMENT FUND * РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМЯНСКИЙ ФОНД СОЦИАЛЬНЫХ ИНВЕСТИЦИЙ * 00846441 *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-905-Ա
քաղ. Երևան

## «ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 17-ի N 3/3.8-2/10431-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N ՖԲ/ՄարտՄխ-1/6287-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N ԱԱ/3-6/3235-10, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 22-ի N 101/104.3/4166-10 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N 01/5101-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ից «Հայ ավետարանի առաքելություն» բարեգործական կազմակերպության կողմից «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (1906 տեղ, 3304.87 կգ ընդհանուր քաշով, 243388 ԱՄՆ-ի դոլար արժեքով՝ ներառյալ 5188 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 16-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրու թիվ 6 մանկապարտեզի հովանավորում» ծրագրի մասին» N Մ-177-Ա, 2006 թվականի մարտի 31-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի-ԱՌԴԱ» ծրագրի մասին» N Մ-197-Ա, 2006 թվականի ապրիլի 28-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեկեցիկ մանկություն և ծերություն-2» ծրագրի մասին» N Մ-249-Ա (2007 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-902-Ա խմբագրությամբ), 2006 թվականի ապրիլի 28-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ձեյթուն-9» ծրագրի մասին» N Մ-250-Ա, 2006

թվականի ապրիլի 28-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Շիրակ» բժշկական ծառայություններ» ծրագրի մասին» N Մ-251-Ա, 2006 թվականի հոկտեմբերի 27-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Նոր Նորք - 9» ծրագրի մասին» N Մ-617-Ա, 2006 թվականի հոկտեմբերի 27-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Նոր Նորք - 3» ծրագրի մասին» N Մ-616-Ա և 2007 թվականի հուլիսի 10-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Զեյթուն - 7» ծրագրի մասին» N Մ-402-Ա որոշումների շրջանակներում հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ZCSU 2616588 Բեռնարկղի բեռի և բաշխման ցանկ

| N | Ապրանքի անվանումը | Տեղերի քանակը | Քանակը ըստ չափման միավորի | Ընդհ. քաշը /կգ/ | Մաքուր քաշը /կգ/ | Արժեք $ | Շահառուները |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տղամարդու կոշիկներ և ճտքավոր կոշիկներ ռետինե երեսամասով տեքստիլից ճտքերով | 254 | 254 զույգ | 287,5 | 247,5 | 7500 | 50 զույգ- Մարի Իզմիրլյան մանկատուն(Մ-249-Ա)<br>150 զույգ-Գյումրու «ԱՌԴԱ» ԱԱԿ (Մ-251-Ա)<br>54 զույգ-Կարիք. քաղաքացիներ (N Մ-249-Ա) |
| 2 | Ռետինե հողաթափեր | 630 | 4772 զույգ | 1365,37 | 1246 | 138200 | 150 զույգ-Քանաքեռ-Զեյթունի թ.154 ՆՈՒՀ(Մ-402-Ա)<br>170 զույգ-Քանաքեռ-Զեյթունի թ.156 ՆՈՒՀ(Մ-250-Ա)<br>160 զույգ - Գյումրու «ԱՌԴԱ» մ/գ(Մ-197-Ա)<br>50 զույգ-Նոր Նորքի թ.99 ՆՈՒՀ(Մ-616-Ա<br>70 զույգ-Նոր Նորքի թ.104 ՆՈՒՀ (Մ-617-Ա<br>50 զույգ-Նոր Նորքի թ.101 ՆՈՒՀ (Մ-249-Ա)<br>180 զույգ - Գյումրու թ. 6 մ/գ(Մ-177-Ա)<br>480 զույգ-Գյումրու «ԱՌԴԱ» ԱԱԿ (Մ-251-Ա)<br>100 զույգ-Մանկապատանեկան մշակութային հիմնադրամ (Մ-249-Ա)<br>120 զույգ-Մարի Իզմիրլյան մանկատուն (Մ-249-Ա)<br>100 զույգ-«Զատիկ» մանկատուն (Մ-249-Ա)<br>50 զույգ-«Ձերմիկ անկյուն» հիմնադրամ (Մ-249-Ա)<br>250 զույգ-Վանաձորի «ԱՌԴԱ» թաղամասի 48 ընտանիքներ (Մ-249-Ա)<br>100 զույգ- Նշավանի ավետարանական-մկրտական եկեղեցի(Մ-249-Ա)<br>652 զույգ-Կարիք. քաղաքացիներ (N Մ-249-Ա)<br>90 զույգ - Պեմզաշենի երաժ. դպրոց (Մ-249-Ա)<br>2000 զույգ- Հայ Ավետարանչական ընկերակց.-ուն (Մ-249-Ա) |
| 3 | Մանկական բամբակյա հագուստ | 18 | 18արկղ | 312 | 270 | 15000 | 1 արկղ-Մարի Իզմիրլյան մանկատուն(Մ-249-Ա)<br>1 արկղ-Մանկապատ-ան մշակութ-ն հիմնադրամ(Մ-249-Ա)<br>2 արկղ- Նշավանի ավետարանական-մկրտ. եկեղեցի (Մ-249-Ա)<br>5 արկղ-Վանաձորի «ԱՌԴԱ» թաղամասի 48 ընտանիքներ (Մ-249-Ա)<br>5 արկղ-Կարիք. քաղաքացիներ (N Մ-249-Ա)<br>4 արկղ- Հայ Ավետարանչական ընկերակց.-ուն (Մ-249-Ա) |
| 4 | Տղամարդու ջինսե տաբատներ | 13 | 323 հատ | 170 | 155 | 11000 | 100 հատ-Վանաձորի «ԱՌԴԱ» թաղամասի 48 ընտանիքներ (Մ-249-Ա)<br>223 հատ-Կարիք. քաղաքացիներ (N Մ-249-Ա) |
| 5 | Տղամարդու բամբակյա վերնաշապիկներ | 17 | 759 հատ | 200 | 185 | 12000 | 250 հատ-Վանաձորի «ԱՌԴԱ» թաղամասի 48 ընտանիքներ (Մ-249-Ա)<br>309 հատ-Կարիք. քաղաքացիներ (N Մ-249-Ա)<br>200 հատ-Հայ Ավետարանչական ընկերակց.-ուն (Մ-249-Ա) |
| 6 | Կանացի ճտք. կոշիկներ ռետինե երեսամասով, տեքստիլ ճտքերով | 974 | 974 զույգ | 970 | 880 | 54500 | 80 զույգ-Վանաձորի «ԱՌԴԱ» թաղամասի 48 ընտանիքներ (Մ-249-Ա)<br>90 զույգ -Երևանի Ս.Բյուրատի անվ թ. 125 դպրոց (Մ-249-Ա)<br>120 զույգ- Երևանի թ. 163 դպրոց (Մ-249-Ա)<br>332 զույգ-գ-Գյումրու «ԱՌԴԱ» ԱԱԿ (Մ-251-Ա)<br>50 զույգ-«Զատիկ» մանկատուն (Մ-249-Ա)<br>50 զույգ - Պեմզաշենի երաժ. դպրոց (Մ-249-Ա)<br>152 զույգ-Կարիք. քաղաքացիներ (N Մ-249-Ա)<br>100 զույգ-Հայ Ավետարանչական ընկերակց.-ուն (Մ-249-Ա) |
| | Ընդամենը | 1906 | | 3304,87 | 2983,5 | 238200 | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Տրանսպորտային ծախս | | | | | 5188 | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-904-Ա**
**քաղ. Երևան**

## «ՓՅՈՒՆԻԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 4)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 14-ի N 3/3.8-2/10216-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 14-ի N ԱԱ/3-6/3087-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Կաբրիել Ուհանեսի Ղեևբերջիի միջոցով որպես օժանդակություն «Մեսրոպ Մաշտոցի անվան «Մատենադարան» հին ձեռագրերի ինստիտուտ» ՊՈԱԿ-ի համար «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված պոլիմերային կրծքանշանների (մեկ տեղ, 2.5 կգ ընդհանուր քաշով, 27 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 22.77 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման և անհատույց հանձնման ծրագիրը:

2. «Փյունիկ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-903-Ա
քաղ. Երևան**

## «ՓՅՈՒՆԻԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 14-ի N 3/3.8-2/10217-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 14-ի N ԱԱ/3-6/3078-10 և Երևանի քաղաքապետարանի 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 02/34-25513 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Կաբրիել Ռիհանեսի Ղենբերջիի միջոցով որպես օժանդակություն Երևանի քաղաքապետարանի համար «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված արհեստական տոնածառի, տոնածառի խաղալիքների և զարդարելու պարագաների (45 տեղ, 1538 կգ ընդհանուր քաշով, 12500 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց հանձնման ծրագիրը:

2. «Փյունիկ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-902-Ա**
**քաղ. Երևան**

**«ՓՅՈՒՆԻԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 14-ի N 3/3.8-2/10218-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 14-ի N ԱԱ/3-6/3079-10 և Երևանի քաղաքապետարանի 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 02/34-25515հ եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Կաբրիել Ուհանեսի Ղենբերջիի միջոցով որպես օժանդակություն Երևանի քաղաքապետարանի համար «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված երկու արհեստական տոնածառի, տոնածառի խաղալիքների և զարդարելու պարագաների (177 տեղ, 6148 կգ ընդհանուր քաշով, 25000 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2000 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց հանձնման ծրագիրը:

2. «Փյունիկ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-901-Ա**
**քաղ. Երևան**

## «ՓՅՈՒՆԻԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N 3/3.8-2/10097-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 15-ի N ԱԱ/3-6/3096-10 և Երևանի քաղաքապետարանի 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 02/34-25511h եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Կաբրիել Ոհանեսի Ղեևբերջիի միջոցով որպես օժանդակություն Երևանի քաղաքապետարանի կողմից անցկացվող միջոցառումների համար «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված շապիկների, դրոշակների և թևկապների (400 տեղ, 5730 կգ ընդհանուր քաշով, 51120 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերն կազմել են 11274 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և քաղաքապետարանին անհատույց հանձնման ծրագիրը:

2. «Փյունիկ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-900-Ա**
**քաղ. Երևան**

## «ՓՅՈՒՆԻԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 10-ի N 3/3.8-2/10099-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 14-ի N ՀՔ/22/9402-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 14-ի N ԱԱ/3-6/3085-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Կաբրիել Ուհանեսի Ղենբերջիի միջոցով որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահական հաստատությունների համար «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված չորս «Մերսեդես» մակնիշի շտապ օգնության ավտոմեքենայի (2005 թվականի արտադրության, նույնականացման համարները՝ WDB9046121R755919, WDB9046121R759611, WDB9046121R798370, WDB9046121R821154, յուրաքանչյուրը 8800 եվրո արժողությամբ, «ԱՄՄՁՄ» ՄՏ) ներմուծման և անհատույց հանձնման ծրագիրը:

2. «Փյունիկ» բարեգործական հիմնադրամին՝ նշված ավտոմեքենաների համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 դեկտեմբերի 2010 թվականի N Մ-899-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-688-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«ԱՌՄ» բարեգործական հասարակական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N3/3.8-2/10367-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի 17-ի N ԱԱ/3-6/3137-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 9-ի «ԱՌՄ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն սոցիալապես անապահով բնակչությանը» N Մ-688-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «247103 ԱՄՆ-ի դոլարին համարժեք» բառերը փոխարինել «356438 ԱՄՆ-ի դոլարին համարժեք» բառերով.

2) ծրագրի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընդհանուր բյուջեն կազմում է 356438 ԱՄՆ-ի դոլար, որից՝ ներկրվող ապրանքների արժեքը կազմում է 184053 ԱՄՆ-ի դոլար, որոնց փոխադրման ծախսերը կկազմեն 14505 ԱՄՆ-ի դոլար և դրամային ներդրումը կազմում է 157880 ԱՄՆ-ի դոլար.

1-ին փուլ՝ 2009 թվականի հոկտեմբեր – 2010 թվականի մարտ

ներկրվող ապրանքներ – 58350 ԱՄՆ-ի դոլար

դրամային ներդրում – 10360 ԱՄՆ-ի դոլար.



2-րդ փուլ՝ 2010 թվականի ապրիլ – 2012 թվականի սեպտեմբեր

ներկրվող ապրանքներ – 125703 ԱՄՆ-ի դոլար

դրամային ներդրում – 147520 ԱՄՆ-ի դոլար.

3) ծրագրի 9-րդ կետը լրացնել հետևյալ բառերով՝

«Երևան քաղաքի Նորք-Մարաշ, Հովսեփյան 95ա հասցեում կառուցվող մանկատան չափահաս դարձած աղջիկների կացարանի բակում կառուցել մանկական խաղահրապարակ ԱՄՆ-ից ժամանած կամավորների օգնությամբ.

4) ծրագրի 10-րդ կետը լրացնել հետևյալ բառերով.

2-րդ փուլում ներկրված մանկական խաղահրապարակը տեղադրվելու է Երևան քաղաքի Նորք-Մարաշ, Հովսեփյան 95ա հասցեում կառուցվող մանկատան չափահաս դարձած աղջիկների կացարանի բակում, որը նաև նախատեսվում է համայնքի երեխաների համար: Չորս անվադողը նախատեսվում է ծրագրի շրջանակներում օգտագործել կազմակերպությանը պատկանող ՖՈՐԴ մակնիշի միկրոավտոբուսի համար:

2. Սահմանել, որ «ԱՌՄ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված մանկական խաղահրապարակը և 4 անվադողը (186 տեղ, 5189 կգ ընդհանուր քաշով, 87350 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7480 ԱՄՆ-ի դոլար, «Գուգարքի» ՏՄ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ